Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.08.2013

12409

16027

028 | Մեսրոպյան
Տ-46 | թաղ կարդալ

1986թ.

ոչ	8950	18/IV 90թ	

028
Տ-46

16027

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԸ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ

350

ՑԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ՈՒ ՄԵՐԺԵԼԻ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ

Կազմեց
ռուսա-Հայկական դպրոցների վերաբացման առիթով

Ց. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ

(*Մուրճից*) *արտատպություն*

ԹԻՖԼԻՍ

1906 թ.

16027
028 | Տեր-Միրաքեան
Տ-46 | Գրականութիւն
կարդան 1906
Ա-3225 | 4/98 Օր

ԴԵՌԱՀԱՄՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ *

(Յ. Տէր-Միրաքեանի)

138. Գէորգ Կրաբբ։ Օստրոգոբսկու ժողովածուից, թարգմ. Տ. Կոստանեանցի. Թֆլս, 1894. գինը 5 կոպ.

Աղօտ գոյներով թռուցիկ կենսագրութիւն է, որ և է ճնաչյուն տպաւորութիւն դժուար է սպասել։ Զգիտես էլ թէ իսկապէս որ հասակի մանկան սրտի հետ կարող էր այս գիրքը խօսել։

139. Գէորգ Ռոլլէստոն, հեղ (?). Թարգմ. Աղանեանցի. (սպառուած)։

Ամեն մի քայլափոխում պատահող արկածների ժողովածու է, գեղարուեստական քիչ արժէք ունի։

140. Գթութիւն Ժիլ Լամետրի. Թարգմ. օր. Ն. Աղանեանցի։ Հրատ, «Լումայի» խմբագր., Թֆլիս. 1904. 17 փոքրդ. եր. գինը 5 կոպ.

Մի պարսկական իշխան ողորմութիւն էր տալիս աղքատներին և նրանց օգնում տնաճութեամբ ու զղջանքով։ Որմիզդը նրան երկրորդ անգամ կեանք է պարգևում աղքատի վիճակում։ Երբ որ մի բարի աղջիկ նրան տանում սիրով խնամում է, այն ժամանակ նախկին իշխանը զգում է Որմիզդի ասածը, որ բաւական չէ ողորմութիւն տալ, երբ սիրով չես կատարում այդ։ Տպաւորութեան գործում է։

141. Դաւիթ Կոպպէրֆիլդը Չ. Դիկկէնսի։ Թ. Հ. Հ. Ը. թարգմ. Պ. Պ. 1897. գինը 1 ռ.

Թէև առաջնակարգ գրուածքի համառօտ փոխադրութիւններից մէկն է, այնուամենայնիւ գեղեցիկ տպաւորութիւն է գործում։ Այնքան հարուստ է բնագիրը, որ իր համառօտութիւնից էլ առատ բաժին հանել կարող է։

142. Երևելի մանկութիւնը. մատենագարան դպրոցական և ընտանեկան։ Պոլիս, 1887. պատկերազարդ, 192 եր. գին.

---

*) Տես «Մուրճ» № 2.

Նշանաւոր 11 մարդկանց մանկական հասակի թռուցիկ կենսագրութիւններ են։ Նրանց կեանքի հասուն շրջանը մի քանի խօսքով յիշատակուած է ամեն մէկի կենսագրութեան վերջը։ Գրուածքի տոնն էլ ընդունելի չէ. շատ աւելորդ դատողութիւններով խճողուած է։ Այս գրքից շատ բան չի մնայ ընթերցողների յիշողութեան մէջ։

143. *Զոհակ Բիւրատպի Աժդահակ։* Ամբողջ վէպ Շահնամէից, Ֆրդուսի։ Թարգմ Սամուէլ Գիւլզադեանցի, Շուշի, 1894. մեծադ. 70 եր. գին?

Աժդահակը կործանում է Ջէշիդի թագաւորութիւնը, նրան հաշմանդամ շինելով, հալածում կորուստի է մատնում։ Ապա կռուի մէջ բռնւում է Ֆրիդունից, կապւում ու բանտարկւում է Դիմաւէնտի կիրճում։

Դեւի (օձ) կամ խաւարի անվերջ կռուի նկարագրութիւններից մէկն է։ Ծանր լեզուով թարգմանուած, շատ տեղեր մնացել են մութը, առանց բացատրութեանց։

144. *Իջմիածին։* Արտատպ. «Դպրոցից»։ Ժողովրդական գրադարան։ 1886. 22 միջակ եր., գինը 5 կ.

Զոր ու ցամաք պատմական տեղեկութիւններ են. սիրտ չեն տաքացնիլ։

145. *Թզուկ Ա. Դոդէի։* Թարգմ. Հ. Տէր Միքայէլեանցի. 1881. Թֆլիս.

Թզուկը մի անբաղդ ու մանկ ընտանիքի զաւակ է, որ հմայիչ կերպով նկարագրում է իրանց թշուառ կեանքը։

146. *Թովմաս Բոցարիս.* ճշգրիտ անցք. Թարգմ. (?) Մոսկուա. 1891. 31 փքրդ. եր. գին.

500 տարի առաջ Թ. Բացորիսը բորբոքուած իր և ուրիշների կրած սարսափելի դաղանութիւններից տաճիկների կողմից՝ ժողովուրդը ոտքի է հանում, ազատում է հայրենի կղզին։ Յետոյ մի քանի վատ մրցակիցներ երևան են գալիս, չար նախանձից դրդուած՝ Թովմասին բրոջ հետ թունաւորում են և կղզին դարձեալ ընկնում է տաճիկների ձեռքը։ Տպաւորիչ է։

147. *Իշխանն ու աղքատը,* պատմ. վէպ Մ. Տուէնի։ Թարգմ. Գ. Շահրուդադեանի. 1893. 300 եր. գինը 1 ռ.

Մի հումարիստական գրուածք է, որ վեր է հանում անգլիական կեանքի ու կառավարութեան սոսկալի ու ծաղրալի կողմերը։ Այն ինչ որ նրանց համար հին բան է, տարաբաղդաբար մեր կեանքում դեռ գոյութիւն ունի, մեր իրականութիւնից կարծես վեր առած կենդանի պատկերներ են։

Արժէ կարդալ։

148. *Խիղճը կորաւ* Շչէդրինի։ Թարգմ. Մ. Ղազարեանցի։

Թ. Հ. Հ. Ը. 1892. Այլ 2 վէպիկների («Իդէալիստ ծածան» և «Իմաստուն ծանծաղուկը») հետ 62 եր. գին. 15 կոպ.

Թղթի վրայ գրուած խիղճը ընկնում է դանազան սխալերով վարակուած սրտի տէր մարդկանց ձեռքը և նրանց վրայ տեսակ տեսակ ազդեցութիւն է գործում։ Վերջը այդ խիղճը մի անմեղ սրտի մէջ է ընկնում, որտեղից ապագայի համար մեծ յոյս է տալիս։

Արժէ կարդալ, շատ արժէ։

149. *Կովկասի գերին* Լ. Տոլստոյի։ Թարգմ. Պ. Պ. Թ. Հ. Հ. Ը. 1894 66 միջ. եր. գինը 20 կոպ.

Երկու ռուս սպայ լեռնցի Թուրքերի ձեռքը գերի են ընկնում, որոնք նրանց ոտքերը ցերեկը կոճղ են դնում, գիշերները հանում։ Նրանցից մէկը խաղալիքներ շինելով գրաւում է Թուրքի մատաղահաս աղջկանը։ Մի անգամ պատը ծակում ազատւում են, բայց դարձեալ բռնւում։ Վերջը մէկը փախչում է Թուրքի աղջկայ օգնութեամբ, իսկ միւսը փրկանքով է ազատւում։

Տպաւորիչ է։

150. *Հայ դիւցազնուհի մը։* Հրատ. Մ. Փորթուգալեացի. 1885. 30 փքրդ. եր.

Մի անգլիացի ճամբորդ շոգենաւի մէջ մի հայ ուսեալ երիտասարդի հետ վիճաբանութեան բռնուելով՝ իբրև ապացոյց հայութեան ապագայ յուսալի կեանքի պատմում է մի հայ գեղջկուհու խանին կնութեան չգնալու անյողդողդ որոշումը։ Այս աղջիկը ամեն տանջանք յանձն է առնում ու վերջը բանտի բարձր պատուհանից վայր ընկնելով կիսամեռ է լինում։

Թէև գեղարուեստական գրուածք չէ, բայց իբրև հայկական կեանքից վեր առած իրողութիւն՝ արժէ կարդալ։

151. *Հայոց մեծ վարդապետ տուրք Մեսրոպը.* կազմեց Մելեան։ Պատկերով։ Թֆլս. 1883. գինը 25 կոպ.

Կարելի է յանձնարարել, միայն թէ ի նկատի պէտք է ունենալ, որ գրաբար աղբիւրներից քաղուած շատ բառերն ու դարձուածքները ծանրացնում են ընթերցումը։

152. *Հայրենազուրկ* Ի. Սպիրիի։ Թարգմ. Գերմ. Ի. Յարութիւնեանցի. Թֆլս. 1896. 196 փքրդ. եր. գինը 50 կոպ.

Բիկոն Իտալիայում զրկւում է մօրից, Շուիցերիայում հօրից։ Ապա դաժան ազգականուհու ձեռքից փախչելով հայրենիք, այնտեղ ջուրթակ ածելով իր գլուխը պահում է։ Ապա իրան սիրելի Մանիկ աղջկանն էլ բերում տեղաւորում է մի հարուստ ընտանիքի մէջ իբրև հիւանդապահ Սիլվին երեխային։ Երեքն էլ ջերմ սիրով կապւում են։ Վերջապէս տանտիկինը

իմանալով Բիկոյի ով լինելը յայտնում է, որ այդ կալուածքի կէսը նրան է պատկանում։ Մանիկն ու Բիկոն էլ իրար հետ ամուսնանում են։

Տպաւորութիւնը գեղեցիկ է։

153. *Հայրենասէր տիկին*, տիկ. Լ. Դանիէլի. Թփլս. 1897. 24 փոքրդ. եր. գին...

Ալզասցի մի պատուական ընտանիքի պատմութիւն է։ Ֆրանսա-պրուսական պատերազմին զոհւում է այրի կնոջ երկու սպայ որդիները, երրորդն էլ զոհւում է կամաւոր գնալով մօր ցանկութեամբ։ Նրանց քոյրն էլ հարկադրուած է լինում մօր ցանկութեամբ մերժել գերմանացի նշանածի ձեռքը, ապա մեռնում է։ Մայրը երբեմն շէն դաստակերտը աւերակ թողած գաղթում է Ֆրանսիա պրուսահպատակ չը լինելու համար։

Տպաւորիչ է։

154. *Հարսնացու*(սերբիական կեանքից), թարգմ. Յովհ. Արաբաջեանցի, Ալքսնդրպլ, 1893, № 1, հրատ. «Այգ»-ի։ 83 միջակ եր. գինը 15 կոպ.

Նկարագրւում է Սերբիայի ծանր լուծը, տանջանքները և ազատագրական ձգտումները։ Իւ. «հարամբաշին», անձնուէր Լիպայի քաջ նշանածը, իր սէրը զոհում է թշուառ հայրենիքի ազատութեանը։ Թէև հայրենիքը վերջն ազատւում է, սակայն ինքն էլ զոհ է գնում և չի կարողանում միանալ Լիպայի հետ, որ իրան մեծ վտանգի ենթարկելով նշանածին մի անգամ ազատած էր եղել։

Արժէ կարդալ։

155. *Հաւատարմութիւնը ասեն բանի յաղթում է*։ Ֆր. Գոֆմանի. թարգմ. Յարութիւն Առաքելեանի. Թփլս. 1877. 141 միջակ եր. գինը.

Հուգենոտների ժամանակից մի էպիզոդ է։ Բողոքական Մոնֆէր գուքսին և սրա որդուն մեծ անձնուիրութեամբ ազատում է կորուստից նրանց ծերունի, հաւատարիմ ծառայ Բրեքեռը։

Շատ շինծու բան է։

156. *Մոլլա-Նասր-Էդդին*։ Ժողովրդական առակներ։ Հաւաք. Ե. Լալայեանց։ Թփլս. 1903. 246 միջ. եր.

Ընտրովի հաւաքածու է, որի միայն կէսը, պ. Լ. վերագրում է Մոլլային, իսկ մնացածը հայկական առակներ է համարում։

Զուարճալի են՝ իբրև ժամանց։

157. *Յովհաննա տ՝ Արգ կամ Օրլէանի օրիորդի պատմութիւնը*։ Հ. Զկ. Վ. Տէրտերեանցի. Բ. տպ. Վիեննա 1893. 97 միջ։ եր. գինը 50 կոպ.

Այս գիւղացուհու անձնաւորութեան ու տանջանքների պատմութիւնը հետաքրքրութեամբ կը կարդացուի։ Տես ներքևը «Օրլէանի կոյսը»։

158. *Յունաստանի ուսուցիչ Սոկրատէսը*, հեղ (?), թարգմ. Տ. Կոստանեանցի. Թփլս. 1898. 80 միջ. եր. գինը 20 կոպէկ.

Այս իմաստունի բարոյական-կենսական սկզբունքները պարզ կերպով բացատրուած են։

Արժէ կարդալ։

159՝. *Նելլոն ու Պատրաշը Ուիդալ*, թարգմ. ռուս. Թփլս. 1897. փոքրդ. 64 եր. գինը 10 կոպ.

Մի կաթնավաճառ (նաև նկարիչ) մանկան ու նրա շան սրտառուչ պատմութիւնն է։ Խեղճ ու հալածուած Նելլոն միայն այն ժամանակ է գնահատւում, իբրև ազնիւ պատանի ու տաղանդաւոր նկարիչ, երբ որ իր շան հետ Ռուբէնսի պատկերի առջև եկեղեցում ձմրանը անշնչացած է լինում։

Շատ սրտառուչ է։

160. *Ներսէս Մեծ*։ Ժողովրդական գրադարան։ Թփլս. 1885. 13 միջ. եր. գին. 5 կոպ.

Այս կենսագրութիւնը քաղուած է գլխաւորապէս Հ. Ղ. Յովհաննիսեանի «Մեծն Ներսէս» աշխատութիւնից։

Գէշ չէ։

161. *Ոսկի բզեզ*, Էդգար Պո՝ի։ Ժողովրդական վէպ. թարգմ. Գր. Շահրուդաղեանց. Թփլս. 1887. 57 միջ. եր. գինը 20 կոպ.

Գրաւիչ կերպով պատմւում է, թէ ինչպէս լը Գրանը սրամտութեամբ գտել է աւազակների թաղցրած գանձերը մի ծառի տակ։

Մեծ արժէք չունի։

162. *Որը Անան Կլ. Լուկաշևիչի*։ Թարգմ. ռուս. Թփլս. 1904. փքրդ. 56 եր. գին 12 կոպ.

Գիւղից քաղաք եկած 16 տարեկան որը աղջկայ կեանքից է։

Սկզբները անխիղճ տանտիկիններից տանջւում, հիւանդանում է, անտէր մնում։ Ապա մի բարի տանտիկնոջ ձեռք է ընկնում, նրանից ու նրա երկու թոռնիկներից սիրւում։

Դժուար թէ շատ հետաքրքրութիւն շարժէ գեռահասների մէջ։

163. *Որբերի արտասուքը։ Հեղ (?), թարգմ. Յովհ. Արաբաջեանցի։ Ալքսնդրպլ. 1892. 16 փքրդ. եր. գին 2 կոպ.*

Անխիղճ «մուժիկ» Դէնիսը հրդեհում է դրացու խրճիթը։ Տէրն ու խրճիթը այրուում են, կնոջն ու որբուկներին անտուն անտէր թողնելով։ Դ. տիրանում է այդ դեռնին, գեղեցիկ խրճիթ շինում, բայց շուտով ինքն էլ իրար ետեից զրկուելով իր սիրելիներից՝ անբաղդանում է, զղջում է, մեղքը գիւղացիներին խոստովանուում ու աքսոր է գնում՝ նախապէս իր բոլոր ունեցածները այն անտէր որբերին թողնելով։

Արժէ կարդալ։

164. *Զալաբիներ Լ. Մանուէլեանցի. պատկերներ վերջին ռուս-թրքական պատերազմի ժամանակից։*

Գիւղական կեանքից վեր առած այս պատկերները հիմա աւելի ժամանակակից են։ Այն ժամանակուայ թիւրիմացութեամբ առաջացած սարսափելի իրարանցումը այսօր իրօք տեսանք։

165. *Պայվայ մանուկը կամ կապկացած երեխայ Ս. Վ. Նազարեանցի։ Թֆլս. 1896. 32 միջ. եր գին 15 կոպ.*

Հինգ տարեկան մանուկը ընկնելով կապիկների մէջ՝ վայրենանում է, կապկանման դառնում անճանաչելի լինելու չափ։ Վերջը երբ բռնուում է ու քաղաք տարուում խաղցնելու համար, մի թագուհի գնելով նրան պալատում պահում է։ Այստեղ մարդկային ընկերութեան մէջ հետզհետէ մարդկային յատկութիւնները նրանում զարգանալով վերջապէս նա ճանաչելի է դառնում։ Վերջը իր արժանաւորութիւնների շնորհիւ Պայվան արժանանում է մինչև անգամ թագուհու աղջկայ ձեռքին ու գահին։

Շատ կը հետաքրքրէ մանուկներին։

166. *Պատմութիւն Ռոպէնսոնի Քրուզօէ։ Հայր Մ. Վ. Բժիշկեանի, Վնտկ. 1876. 5 տպագ. 360 փքրդ. եր. գին. 1 ռ.*

Պատկերազարդ չէ, և թէև 5 տպագրութիւն է տեսել, ընտիր Ռոբիզոնադ լինելուց շատ հեռու է։ Փոխանակ Ռոբինզոնի կուլտուրական ճիգերը, հնարագիտութեանց ճանապարհները հրանգիչ կերպով նկարագրելու, հաւարեա գրքի ամեն մի էջում նորից ու նորից վերադառնում է կրօնական զեղուն զգացմունքների արտայայտման, որ հակառակ հետևանքի կարող է հասցնել։ Քարոզում է այն միտքը, որ փորձանքները գալիս են մեր գլխին մեր մեղքերի համար և այն աստուածային դիտաւորութեամբ, որ հեռանքը որ և է բարիք լինի։

167. *Ռոբինզոն Կրուզօի ճանապարհորդութիւնը եւ զանազան արկածները։ Դանիէլ Դէֆօէ'ի, թարգմ. Ս. Թառայեանցի։ Պատկերազարդ, Թֆլս. 1904. մեծնգր. 286 եր. գինը 1 ռ. 25 կոպ.*

Մի այսպիսի ընդարձակ և պատկերազարդ Ռոբինզոնի չափազանց մեծ պահանջ կար մեր մանկական գրականութեան մէջ։ Այս պահանջը զգալի չափով լցուցանում է այս գիրքը։ Այս փոխադրութեան մէջ էլ Ռ-ի ձեռքը շատ գործիքներ և այլ կենսական պիտոյքներ են ընկնում ընկզմուած նաւից։ Ցանկալի էր որ այդ միջոցները մինիմումի հասցրած լինէին։ Ցանկալի է, որովհետև աւելի հետաքրքրական է այն Ռոբինզոնը, որ աւելի քիչ կուլտուրական պաշար է բերած լինում հետը։ Այսպիսի վիճակի մէջ գրուած Ռ-ի ինքնապաշտպանութեան ճիգերը աւելի շահեկան կը լինէին, աւելի հարցասիրութիւն կ'առաջացնէին դեռահաս ընթերցողների մէջ։ Այս գրքում աննշան տեղ է տրուած ընկերական նոր կազմակերպող կեանքին անմարդաբնակ կղզու վրայ։ Շատ հրանգիչ կը լինէր Ուրբաթին ու նրանից յետոյ Ռոբինզոնի շնորհիւ ազատուած վայրենի ու քաղաքակիրթ անձերից հետզհետէ կազմակերպուող ընկերական կեանք տեսնել այդ կղզում։ Բացի այս՝ չգիտեմ արդէն կան այնպիսի Ռոբինզոնադներ, ուր կինն էլ մասնակցութիւն ունեցած լինէր նորմէկանց կազմկերպուող այս ընկերական կեանքում։ Մի այսպիսի թէև մինեատուր, բայց տիպիկ պատկերի շնորհիւ որպէս մատաղահաս ընթերցողին աւելի կը պարզուէր կուլտուրական կեանքի զարգացման վերին աստիճանի հետաքրքրաշարժ շաւիղը։

Յաժենայն դէպս՝ պ. Թ. այս թարգմանած. Ռոբինզոնը արժանի է ամեն մի հայ մանկան՝ ընթերցանութեան սիրելի նիւթ դառնալու։

168. *Ռոբինզոնի պատմութիւնը։ Թարգմ. Գ. ք. Աղանեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1881. գինը 60 կոպ.*

Այս Ռոբինզոնադում Ռոբինզոնի ձեռքը սկզբները ոչ մի գործիք չէ տրուում, բայց հետը նա իհարկէ բերած ունէր եւրոպական կեանքից ու արհեստներից յիշողութիւններ։ Յետոյ Ուրբաթն էլ շատ բաներ է սովորեցնում նրան, իսկ վերջը Ռ. շատ գործիքներ է գտնում անգլիական նաւում։ Նախընթաց Ռոբինզոնադի ասիթով արածս դիտողութիւնն ի նկատի ունենալով՝ այս դասաւորութիւնը աւելի նպատակայարմար կը լինէր։

Արժէ այս փոխադրութիւնն էլ կարդալ տալ։

169. *Սիատուշ, ժողով վէպ Շահնազէրից Ֆրդուսի'ի։ Թարգմ. բնագիր պարս. Սամուէլ Գիւլզադեանցի։ Շուշի 1894. 143 մեծդ. եր. գինը...*

Շահնամէի հերոսներից Սիաւուշի ճակատագիրը ամենածանրն է։ Իր հօրից, Իրանի թագաւորից, անարդարութեամբ հալածած ապաւինում է նա Թուրանի թագաւորին, որ պատուով ընդունելով իր անհաշտ թշնամու որդուն, իր աղջկանը այս տարագիր թագաժառանգին կնութեան է տալիս, իսկ վերջը չարամիտ մարդկանց անսալով հաւատարիմ և անձնուէր երիտասարդին յօշոտել է տալիս։

Ափսոս որ ահագին քանակութեամբ արևելեան իմաստալից խօսքեր, դարձուածքներ անհասկանալի կը մնան։ Սիաւուշը թէև Շահնամէի այլ դիւցազներգութեանց հետ այս հատուածի մէջ առայ, բայց նաև բովանդակութեան տեսակէտով աւելի յանձնարարելի է 16 տարեկաններին ու աւելի հասունացածներին։

170. *Վիլհէլմ Տէլլ Շիլլերի*, դրամա 5 արարուածով։ Թարգմ. Գ. Բարխուդարեանցի։ 1873. 205 միջ. եր.

Այս պատմական դրամայից ստացուած տպաւորութիւնները անջինջ կը մնան դեռահաս սերունդի սրտում։ Կարդալ տալ 256-257 համարներից յետոյ։

171. *Սիրտ է. Դէ. Ամիչիսի*։ Թարգմ։ Փ. Վարդանեանցի։ Թֆլս. 1889. գինը 1 ռ.

Շատ հիանալի և ազդեցիկ պատկերներ են աշակերտական կեանքից վեր առած։

172. *Ցրինի Օստրոգորսկու*։ Սրգ. 1888. 61 փքրդ. եր. գինը...

Սուլթան Սուլէյման Բ. գերմանացոց հետ 1555 թուին ունեցած պատերազմի էպիզոդներից մէկն է։ Սիգիդի բերդապահ Ցրինիի, նրա կնոջ, դստեր, փեսի և բոլոր քաղաքացիների անձնուէր ու քաջարի կեանքն է նկարագրում։ Այս հերոսները մի ամբողջ ամիս դիմադրելով սուլթանի 2 հազարնոց զօրքին՝ նրան յուսահատեցնում են և ցասոյթից անշնչանում։ Գեղեցիկ է նա՝ Բիլակին սպայի համարձակ պատասխանը սուլթանին։

173. *Փաշան հովիւ էարուլէի*։ Արևելեան զրոյց։ Թարգմ. Գէ. Գրիգորեանցի. Թֆլս. 1896. 40 միջ. եր. գինը 10 կոպ.

Մի փաշա անգլիացիների հետ ընհարում ունենալով հարկադրւում է զրկուել արդիւնաւոր պաշտօնից և աքսորւում է։ Նա իր գեղանի դուստրը առնելով աքսոր է գնում։ Այս աքսորուած փաշայի որդին սիրահարւում այդ աղջկան, որ արածացնում էր իր հովիւ դարձած հօրաչխարները։ Բայց փաշայի որդուն մերժում է հովիւ փաշան առարկելով որ արհեստ չգիտեցող մարդուն աղջիկ չի տայ։ Երիտասարդը այսպիսով արհեստ սովորելուց յետոյ միայն արժանանում է իր սիրածի ձեռքին։ Հովիւ-փաշային սուլթանը ներում է, բայց նա մերժում է նախկին դիրքը բռնել, պատասխանելով որ իր կեանքը վտանգի ենթարկել այլ ևս չէր ցանկալ։ Սուլթանը գովելով նրան՝ միջոց է տալիս պարտիզպանութեամբ պարապելու։

Կենդանի պատկեր է։

174. *Փոքրիկ լրտես Ա. Դուրէի*։ Պտր. 1890. գինը 2կ.

Փոքրիկ լրտեսի հայրենասիրական անձնուիրութիւնը շատ սրտառուչ է։ Միւս երկու անձերն էլ ազգու կերպով նկարուած են։

175. *Քինայի գիւտը, զրոյց*։ Թարգմ. Օր. Մար. Ակիմեանի։ Մոսկւա. 1889. 48 եր. գին...

Ամերիկայում հնդիկները քինան գաղտնի էին պահում, որպէս զի իրանց խիստ ատելի եապոնացիք չկարողանալով տենդից բժշկուիլ, կոտորուեն։ Այս գաղտնիքը բանալը ժահուան պատժով արգելուած էր։ Զիւժան հնդիկ սպասուհին ծանր հիւանդ փոխարքաուհուն սիրելով նրան գաղտնիքը հաղորդեց մահից ազատելու համար, բայց եապոնացիները նրան ժահուան դատապարտեցին, կարծելով թէ տուածը թոյն է եղել։ Վերջը ամեն բան պարզւում է։

Մի սրտաշարժ զրոյց է։

176. *Օմուլ Կարմէն Սիլվայի*։ Թարգմ. Գր. Շահբուդաղեանցի։ Թֆլս. 1891. 32 միջ. եր. գինը 8 կոպ.

Թագաւորի որդին անհետանում է և հանդիպում մի ճգնաորի, որի խրատները լսելով նրա կեանքը յեղաշրջւում է և շատ բարեգործութիւններ է անում։ Նա մինչև անգամ բժշկում է իր հիւանդ խորթ եղբօրը, որ նրա փոխարէն թագաւորական գահը պէտք է գրաւէր։ Շատ տառապելուց վերջը յաջողւում է փախստական թագաժառանգին իր սիրած սրբ աղջկան առնել և գահին արժանանալ։

Տպաւորութիւնները շատ էլ խոր չեն։

177. *Օրլէանի Կոյսը, Ըստ Շիլլերի Վիկ. Օստրոգորսկու*։ Թարգմ. Յ. Խ. Թֆլս. 1898. 98. միջ. եր. գինը...

Այս փոխադրութիւնը № 157 ում նշանակուածից բաւականին տարբերւում է բովանդակութեամբ։ Այնտեղ պատմւում է, որ Ժաննան անգլիացիների ձեռքով խարոյկի վրայ այրւում է, իսկ այս գրքում որ նա վիրաւոր ընկնում է պատերազմի դաշտում և մեռնում թագաւորի ձեռքերի վրայ։ Առանձնապէս շեշտուած է Ժ-ի վհատութեան պատճառը՝ թշնամու զօրավար Լիոնէլին սիրահարուիլը և այս պատճառով նրա կեանքին խնայելը։ Ապա նկարագրւում Ժ-ի լքուած թշուառ դրութիւնը, ան-

տառում անպաշտպան թափառելիս անգլիացիների ձեռքը գերի ընկնելը, բերդում շղթաները փշրելու և վերջին ճակատամարտին մասնակցելը։

Արժէ կարդալ։

14—16 տարեկանների համար։

178. Աբրահամ լինկոլն Մունթի։ Թարգմ. Օր. Մաթիլդա Տէր Միքայէլեանցի։ Թֆլս. 1885

Բովանդակութիւնը թէև դէշ չէ, սակայն թարգմանութիւնը մեծ թերութիւններ ունի։

179. Ազատութեան սասին։ Ջոն Ստիւարդ Միլլի։ Ռուս. թարգմ. Ա. Կ. Մ. Գ. Ը. 1898. 275 եր. գինը...

Քիչ թէ շատ զարգացածներին մատչելի պարզ ոճով գրուածք է մտքի, խղճի, գործունէութեան... ազատութեան վերաբերեալ։

Արժէ և աւելի լաւ է 16 տարեկան հասակին մօտեցածներին տալ։

180. Աստծո՞ւն թէ մամոնային Լ. Տոլստոյի։ Թարգմ. Մաժբրէ վարդապետի։ Վղշպտ. 1913, փքրդ. 22 եր.

Հանրամատչելի և համոզիչ կերպով խօսում է արբեցողութեան դէմ։

Արժէ կարդալ մանաւանդ այն պատանիներին, որոնք այդ խոտի ժառանգական կամ ստացական միտում ունեն։

181. Անմէղ արքայազն Ալ-Ջամըլ կամ սիրոյ ուխտաւոր, արևելեան զրոյց։ Վաշինգտոն Իրվինգի։ Թարգմ. Յուկոբ Խօջամիրի։ Բագու 1894. 61 միջ. եր. գինը 20 կոպ.

Արքայազնը (արաբ), արքայադուստրը (քրիստոնեայ)՝ երկուսն էլ իրանց ծնողների ձեռքով շրջապատող աշխարհից մեկուսացրած են, որպէսզի սիրոյ վտանգին չենթարկուեն։ Բայց երբ որ նրանք հանդում են արրունքին, այդ զգացմունքը սկսում են կարդալ ամենուրեք բնութեան մէջ։ Խօսուն թռչունները և կախարդութիւնը վերջը միացնում է նրանց՝ հակառակ իրանց ծնողների ձեռք առած բոլոր պահպանողական խիստ միջոցներին։

Զբնաղ կեանքի նկարագիր է։

182. Աստուած շճանաչող Ս. Քամալեանցի։ Թֆլս. 1895. փքրդ. 32 եր. գինը 10 կոպ.

Մի խաղեղցի (Մուշ նահանգից) արիասիրտ հայ գեղջուկի քաջագործութեան պատմութիւնն՝ է քրդերի և Թուրքերի դաղանութեանց դէմ մաքառման գեղեցիկ օրինակ։

Արժէ կարդալ։

183. Արութին եւ Մանուէլ, վէպ Ղ. Ագաեանցի։ Կրկր. տպ. լրացրած։ Թֆլս 1888. գինը 1 ր. 60 և էժանագին 40 կոպ.

Պատանեկական կեանքից վեր առած այս գրաւիչ պատկերները արժէ կարդալ։

184. Աղքատ մարդիկ Վեսելիտսկայի։

Բազմազաւակ ձկնորսի աղքատ կեանքն է նկարագրում։ Այս խեղճը սիրուն գթասրտութեամբ ներս է առնում դրացու երկու որբուկներին, որոնց մայրը մեռել էր միայնութեան մէջ՝ նախապէս իր զաւակներին քաւն դնելով։

Տպաւորութիւնը խորն է։

185. Ամենալաւ բանը աշխարհում Դրումմոնդի։ Հայերէն փոխդր. Կ. սարկ. Տէր-Մկրտչեանց։ Թֆլս. 1893. գինը 20 կ.

Քարոզի ձևով բացատրւում է, որ սէրն է աշխարհումս ամենալաւ բանը։

Ազդու է։

286. Այց Թիւրքեաց Հայաստանին Լ. Սարգսեանցի։ Թֆլս 1890., գինը 60 կոպ.

Հետաքրքրութեամբ կը կարդացուի այս ճամբորդական նկարագրութիւնը։

187. Աշակերտի յիշատակարանը Ի. Յարութիւնեանցի, Թֆլս. 1887. 57 միջ. եր., գինը 30 կոպ.

Ներսիսեան դպրոցի ճամբորդ աշակերտների խմբից մէկի բերանով հաղորդում է Սանահնից, Վարդաբլուրից, Լօռիից, Ջալալօղլիից, Արդուից և Օձունից ստացած տպաւորութիւններ։

188. Խան-Միրան, աւանդական մի պատկեր Թահմազ-Շահի Վասպուրականի արշաւանքից։ Սէյլան, Թֆլս. 1892. 84 փքրդ. եր. գինը 20 կոպ.

16-դ դարի պատմական միջադէպ է Գարեգին անուն թագաւորազունը սիրահարւում է Նազենիկ գեղջկուհուն, որին թուրք իշխանը ուզում է բռնի հարէմ տանել։ Բայց պարսից արշաւանքն ամեն բան տակն ու վրայ է անում, Նազենիկն էլ յուսահատութիւնից ծովն է նետւում։ Գարեգինը նրա միայն դիակն է գտնում։ Պարսիկները օգնում են նրան և առաջարկում որ իրանց հաւատն ընդունէ։ Սաստիկ վշտացած ու զայրացած երիտասարդը համաձայնւում է, Պարսկաստանում մինչև վեզիրութեան աստիճանին է հասնում, վերջը թունաւորում է շատ բարձրաստիճան մարդկանց ու գաղանաբարոյ Թահմազխանին։

Հետաքրքրութիւն կարող է շարժել, բայց իրրև գրուածք քիչ արժէք ունի։

189. Բանաստեղծ իդէալիստ Շիլլէր, դր. Ս. Թառայեանցի, Սպգ. 1903. պատկերազարդ, մեծդր. 440 եր. փառակազմ 3 ր.

Շատ արժէ կարդալ այս մեծ բանաստեղծի կենսագրութիւնը, որի ազդեցութիւնը դեռահաս սերնդի վրայ զօրաւոր կը լինի։

Պէտք է տալ աւելի զարգացածներին կամ 16 տարեկան հասակին արդէն մօտեցածներին։

190. Բոյսերի մեծարանքը Ալ. Քիշմիշեանցի։ Թֆլս. 1891 36մեջ. եր. գինը 15 կոպ.

Հետաքրքրական տեղեկութիւններ են հին ու նոր ազգերի կեանքից բոյսերի մեծարանքի, սրանց շատերի անունների խորհրդաւոր ծագման մասին։ Ափսոս որ համապատասխան լատիներէն անունները գրուած չեն։

191. Բենիամեն Փրանկլին Ֆէրգին, Շմիդտի։ գերմ. թարգմ. Փել. Վարդանեանի։ 1885. Թֆլս., երկր. տպ.

Մեծ մարդու այս կենսագրութիւնը շատ խրախուսական ընաւորութիւն ունի։

Բաւականին թեթև լեզուով է թարգմանուած։

192. Բուդհա եւ իր վարդապետութիւնը։ Կազմեց Ստ. Մալխասեանց։ Թ. Հ. Հ. Ը. 1897. գինը 20 կոպ.

Այս վարդապետութեան էական իդէան կայանում է կենդանական զգացողութեան ճնշման մէջ։ Բուդդհայի վարդապետութեանը վերացական իդէալական էր՝ հակառակ Կոնֆուցիոսի վարդապետութեան։ Տես № 218 համեմատութեան համար։

Զարգացածների համար համեմատութեան ու խորհրդակցութեան գեղեցիկ նիւթեր են։ Տես «Կոնֆուցիոս» ներքևը։

193. Բնաւորութիւն Սմայլսի։ Թարգմ. Փ. Վարդանեանի. Թֆլս. 1888. գինը 1 ռ.

Երբ որ պատանին սկսում է զբաղուիլ վերացական գաղափարներով, արժէ տալ նրան Սմայլսի այս և միւս գրուածքները՝ իբրև մի տեսակ գործնական ներածութիւն փիլիսոփայական գաղափարների։

194, Գիւղական փաստաբան Էլիզա. Օրժէշկօի։ Թարգմ։ Յովհ. Մեղնիկեանի, 1896. գինը 20 կոպ.

Հարստահարիչի ու հարստահարուածի գիւղական կենդանի պատկերներ են։

195. Գէորգ Վաշինգտոն Շմիդի։ Թարգմ. Փ. Վարդանեանի, Թֆլս, 1885, գինը 60.

Գեղեցիկ կենսագրութիւն է։ Ափսոս որ գրաբար բառերը ծանրացնում են ընթերցումը։

196։ Գնանք նրա ետեւից Հ. Սինկևիչի։ Թարգմ. Տ. Վարդանեանցի։ Ախալցխա, 1896. 67 մեջ. եր. գինը 20 կոպ.

Հիանալի նկարագրութիւն է Անթէայի ձգտումների, նրբան ու Քրիստոսին շրջապատող կեանքի և վերջինիս խաչելութեան։

197 Գուլիվէրի ճանապարհորդութիւնը Սֆիվթի։ Թարգմ Ղ. Աղայեանցի. Թ. Հ. Հ. Ը. 1897. գինը 50 կոպ.

Այս գիրքը հասկացողների համար իսկապէս մի պատմական պարսաւագրութիւն (պամֆլէտ) է անգլիական կեանքից, որ շատ աննշան կապ կարող է ունենալ մերնաև հասակաւոր սովորական ընթերցողի աշխարհայեցողութեան ու կեանքի հետ։ Այս գրքի հայերէն թարգմանութիւնը նպատակին քիչ թէ շատ հասցնելու համար անհրաժեշտ էր մի ներածութիւն։ Բերլինի յայտնի քննադատ Լէօ Բէրգ ասում է, որ նա և իր մանուկ հասակակիցները «համաշխարհային գրականութեան այս դառնագոյն գիրքը իբրև հեքիաթ էին վայելում։»

Մեր դեռահաս ինչպէս նաև հասակաւոր ընթերցողները հէնց այսպէս էլ կը վերաբերուեն այս գրուածքին։

198. Գուստաւ Վազա, պատմ. վէպ պատանիների համար Ներեցի։ Թարգմ. ռուս. Ս. Վեհապետեանցի։ Ալքսնդրպլ. 1887. 97 եր. գինը 30 կոպ.

Այս գրուածքը թէև գեղարուեստական տեսակէտով առանձին արժէք չունի, սակայն Շվէդիայի ազատագրական պատերազմը 16. դարի սկզբում ընդդէմ դանիացի բռնապետ Քրիստիան Բ. մինչև վերջը հետաքրքրութեամբ կարդացւում է։ Աւելի գրաւում են Գուստաւ Վազա և Բաւ հերոսները։ Արստո

200. *Երկու թռչուն* Վ. Փափազեանի։ Թֆլս. 1905. 13 միջ. եր. գինը 3 կոպ. Հրատ. Թ. Հ. Ը.

Վանդակում փակուած երկու զեղձանիկներից էգը լսելով ազատասէր ճնճղուկի խօսքերին՝ մի օր, երբ վանդակի դռնակը բաց է մնացած լինում, փախչում է, իսկ արուն երկիւղ կրելով արտաքին աշխարհի վտանգներից՝ մնում է մէջը և արժանանում մինչև անգամ տիրոջ արհամարհանքին։

Այս զրոյցը արժէ կարդալ։

201. *Երկու բարեկամ* Օ. Շուպիայի։ 1878. գին 25 կոպ.

Վիպասան ճամբորդական նկարագրութիւն է։ Քիչ արժէք ունի։

202. *Երկու երեկոյ* Կոտ. Մուրլիկայի։ № 184 հետ։ Քրիստոսի խաչի խորհուրդն է բացատրում և հրահանգում է, որ գիտնական լինելը բաւական չէ, այլ որ օգուտ պէտք է տալ ուրիշներին։

203. *Զանգակի երգը* Շիլլէրի։ Թարգմ. Գ. Բարխուդարեանցի։ 1884. գինը 20 կոպ.

Ընտիր է։

204. *Զգացմունքների աշխարհից* Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1898. գինը 30 կոպ.

«Վէրք Հայաստանի»ց ստացած խոր տպաւորութեանց ջերմ արտայայտութիւն է։ Արժէ կարդալ։

205. *Զուարճալի պատմուածքներ* Մարկ Տուէնի։ Թֆլս. 1891. 104 միջ. եր. գինը. 15 կոպ.

Պէտք է երբեմն այսպիսի բաներ էլ կարդալ, որոնք թէև շատ հրահանգիչ չեն, բայց և այնպէս հասարակական ու ընտանեկան կեանքի երևոյթները խոշորացոյցի տակ դնելով՝ մեզ աւելի զգալի են ներկայանում։

206. *Էրզրում Դը-Էդ.* Նումանի։ Թարգմ. Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1895. 31 փքրդ. եր, գինը 5 կոպ.

Գլխաւորապէս նկարագրում է 1889 թ. քաղաքական դէրութիւնը. ժողովրդի մասին ոչինչ, իսկ երկրի մասին քիչ բան կայ այս գրքում։

307. *Թշուառների բարեկամ բժ.* Հասագ։ Փխդր. ռուս. Վ. Արծրունի։ Թֆլս. Հ. Հ. Ը. 1900. 91 փքրդ. եր, գինը.,.

Այս վերին աստիճանի անձնազոհ, իդէալական բժիշկի կեանքը շատ և շատ օրինակելի է։

208. *Իգնատիոս Լոյոլա* պատկերով, կազմ. Լ. Մելիք-Ազատեանց. Թֆլս. 1890, 121 փքրդ. եր. գինը 30 կոպ.

Նկարագրում է այս եղուիտական ուխտի հիմնադրի կեանքը և հասարակական գործունէութիւնը, որոնց մասին կարելի է որոշ գաղափար կազմել այս գրքի միջոցով։

209. *Իդէալիստ ծածան* Շէքդրին։ Թարգմ. Մ. Ղազարեանցի. տես այլ տեղեկութիւններ № 148 ում։

Զուկը իդէալիստ մարդու դեր է կատարում, խօսում, խորհրդակցում է և միութիւն քարոզում գիշատիչ ձկների դէմ, բայց միամտութիւնից ինքն էլ զոհ է գնում։

Այս այլաբանութիւնը հետաքրքրութեամբ կը կարդացուի։

210. *Իմաստուն ծանծաղուկը*, Տեղեկութիւններ տես 148 և 209 համարներում։

Այս այլաբանութեան հերոս ձուկը ծածանի հակապատկերն է. սա միայն իր կաշուի վրայ մտածելով 100 տարի կարողանում է ապրել։

Հետաքրքրական է։

211. *Ինգնօգնութիւն* Սմայլսի։ Թարգմ. Փ. Վարդանեանի։ Թֆլս. 1890. գինը 1 ռ.

Ինչպէս որ նոյն հեղինակի «Բնաւորութիւն» երկի մասին էլ ասել էի, արժէ որ կարդան դէպի վերացական գաղափարները արդէն միտում ունեցող դեռահասները։ Այս գրուածքն էլ կարող է իրրև նախապատրաստութիւն ծառայել։

212. *Լաբուարի որսը* Վ. Միրաքեանցի։ Թֆլս. 1901. 48 փքրդ. եր. գինը 20 կոպ.

Հիանալի պոյէմա է որսորդի ու նրա աղջկայ կեանքից։

Շատ արժէ կարդալ։

213. *Լինարդ եւ Գերտրուդ* Հ. Պեստալոցի։ Թարգմ. ռուս. համառօտութիւնից։ Թ. Հ, Հ. Ը. 1891. 133 միջ. եր. գինը 25 կոպ.

Բաւականին յաջողուած համառօտութիւն է, տպաւորութիւն գործում է։ Այս գիրքը ընթերցողին ակներև կերպով ցոյց է տալիս, թէ ինչ կարող են անել գիւղում մի քանի եռանդուն ազնիւ գործիչներ և թէ ինչ հրաշքներ կարող է գործել պարտաճանաչ խելացի մայրը։

214. *Լինարդ եւ Գերտրուդ* Հ. Պեստալոցցի։ Գերմ. թարգմ. Ի. Յարութիւնեանց։ Թֆլս. 1897. 423 եր. գինը՝ 1 ռ. 50 կոպ.

Մեծ ժանկավարժի այս վէպը, որ իրական կեանքի շատ խնդիրներ է շօշափում միշտ հետաքրքրութեամբ կը կարդացուի։

Տես նաև նախընթաց համարին վերաբերեալը։

216. *Կազիա Կովերսկայի*, լեհ. վէպիկ։ Թարգմ. օր. Միհրուհի։

Երբ դաժան պրուսացիները գալիս են մի տուն օտարատպատակ լեհացիներին Գերմանիայից դուրս անելու համար, Կազիա որբ աղջիկը (8 տարեկան) կաթուածահար է լինում ու մեռնում է։

Շատ խոր տպաւորութիւն է գործում։

217. *Կախարդը* Է. Օրժէշկօի։ Ռուս. թարգմ. Յովհ. Մեղնիկեան։ Պոգ. 1896. գինը 15 կոպ.

Անմեղ գթասիրտ կինը, որ դեղերով օգնում էր հիւանդներին, խաւար ժողովրդի կողմից կախարդի տեղ է ընդունւում ու սպանւում։

Տպաւորիչ է։

218. *Կոնֆուցիոս եւ իր փիլիսոփայական գործունէութիւնը*։ Կազմ. Գ. Բազդ. Թ. Հ. Հ. Ը. 1887. գինը 20 կոպ.

Աւելի հետաքրքրական կը լինի այս գործնական վարդապետութեան հետ կարդալ Բուդդհայի իդէալականը և համեմատել քրիստոնէական վարդապետութեանը։ Տես Բուդդհա № 192.

Վերապահել 16 տարեկան հասակին ժառեցածներին։

219. *Հազարից մէկը*, Վէպիկ Ն. Մամիկոնեանի։ Թֆլս. 1895. միջ. 234 եր. գինը 60 կոպ.

Գանձակի գիւղերից մէկի կեանքից է։ Շէն ու հիւրասէր ընտանիքը քանդւում է շնորհիւ մի տգրուկ վաշխառուի։ Թշուառ ընտանիքի զաւակը, Վահանը, հարկադրւում է ռուս.-տաճ. պատերազմի ժամանակ միլիցիա մտնել իր սիրած նշանածից էլ զրկուելով։ Աւագը, այս թշուառ ընտանիքի որդին, բռնի կնութեան է առնում Վ.-ի նշանածին։ Սոցը էլ վրայ հասնելով՝ խպատ աղքատացնում է Վ.-ի ծնողներին, եղբոր որբերին։ Վերջը Վ. հարստութեամբ վերադառնալով՝ հօր մահուանից առաջ հասնում է ու նրա կեանքի վերջին օրերը թեթևցնում։

Տպաւորութիւն գործում է։ Տալ աւելի հասունացած-ներին։

220. 1500 *Տարի առաջ* Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1904. փքրդ. 64 եր. գինը 20 կոպ.

Ամփոփ պատմութիւն է մեր տառերի գիւտի մասին։

Արժէ կարդալ։

221. *Հիւսիսի արծիւը*, պատմական վէպ 1801-1829։ Կովկասի տիրապետութեան 100 ամեակի առթիւ։ Բագրատ Այվազեանի։ Թֆլս. 1901. միջ 208 եր. գինը 1 ռ.

Երբ այսօր հին բարբարոսութեանց պատմութիւնը կրկնւում է իր բոլոր մանրամասնութիւններով մեր աչքերի առջև, աւելի նշանակելի է այս գրուածքի բովանդակութիւնը։

ԴԵՌԱՀԱՄՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ *)

(Յ. Տէր-Միրաքեանի)

—

222. *Ճապոնիա կամ ծագող արեգակի երկիրը* Շրայդէրի։ Գ.-ի հանրաժատչելի գրադարան Հ. Առաքելեանցի, Թֆլս. 1904, փոքրադիր 116 եր., մի պատկերով, գինը 25 կ.

Մեծ հետաքրքրութեամբ կարդացու

տի հետ կապուած, որի մասին տալիս է կարևորագոյն տեղեկութիւնները։

230. *Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում։* (Հայ տուրիստի յիշողութիւններից)։ Թֆլս։ 1905. Լ. Սարգսեանի։ 86 միջ. եր., գինը 20 կոպ.

Մեր հայրենիքի փառաւոր անցեալ ունեցող այս վայրերի ու նրանց ժողովրդի նկարագրութիւնը հետաքրքրութեամբ կարդացւում է. մանաւանդ այն էջերը որոնց մէջ արծածւում են այն անցեալից սիրելի վերյուշներ։ Նամանաւանդ այս օրերում ուշադրաւ է այս երկիրը իր քաջարի զաւակներով։

231. *Մատաւոր, Փիզիքական ու բարոյական ինքնակրութիւն Զօն Ստիւարտ Բլեկկի։* Թարգմ. Գր. Շահբուզաղեանցի։ Երկր. տպ. Թֆլս. 1904. 116 մեծդ. եր. գինը 60 կոպ։

Հանրամատչելի «խորհուրդներ են այն երիտասարդներին, որոնք որ կեանքի ասպարէզը մտնելով՝ ցանկանում են լուրջ կերպով պատրաստուել ուսումնական հասարակական գործունէութեան համար,»—ասում է հեղինակը։ Մեր գրականութեան մէջ քիչ կան այսպիսի գրքեր։

232. *Միլտիզէնի ընծան Ա. Դոդէի։* Թարգմ. Նիկ. Տէր Աւետիքեանի։ Շուշի, 1881.

Ֆրանսիայի ոգին բարիքներ է խոստանում նորածնին։ Հոգսերից ուժասպառուած մայրը այդ առածներից բան չէ հասկանում, իսկ նորածինը հասկանում է։

Թէև ընտիր գրուածք է, սակայն խորհուրդը պարզ չէ։

233. *Յուղայի վերջին գիշերը է.* Հերհարտի։ Թարգմ. Խաչ. քշ. Փանեանցի։ Թֆլս. 1901. 26 միջ. եր. գինը...

Վերին աստիճանի խոր ազաւորութիւն է գործում մատնիչ աշակերտի կեանքի վերջին ժամերի այս նկարագրութիւնը։

234. *Յունաստանի անցեալից պատմական տեսութիւն.* Ե. Թոփչեանի։ Պարզ. 1898, գինը 18 կոպ.

Ամփոփ ու հետաքրքրական գրուածք է։

235. *Նինի՛ համար։* Հեղ. (?) փխդր. Ֆրանսերէնից։ ռուս. թարգմ. Յար. Եսայեանի։ Թֆլս. 1904. 16 փքրդ. եր. գինը 3 կոպ.

Խեղճ բանուորի կինը թոքախտից բռնուած՝ հիւանդանոցում պառկած տառապում է։ Բժիշկը խորհուրդ է տալիս նրան հարաւ տանել։ Բանուորը գիմում է իր ժոր նախկին տիրուհուն, որ մեծ բարեգործութիւններ էր արած եղել։ Սա նախ մերժում է հազար ֆրանկ մի այսպիսի բանի տալը, ապա

յիշելով որ իր փեսացուն էլ թոքախտից էր գնացել, խղճահարւում է և օգնում։

Աւելի զարգացածների համար կարելի էր նշանակել։

236. *Նոր լոյս։* Մանր պատմուածքներ։ Գր. քշ. Պետրովի։ Թարգմ. ռուս., հրատ. տիկ. Զարելի։ Բրգ. 180 եր. փքրդ. «Մեր էժանագին գրադարանի» №5, գինը 10 կոպ.

Աւելի քարոզչական տոնով գրուած պատմուածքներ են ժողովրդի թշուառ կեանքից և ազգու կոչ՝ օգնութեան։ Համոզիչ օրինակներ է տալիս փոքր միջոցներով արդիւնք առաջացնելու համար։

Տպաւորիչ են։

237. *Նոր կաղանդ չէր,* պատկերազարդ հաւաքածոյ Հ. Կարապետ Աբրիանի Մխիթ. ուխտէն։ Վնտկ. 1891. 23 մեծ. եր. գին...

2-8 երեսներից բաղկացած կենսագրական ուրուագծեր են, մանրին ու սրտին համարեա թէ ոչինչ չտուող։ Պատկերները շատ անհաւասար արժէքի են, շատերը անտանելի։ Ընտրուած անձերն էլ շատ անհաւասար արժանաւորութեան տէր են, որոնք կարող են դեռահասների մէջ հարցասիրութեան առաջացնել։

238. *Ուղեղի նորոգումը։* 10.002 գիշերների հեքիաթներից Ֆէլիքս Դիկմէլի։ Թրգմ. օր. Ն. Աղանեանցի։ Թֆլս. 1904. 10 միջ. եր. գինը 5 կոպ.

Սուլթանի մեծ պաշտօնեաներից մէկը, որ ոչ խելք ունէր և ոչ էլ խիղճ, գիմել էր մի բժիշկի, որ նրա ուղեղը հանել, նորոգել էր և ութը տարի սպասել տիրոջը։ Տէրը այդքան ժամանակ առանց ուղեղի ծառայելուց յետոյ՝ երբ հրաժարեցնում է, նոր գալիս է իր ուղեղի ետևից, պահանջ գալով այն ունենալու։ Իր նորոգուած ուղեղին տիրանալով նա տեսնում է, որ իր մէջ երկու բան աւելացել են՝ խելք ու խիղճ։

Հետաքրքրութիւն շարժում է։

239. *Ուսման սէր Ա. Լէշկէ՛ի։* «Մեր էժանագին գրադարանը» № 6. Թարգմ. ռուս. Պարզ. 1905. փոքրդ. 60 եր. գինը 7 կոպ։ Հրատ. տիկ. Զարելի։

Մի «մուժիկի» կեանքից պարզ պատմուածք է. նա մեծ նեղութիւններ կրելով ու հալածանքների ենթարկուելով վերջապէս գրագէտ է դառնում և ապա՝ գիւղական ուսուցիչ։ Խեղճի կրած տառապանքները կարեկցութիւն են առաջացնում մարդուս մէջ։

Արժէ կարդալ։ Իրատական է շատ։

240. *Ուսկոկներ Եժ. Տ. ռուս. թարգմ. Պարգ. 1895. 232 միջ. եր. գինը 35 կոպ.*

1593—1606 տեղ ազատագրական պատերազմի մի միջնադէպն է նկարագրուած։ Ուսկոկները (սերբեր) թիւրքական գազանութեանց դէմ ասպատամբելով բանն այնպէս էին տարել, որ Գերմանիան ստիպուեց նոյնպէս պատերազմ հրատարակել և ուսկոկների օգնութեանը կարօտել։

Լարուած հետաքրքրութեամբ կարդացուում է։

241. *Ուրբեանեցի մանուկը Ոյդի զրոյցներից։ Թ. Հ. Հ. Ը. 1895, գին. 10 կոպ.*

Աշխարհահռչակ նկարիչ Ռաֆայէլի մանկական կեանքից է։ Եօթ տարեկան Ռ. նկարչական հրաշք է գործում ընկերական սիրով ոգեորուելով։ Անհաւատալի են թուում նրան վերագրուած սրամիտ խօսքերն ու գործերը—այնքան սքանչելի տպաւորութիւն է գործում այդ ամենը։

242. *Պետրոս Շանչիանց Մելք. եպ. Մուրադեանցի։ Թֆլս. 1896. գինը 50 կոպ.*

Մեր առաջաւոր գործիչներից մէկի բաւականին հետաքրքրական կենսագրութիւն է։

243. *Պետրոս Դուրեան։ Կենսագրական ուսումնասիրութիւն։ Թֆլս. 1894. գինը 50 կոպ.*

Աւելի հասունացածներին վերապահել այս ուշադրութեան արժանի գրուածքը։

244. *Պետրոս Աբսա կամ խանձուած քար։ *) Կարմէն Սիլվայի։ Թրգմ. Ռաշիդի։ Թֆլս. 1888. 16 փքրդ. եր. գինը 5 կոպ.*

Գեղանի Պաուլա գեղջկուհին սիրում է երիտասարդ Տանային։ Թէև Տ. պատերազմ է գնում, սակայն նրա նշանածը տխուր չէ, սիրտը հայրենասիրութեամբ տոգորուած լինելով։ Բայց երբ որ երիտասարդը փախչում է պատերազմի դաշտից ու գալիս նշանածի մօտ, սա անարգանքով դժրում է նրա սէրը։ Տ. հարկադրուում է վերադառնալ պատերազմի դաշտը։ Նրա նշանած Պաուլան նրան գտնում է ընկածների մէջ քթից ու աչքից զրկուած, փայփայանքով տուն է բերում նրան և հիմա պահում հեռը։

Վերին աստիճանի սրտառուչ է։

*) Մենք ունենք նաև մի այլ թարգմանութիւն «Այրուած ապառաժը», որ միացած է «Ցիպեան ժայռերը» սիրուն գրուածքի հետ նոյն հեղինակի «երկու հեքիաթ» անունով գրքում։ Թարգմ. Ս. Մ. Թ. Հ. Հ. Ը. 1894 գինը 10 կոպ.

ԴԵՌԱՀԱՄՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ *)

(Յ. Տէր-Միրաքեանի)

59. *Մուկուչի հիաւիկը պ. Նեզվանովի, թարգ. Գ. Ա. Թ. Թ. Հ. Հ. Ը. 1891, գին 15 կոպ։*

Ոչ բելլետրիստական և ոչ էլ բնապատմական գրուածքի ընդարձակութիւն ունի։ Աւելի աղուէսի՝ քան հաւիկի մասին է խօսուում։ Առանձին արժէք չունի։

60. *Նալ և Դամայանթի Ֆ. Շմիդտի։ Թ. Հ. Հ. Ը. 1891. գին 20 կոպ. 96 միջ. եր։*

Սիրուն ու կրթիչ բովանդակութիւն ունի, որ արտայայտուած է թեթև ու ընտիր թարգմանական լեզուով։ Ջերմ սիրով կապուած երկու ամուսինները՝ շնորհիւ Քալի չար ոգու նախանձին՝ անպատմելի թշուառութեանց մէջ են ընկնում. Նալ թագաւորը բուէախաղով իր խորթ եղբօրը տարուում է իր թագաւորութեան հետ ամբողջ հարստութիւնը, ամբողջ ընտանիքով անտուն անտէր դառնում, կնոջը թողնում փախչում է, զաւակներից հեռանում։ Երկար ու ձիգ տարիներ ծանր տառապանք կրելով թագաւորն ու թագուհին վերջապէս իրար գտնում են ու նորից նախկին երջանկութեանը հասնում։

61. *Նապաստակը, թարգմ. օր Ն. Ղուլիջանեանի. Թ. Հ. Հ. Ը. 1896. գինը 7. կոպ.*

Ոչ բելլետրիստական է և ոչ էլ բնապատմական։ Դժուար է հասկանալ այս գլուխկի իդէան։

62. *Շատատ Աչխարուժոլայի, թարգմ։ օր. Ն. Փ. Մոսկուա, 1896. գինը 25 կոպ.*

Զափազանց բարոյակրթիչ տենդենցեա ունի. մանկանը անընական բարեսրտութիւն է վերագրում։ Գեղարուստական արժէք չունի այս գրուածքը։

63. *Ռընէ։ Քրիստ. Շմիդտի, թարգմ. Վիշապազունի, 1878 129 միջակ եր.*

Մի 12 տարեկան ազքատ պատանի հրաշքներ է գործում. Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ բանտից ազատում է ոչ միայն մի դուքսի աղջկան (Ռոբէսպիէրը թոյլ էր տուել, ո-

*) Տես «Մուրճ» № 1.

բովհետև գողերին ժառանգոյց անելով՝ այս պատանին նրա աչքն էր մտել), այլև իր հօրը՝ խարէութեամբ մի աղքատ մարդի բանտի մէջ նրա տեղը թողնելով։ Անճաշակ, անբնական գրուածք, բարոյական տեսակէտից էլ պարսաւելի։

64. *Սոխակ և խոզարած* Անդերսնի։ Թարգմ. Տ. Նաւասարդեանցի, 1882.

Այս վէպիկը Անդերսէնի առաջնակարգ գրուածքներից չէ։

65. *Սօխակ և օձ* Օստրոգորսկու ժողովածուից, թարգմ. Տ. Կոստանեանցի, Թֆլս, 1894, գին «Հարուստը և աղքատը» ու «Աստղէ գրաւ» գրուածքների հետ 7 կոպ.

Հաւատարիմ ծառային հրաշքով հասկանալի են դառնում կենդանիների լեզուն։ Մրջիւնի, ագռաւի ձագերին ու ձկներին լաւութիւն է անում, սրանք էլ իրանց կողմից աջակից են լինում նրան թագաւորի աղջկայ ձեռքին արժանանալու։

Ընտիր է։

66. *Սիու-Լիէն*, Տ. Կոստանեանցի այլ 4 չինական առասպելների հետ թարգմ. Թիֆլ. 1895. 104 եր. գին 15.

Դուստրը իմանալով որ իր հօր ձեռքը պէտքէ կտրեն խաբերայութեան համար, գնում թագաւորին պաղատում է, որ նրանի տեղակ իրանը կտրեն, քանի որ ինքը կարող չէ կերակրել հիւանդ մօրը, թոյլ եղբօրը, փոքրիկ քոյրիկին։ Թագաւորը շատ զթաշարժւում է, բայց ընդոյշ աղջկայ սիրտը փորձելու համար հրամայում է նրա ցանկութիւնը կատարել։ Սակայն հէնց որ սուրը բաձրացնում են, թագաւորը կանգնեցնում է, Սիու-Լիէի հօրն էլ ազատում է և հրաման տալիս այնուհետև այդ հրապարակում այլևս ոչ ոքի պատժի չենթարկեն։ Ապա նոյն տեղը արձան է կանգնեցնել տալիս հետևեալը արձանագրել տալով. «Այստեղ Սիու-Լիէն, մանդարին Իխունգի աղջիկը, պատրաստ էր իր կեանքը զոհել հօր ազատութեան համար, օրհնեալ լինեն այն հայրերը, որոնք այդպիսի դուստրներ ունեն և օրհնեալ լինի այն հողը, որի վրայ աճում է այդպիսի սէրը»։

Շատ խոր տպաւորութիւն է գործում։

67. *Փոքրիկ Հեղինէն*, հեղ.? թարգմ. Հովհ. Արարաջեանցի, Ալեքսանդրապոլ 1896. գին 5 կոպ.

Դժուար է ասել, թէ այս գրքոյկը ինչ իմաստ ունի։

68. *Փայլուն կոպէկ*, ժանկական վէպ, Բաուէնի, թարգմ. Գր. Շախբուդաղեանի, Թֆլս, 1885. 93 եր, 25 կոպ.

Արբեցող ծնողների զաւակ Դիկը մի օր խնձոր է գողանում, մի բարի ծերունի խրատում է, զղջում է։ Մի անգամ էլ մի հարուստից պղնձէ փող ստանալիս այս երեխան փայլուն կոպէկը ոսկի համարելով տանում է նրան վերադարձնելու համար։ Մեծատունը գնահատում է այդ և նրան երջանկացնում։ Դիկը այնքան բարձր բարոյականի տէր է դառնում, որ սովորում է թշնամուն էլ ներել։

Մի քիչ սխալ լարերի է դիպչում հեղինակը. բայց ոչինչ, արժէ կարդալ։

69. *Օրերոնի հրաշալի եղջիւրը*։ Թ. հ. հ. ը. 1897. Գրիմի դունատիպ պատկերազարդ հէքիաթներից. գին 40 կոպ.

Ասպետ Հուգոն Բորդոյից հրաւէր է ստանում կայսրից պալատ գնալու, նրան նախանձորդ—ասպետ Ամոր ին կայսեր Շարլ որդու հետ առաջը կտրում են գիշերը։ Հուգոն միամտաբար զարկում սպանում է Շարլին, Ամորին փախչում է և ապա գիակը տանելով կայսեր գանդատւում է որ Հուգոն սպանեց։ Թէև սա ասում է որ միամտաբար է պատահել, կայսրը յարձակւում է վրան սպանելու համար և ապա, զիջանելով ասպետների թախանձանքին, նրան կենդանի թողնում է։ Բայց և այնպէս այն պայմանով որ Բաղդատի խալիֆի վեզիրին գնայ սպանի այնտեղ և խալիֆի սեղանատաւներից ու մօրուքի մազերից բերէ։ Հ. շնորհիւ Օրերոնի՝ թղուկների իշխանի հրաշալի եղջիւրին հասնում է իր նպատակին, գերութիւնից ազատում է նաև իր ազգականուհուն, Էսկլարմոնդին, վերադառնում հայրենիք ու այն իշխանուհու հետ ամուսնանալով երջանկանում միևնոյն ժամանակ կայսեր շնորհը գտնելով։

Գեղեցիկ հէքիաթ է։

70. *Ֆրիդոլին կամ սէր եւ ատելութիւն* Քր. Շմիդտի, Տիգր. Նաւասարդեանի, 1877. 64 միջակ եր։

Որոշ շկոլայի ստերեօտիպ պլանով կազմուած գրուածք է. մի կողմը անսահման չար դևեր, միւս կողմը հրեշտակներ։

Զարժէ այդպիսի գրուածքներ կարդալ տալ։

71. *Ֆրիդոլին Շիլլերի*, թարգմ. Բաֆֆի։

Գրաբար է թարգմանուած և քանի որ խօսք կայ դքսուհու հետ «անվայել յարաբերութեան» մէջ գտնուելու մասին, թէ և թարգմանիչը պատանիներին է նուիրել այս գրքոյկը պէտք է մերժել այսպիսի նուէրները։

10—12 տարեկանների համար։

72. *Ալպեան հովիւ* Ի. Սպիրիի, թարգմ. Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1895, գին 20 կոպ.

Խեղճ որբուկ Թիզը բոլորից արհամարուած, ծաղրի ու ծանակի առարկայ դարձած, ծեծուած՝ յուսահատ կեանք է վարում։ Բայց բաղդը վերջը բերում է. այս որբուկը հարուստ

կենդանապահին հիւանդ, անպաշտպան գտնելով խնամում է նրան, ազատում է նեղութիւնից և ինքն էլ փոխադարձաբար բաղդաւորւում։

Գեղեցիկ տպաւորութիւն է գործում։

73. *Աղքատի բաղդը Անդրէեայի, նուէր մանուկներին։ Թարգմ. ռուսերենից. գին 5 կոպ.*

Նկարագրում է մի անտեր մանկան չարքաշ կեանքը, մաքառումը կարիքի դէմ ու յաղթանակը։ Պատկերի գոյները թէև տեղ տեղ թոյլ են, բայց և այնպէս ամբողջութիւնը տպաւորիչ է։

74. *Այծարած Մոնի Ի. Սպիրիի, թարգմ. Ի. Յարութիւնեանցի, Թֆլս., 1895. գին 15 կոպ.*

Գրաւիչ կերպով նկարագրուած է Մոնիի և նրա այծի փոխադարձ սէրը, այծարածի մի սխալմունքի մէջ ընկնելը, խղճի հանգստութիւնը կորցնելը, զղջալը և վարձատրուելը։

Այդ մանկան հոգեկան տանջանքների նկարագիրը խոր տպաւորութիւնը կը գործէ հասակակիցների վրայ։

75. *Աշխատութեան հրեշտակը, չինական առասպելներից։ Թարգմ. Տ. Պարոնեանցի, այլ 3 առասպելների հետ 104 եր. գինը 15 կոպ.*

Խելացի, բայց անհոգ հնդկական թագաժառանգը բանն այնտեղ է հասցնում, որ հարկադրուած է լինում գահը թափուր թողնելով փախչել։ Բարի հրեշտակը զանազան կերպարանքներ առած՝ ուղեկցում է, սովորեցնում է չարքաշ կեանքի ու ազնիւ աշխատութեան։ Ու երբ որ երկիրը եղբօր թագաժառանգի շնորհիւ մեծ յաջահաջողութեան մէջ է ընկնում, հրեշտակը այս անգամ էլ գիւղացու կերպարանքով խոստանում է ժողովրդին՝ նախորդին գտնել բերել։ Հիմա այս թագաժառանգը ուղղուած լինելով՝ կրկին գահ է բարձրանում և իր հայրենի երկրի բարօրութեան պատճառ լինում։

Սիրուն գրուածք է։

76. *Ապենիններից մինչև Անդերը Դէ Ամիչիսի, թարգմ. Գ. Վարդանեանցի, Թֆլս, 1888, գինը 20 կոպ,*

Տասներեք տարեկան որդին անասելի տառապանքներ կրելով Իտալիայից Ամերիկա է գնում, մօրը գտնում ու մահից ազատում է նրան։

Նիւթը շատ տպաւորիչ է, բայց ափսոս որ թարգմանական լեզուն խճողուած է անագին քանակութեամբ զուտ գրաբար բառերով, որ գէթ այս հասակի ընթերցողներին չպէտք է տրուէին։

77. *Արծուի դատաստանը Արշ. Թումանեանցի. Մոսկուա, 1894. 58 փոքրատ. եր. գինը 40 կոպ.*

Ստորաքարշ ագռաւը ցանկալով մեծ փառքի տիրանալ, մտքումը ղընում է արծիւ թագաւորին փեսայանալ։ Կաչաղակի խորհրդով արծուին կաշառք է տանում, բայց անարգանքի արժանանում։ Յետոյ երբ որ արծիւը գերի է ընկնում, ագռաւը հանգամանքից օգուտ քաղելով գնում է արծուի պալատի գործերը ձեռք առնում, նրա աղջկայ էլ ձեռքը խնդրում։ Հաւատարիմ բազէները գնում են թագաւորին գտնելու, իրանք էլ գերի են ընկնում։

Բայց վերջը արծիւն ազատուելով՝ ազատում է բազէներին, գալիս է դատապարտում ագռաւին, թևերը փետտել է տալիս ու իրան էլ բանտարկում։

Այլաբանութիւնը անբնական է թւում։

78. *Բարեկամական զոհեր Ֆր. Հոֆմանի, թարգմ. Նիկ. Լալայեանցի, 1876. 157 փոքրագիր եր.*

Զէկն ու Զոնը իրար մի քանի անգամ մահից, գերութիւնից փրկում են։ Զոնը մինչև անգամ գտնում է կորած պապին, որ նրա ծնողներին թշուառացնողն էր եղել։

Զգգուած, շինծու գործողութեան նկարագրութիւններ շատ կան։

Ուր որ հարկաւոր է խորասուզուել տպաւորութիւն գործելու համար՝ թեթև է անցնում հեղինակը։

79. *Բարեկամներ Սմիրնովայի, նուէր մանուկներին— թարգմ. ռուսերէնից։ Թֆլս. 1899. 24 մեծադ. եր. գինը 7 կոպէկ։*

Քաղաքացի փչացաց մանուկը ամառանոցում ընկերանում է մի բարի մանկան, շարունակ նրան նեղում է և մի անգամ էլ նրա կօշիկները պահելով նրա հիւանդութեան պատճառ է լինում, վերջը զղջում է։

Առանձին արժէք չունի։

Այս գրուածքին կից է, «Գողութիւն է արել» գրուածքը։ Մի աշակերտուհի, արբեցող հօր աղջիկ, դասարանում հաց է գողանում, աշակերտները հալածում են նրան ու պահանջում դուրս անել. բայց երբ որ լսում են թէ նրանք տանը հաց չունեն, խղճահարւում են։

Միջնոյն արժէքի գրուածք է։

80. *Գառնուկ եւ Լուսատտիկ Շմիդտի, թարգմ. Ն-ի. Թ. հ. հ. ը. 1882. գինը 25 կոպ.*

Առաջին գրուածքում նկարագրւում են մի աղքատ ու մի հարուստ ընտանիքի բարեկամական յարաբերութիւնները։ Սկզբում երկուսն էլ անբաղդ են եղել, ապա երկուսն էլ երջանկացել։

Միջակ բան է։

Միւս գրուածքում որը ընտանիքը նկարագրուում է թշուառութեան ետին աստիճանի մատնուած. և անխիղճ պարտատէրերի ճիրաններից ազատուում է շնորհիւ պատահականութեան։

Նախորդից աւելի յանձնարարելի է։

81. *Գաղթականներ։* Հայ մանուկներին նոր տարուայ նուէր. փոխադր. Յակ. Ղազարեանցի։ Թֆլս. 1964. 23 միջակ եր. գինը 10 կոպ.

Իբրև «մանկական բեմ» կամ թատրոնական գրուածք՝ առանձին արժէք չունի, բայց մանուկների վրայ տպաւորութիւն կը գործէ քոյր ու եղբօր գթասիրտ վերաբերմունքը գաղթականներին, որոնց տալիս են իրանց բոլոր խնայողութիւնը։

82. *Երկու եղբայր* Տիկ. Մօնգոմերիի, վէպիկ. թարգմ. Պ. Պ. Թֆլս, 1895. 236 միջակ եր. գինը 60 կոպ.

Երկու եղբայրներից մէկը շատ կամակոր է լինում, սովորական երեխայական չարութիւններ է անում, հօրից չէ սիրուում անհնազանդութեան պատճառով։ Մի անգամ էլ ծառին ելնելով՝ լիճը ընկնում, հիւանդանում, մեռնում է։

Մի անհամ ձգձգուած անխորհուրդ բան է. չգիտես ծնողներին թէ՞ չար տղաներին խրատելու համար է գրուած։

83. *Երկու եղբայր* վերոյիշեալ չինական առասպելներից։

Մի մանդարին երկու որդի ունէր. մէկը արտաքուստ տգեղ, ներքուստ բարի, ազնիւ ու անձնուէր, իսկ միւսը՝ ընդհակառակը։ Առաջինին եղբօր հետ ծնողներն էլ չէին սիրում։ Չար եղբայրն էլ այդ հանգամանքից օգուտ քաղելով՝ ինչ մեղադրանք ասես, բարդում էր խեղճի վրայ, մինչև անգամ լաւութեան տեղն էլ վատութիւն էր անում։ Այնուհետև երբ վատը պետական գանձապահ դառաւ, իսկ բարին հաշուապահ, առաջին գումարներ վատնելով եղբօրը մահուան դատապարտել տուեց, յետոյ խնդրեց որ միայն աքսորեն։ Խեղճը թշուառացաւ, բայց վատ եղբօրը չանիծեց, վերջն էլ՝ տասը տարի անցնելուց յետոյ՝ նրան մահից ազատեց։ Վերջապէս ամէն գաղտնիք բացուեց, վատը վանք մտաւ։

Վեհանձնութեան հիանալի օրինակ է ներկայացնում այս սիրուն գրուածքը։

84. *Զինուոր Յակոբ* Հոֆմանի, թարգմ. Տ. Կոստանեանցի, 1897. 24 եր. գինը 7 կոպ.

Մի զինուոր պատերազմի դաշտից իր տնեցոց գրում է թէ գետնախնձորի շատ է կարօտել։ Նրա տասներեք տարեկան որդին տեսնելով որ մայրը թոյլ չէ տալիս, գաղտուկ

մի պարկ լցնում է գետնախնձորներով ու հարիւրաւոր վերստեր կտրելով հասնում է հօր բանակատեղը։ Զօրապետը հիանալով այս գեղեցիկ անձնուիրութեան վրայ՝ թէ որդուն է վարձատրում և թէ հօրը։ Վերջը այս «Զինուոր Յակոբը» գնդապետ է դառնում։

Մի աշխոյժ ու տպաւորիչ պատմուածք է Հոֆմանի այս երկը։

85. *Ընտանիքի յոյսը* Անտենսկայի, թարգմ. օր. Մ. Յ. Թֆլս, Հ. հ. ը. 1892. գինը 10 կոպ.

Մի ամբողջ խեղճ ընտանիք գերի է դառնում ու զոհուում 13 տարեկան դստեր կամայականութեանցը։ Բայց ինչու միւս զաւակները այդպիսի զրկանքներ կրէին մէկի հաճոյքների համար։

Ի՞նչ է ուզում ասել հեղինակը, պարզ չէ։

86. *Թաւամազ մեղու* Աւենարիուսի, թարգմ. օր. Ն. Տէր Մարկոսեանի, Թ. Հ. հ. ը. 1879 (սպառ), գինը 40 կոպ.

Հետաքրքրական ձևով նկարագրուած է մեղուների կեանքը։

87. *Թոչնորս*, պատմութիւն երեխաների համար։ Գործ գր. Հոֆմանի. թարգմ. Արշալոյսի, Թֆլս, 1877.

Այս պատմուածքն էլ գրուած է Հոֆմանի ընդհանուր շաբլոնով. մի կողմը առաքինութեան, ազնուութեան տիպարներ, մի խօսքով՝ երկնային հրեշտակներ, միւս կողմը անընկճելի վատութիւն, ապերախտութեան տիպարներ՝ հրէշներ։ Խորթ մայրն ու եղբայրն ատելով ատում հալածում են խեղճ որբուկին, չնայելով սրա անմեղչաարութեանն ու անձնուիրութեանը։ Միայն վերջը, երբ նրանք հիւանդանում, սրա խնամքին են կարօտում, զղջումն։

Գեղարուեստ չկայ, թէման էլ մաշուած ու յանձնարարելի բան չէ։

88. *Թռչունների աշնանային տեղափոխութիւնը* Բոդանովի, Թ. Հ. Հ. ը. 1897. գինը 5 կոպ.

Հետաքրքրական է թռչունների կեանքի այս արկածալից ու վրտանգաւոր օրերի նկարագրութիւնը։

89. *Թռչունների հովանաւորութիւնը* տես № 46.

90. *Ժլատ Սկրուջը* (ծննդեան վէպ)։ Չ. Դիկկէնսկի երկի համառօտութիւնն է, թարգմ. Ն. Զիրգեանեանցի։ Թֆլս, 1897. փոքրագիր 40 եր. գինը 15 կոպ.

Այս համառօտութեան տպաւորութիւնը աղօտ է, թարգմանական լեզուն էլ թերակատար։

91. *Իլիական Հոմերոսի*, թարգմ. Գ. Վարդանեանի, Թֆլս. 1886. գինը 1 ռուբ.

Արձակ ու ազատ փոխադրութիւն է։ Որովհետև իմ «դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրուածքում մանրամասն խօսել եմ փոխադրութեան կերպերի մասին և օրինակ առել նաև Իլիականը, մասնաւորապէս հետաքրքրուողներին մատնացոյց եմ անում այդ հատուածը։ Այստեղ միայն ափսոսանքս կարող եմ արտայայտել, որ բազմաթիւ դժուար թարգմանական բառերը դժուարացնում են պատանիներին այս ընտիր գրուածքի ընթերցումը։

92. *Իմաստուն խորհրդատու*։ Տեղեկութիւններ տես № 75.

Չինական Շան թագաւորը հասարակ երկրագործի վիճակից այդ աստիճանին է հասել շնորհիւ իր բարեմասնութիւնների։ Նա իր առաջին Իու նախարարի հետ հիանալի կերպով կառավարում է երկիրը։ Մի օր թագաւորը ուզելով փորձել Իրան շրջապատողների հոգիները՝ դիտմամբ մեղադրանքի է ենթարկում իր հաւատարիմ Իու նախարարին և ինչ է տեսնում. 100 ից 4-ը հաղիւ են համարձակում անմեղին պաշտպանել, մինչև անգամ նրա բարեկամները զրպարտում են, օգուտ քաղելու համար։ Դատաւորը ծանրագոյն դատավճիռ է կարդում և ապա միայն գաղտնիքը բացւում է և թագաւորը ամեն մէկի հետ վարւում է, ըստ արժանոյն, Իուին իր գահն է տալիս։

Հիանալի է տպաւորութիւնը։

93. *Ինչ է խօսում սենեակը* Աւենարիուսի, թարգմ. օր. Յարութիւնեանցի։ 35 միջակ եր.։

Սենեակի փայտէ, թղթէ, երկաթէ և ապակեայ առարկաները լեզու են ելնում և պատմում իրանց կրած փոփոխութիւնները, մատուցուած ծառայութիւնները։

Դէշ չէ։ Թարգմանուած լեզուն անմշակ է։

94։ *Լերան աղջիկը* Ե. Սպիրիի, փոխադ. օր. Մ. Ս. նուէր մանուկներին։ Թֆլս. 1902, 134 եր. գինը 20 կոպ.

Ալպեան լեռներից փոքրիկ որբուկին տանում են քաղաքացու տուն մացնում, իբրև ընկերուհի մի հարուստի հիւանդ փոքրիկ աղջկան։ Օրիորդ վարժուհին սաստիկ աշխատում է այդ գեղջկուհու կեանքն էլ ընդունուած խիստ ձևականութեանց ենթարկել, իսկ տանեցիք՝ ընդհակառակը։ Լեռնցի աղջիկը այդ տան մէջ սովորում է քիչ կարդալ և ապա գիւղ վերադառնալով այն տեղ է շարունակում ուսումը։

Թէև անարուեստ գրուածք չէ, սակայն դժուար թէ դեռահասների հետաքրքրութիւնը շարժէ։ Սա կարելի էր խրատական գրուածք համարել դաստիարակների համար։

95. *Լիր արքայ Օստրոգորսկու ժողովածուից*, թարգմ. Տ. Կոստանեանցի։ 1884. Թֆլս, 42 փոքրդ. եր. գինը 5 կոպ.

Շէքսպիրի յայտնի տրագեդիայից է փոխադրուած, բայց շատ հաժառօտ է, տպաւորութիւնը գրուածքի պէս վայր ի վերոյ։

96. *Լուսատտիկ*։ տես № 80

97. *Խարազի տղայ կամ երկու ախպէրացեղ*, հէքիաթ Ս. Բամալեանցի։ Թֆլս, 1893. 98 մեծադր. եր. գինը 40 կոպ.

Խարազի տղէն (Ապաւէնը) աղբէրանում է թագաւորի տղի (Փափաքի) հետ, մեծ անձնուիրութեամբ նրան երջանկացնում է։ Վերջն էլ Փափաքն է փոխադարձն անում։

Արկածալի, հետաքրքրական հէքիաթ է։ Այս անսահման անձնուիրութեան օրինակները տպաւորիչ են։

98. *Խաչակիր մանուկներ*. պատմական վէպ, թարգմ. Կոստ. Մարտիրոսեանցի։ Թֆլս, 1890. փոքրադ. 64 եր. գինը 20 կոպ.

Խաչակրաց պատերազմների ժամանակներից մի տարօրինակ իրողութեան նկարագիր է։ 5000 Ֆրանսացի մանուկներ մի հովիւ պատանու առաջնորդութեամբ բուռն ոգևորութեամբ ճամբայ են ընկնում Երուսաղէմը ազատելու դիտաւորութեամբ։ Անհաւատալի է թւում, թէ ինչպէս ծնողների, կառավարութեան կողմից այս ցաւալի «արշաւանքը» արգելքի չէ հանդիպել ու բոլոր մանուկները տեղ չը հասած՝ թշուառացել են։ 2000 մանուկ ծովում են խեղդուել, մնացածներն էլ հէնց Ֆրանսիայի ափերից գերեվաճառների ձեռք ընկնելով՝ վաճառւում են Աֆրիկայի շահասատաններում։

99. *Ծովինար*, հէքիաթ Ս. Բամալեանցի, երորդ տպ. Թֆլս, 1893. 92 միջակ եր. գինը 20 կոպ.

Աշխարհակալ թագաւորի Մեծիկղար որդին գնում է իր երկու եղբայրներին գտնելու, որոնք հակառակ իրանց հօր կտակին՝ մտնելով հարևան տէրութեան սահմանները՝ զոհ էին գնացել Ծովինար գեղեցկուհուն։ Մեծիկղարը շատ արկածներից յետոյ վերջապէս տիրանում է այն գեղեցկուհուն, որ սպանել էր ահագին քանակութեամբ իշխաններ, կարիճներ՝ իր ձեռքին նրանց անարժան համարելով։ Մի կախարդ կին խաբէութեամբ փախցնում է Ծովինարին, բայց Մեծիկղարը աղբէրացած գևերի միջոցով նորից գտնում է իր կնոջը։

Հեղինակի առաջնակարգ հէքիաթներից է։

100. *Կեանքի դպրոց Հոֆմանի։ Նոր ժատենադարան Ժ. Թֆլս, 1897. 32 եր. գինը 10 կոպ.*

Մի երես առած տղի կեանքն է նկարագրում, ցոյց տալով թէ հօր թուլութիւնը ինչպէս փչացրեց նրան։ Այս երեխան ուսումնարանում էլ անկարգ ու անհնազանդ մնաց և երբ հայրը առաջին անգամ նրան յանդիմանեց, նա թողից Աւստրալիա փախաւ։ Բարի նաւապետը նրան սաստում է առաջին օրերը, ծեծում է, բայց ցամաք ելնելով լաւ տեղ տալիս։

Ո՞ւր է «կեանքի դպրոցը»։ Ուրիշ երեխաներ ինչ օրինակ պէտք է առնեն այս մանուկից։ Գրքոյկի բովանդակութիւնը նրա այս փքուն անուան բոլորովին անհամապատասխան է։ Այս գրուածքից գուցէ բան սովորեն ծնողները։

101. *Կենդանի՞ է արդեօք, նուէր մանուկներին Մ. Վ. Արխանգելսկայայի. փոխդր. Թֆլս, 1898. 24 մեծդր. գին...*

Մի մանուկ, գեղագործի որդին, իր ընկերոջ համար սխալմամբ ձիու գեղն է գիւղ ուղարկում և ապա գլխի ընկնելով կայարան է վազում, որ հասնի նրան փրկէ։ Բայց որովհետև գնացքին չէ հասնում, նա շարունակում է վազել և մեծ դժուարութիւններից յետոյ հասնում է գիւղ ընկերոջը վտանգից ազատում։

Այսպիսի բան թէև կարող էր պատահել, բայց այս պատմուածքը շինծու գրուածքի տպաւորութիւն է գործում։

102. *Կոլումբ Լ. Տոլստոյի, թարգմ. Փ. Վարդանեանի։ Թիֆլիս 1891, միջակ եր. գինը 15 կոպ.։*

Պարզ ու հետաքրքրական ձևով նկարագրութիւն է։

103. *Կոլումբոսի առաջին օրերը Ա. Վալուևայի, թարգմ. տիկ. Հ. Շահազիզի, Ն. Նախիջևան, 1895, 48 եր. գինը 15 կոպ.*

Հետաքրքրութեամբ կը կարդացուի։ Տես նախընթաց համարը։

104. *Կոլումբոս եւ Ամերիկայի զիւտը, հեղ ? թարգմ. Ն. Տ. Ա. Թֆլս, 1891, Փքրդ. 94 եր. գինը...*

Տես նախընթաց 102—103 համարները։

105. *Կուզիկ Լիէու, տես համար 75.*

Զինական թագաւորը շրջապատուած է խարդախ ու կեղծաւոր նախարարներով, ժողովուրդը թշուառութեան մէջ է։ Գահի ու ժողովրդի երեք բարեկամները մի պարզ ձկնորս են դառնում ու տանում պալատ։ Թագաւորը տեսնում է, որ սա իրա երազած մարդն է մեծ նախարարի պաշտօնի համար։ Լիէուն այս ասաիճանին հասնելով թագաւորի շրջապատողների կեղծիքները բաց է անում, խիստ օրէնքներ է սահմանում։ Մի

գիշեր մինչև անգամ թագաւորին պարիսպներից ներս չի թողնում օրինապահ լինելու համար։ Այս բանի վրայ Լիէուի թշնամիներն ուրախանում են, բայց հակառակն է դուրս գալիս, նա աւելի բարձրանում է իր միապետի աչքում։

Ընտիր է։

106. *Հազարան բլբուլ, ֆէերա 3 արարուածով։ Յարութ. Թումանեանցի։ Թֆլս, 1903, 71 փքրդ. եր. գինը 30 կոպ.։*

Իսկապէս սովորական հէքիաթ է չափածոյ ձևով։

Արժէ կարդալ։

107. *Հիւանդապահ աղջիկը Գ. Մոնպասանի միւս «Վրէժ» պատկերի հետ կազմուած։ Թֆլս 1896, գինը 5 կոպ.։*

Այս գրուածքի նիւթերը ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակներից է առնուած։ Մէկը հազուագիւտ անյիշաչարութեան կենդանի պատկեր, իսկ միւսը սարսափելի վրէժխնդրութեան։ Շատ նպատակայարմար է եղել այս երկու գրքոյգի միասին կազմելը։

Խոր, ցնցող տպաւորութիւն են գործում։

108. *Հնդու աբաղաղ հէքիաթ, Ուիդի, թարգմ ? Մոսկուա, 1886, 32 փոքրդ. եր. գինը 10 կոպ.։*

Հնդու աբաղաղն ու խոզը անտառ են փախչում իրանց տիրոջ դանակից ազատելու համար։ Այստեղ հաւաքւում են շատ կենդանիներ ու թռչուններ ու պատմում մարդկային անգթութեանց մասին, որ բոլորին կերակուր են շինում։ Մանաւանդ ծաղրում է հնդու աբաղաղի մեծամտութիւնը։

Այլաբանութիւն է։ Դէշ չէ։

109. *Հրէայ Աբները ոչինչ չէր տեսել Վիլհ. Հաուֆի։ Թարգմ. օր. Շ. Տ. Ն. Թֆլս Հ. Հ. Ը. 1899, 17 փոքրդ. եր. գինը 3 կոպ.։*

Մարօկկոյի սուլթանի շունն ու ձին կորել էին։ Երբ համբին կանգնած Աբներին հարցրին, սա առանց այդ կենդանիներին տեսած լինելու նրանց հետքերից եզրակացրել էր թէ կորած շունն ու ձին ինչպէս կարող էին լինել։ Այս բանը պատճառ բռնելով նրան սաստիկ տանջեցին ու տուգանքի ենթարկեցին, կորածների տեղը չասելու պատճառով, բայց բանից դուրս եկաւ, որ խեղճը իրօք տեսած չէ եղել։

Թէև մասամբ զուարճալի է, բայց առանձին արժէք չունի կրթական տեսակէտով։

110 *Հաւատարիմ Սաւիտրի Վայլտների։ Թ. Հ. Հ. Ը. 1891, գինը 10 կոպ.։*

Սաւիտրին թագաւորական տունը թողնելով՝ խեղճ ճրագնաւորին է ամուսին ընտրում և մինչև անգամ նրա հետ մա-

հանալու ցանկութիւն է յայտնում։ Աստուած այս չնաշխարհիկ սէրը տեսնելով՝ կենդանութիւն ու երջանկութիւն է շնորհում նրանց։

Շատ հմայիչ վիպակ է։

111. *Մայրական սէր Օսարօգորսկու ժողովածուից*, թարգմ. Տ. Կոստանեանցի։ Թֆլս, 1884. 19 եր. գինը 5 կոպ.։

Մի դուս պառաւ գեղջկուհի աղքատութիւնից հարկադրուած գնում է քաղաք խոհարարութիւն անելու, իր աղջկան էլ գիւղը տղայ պահող թողնում։ Երկու տարի անցնելուց յետոյ՝ նա աղջկանը շատ է կարօտում, ձմեռ ժամանակ ճամբայ է ընկնում, մօտակայ գիւղումն էլ գիշերը չսպասելով շտապում է գիւղ։ Ճանապարհին նա բուքից ուշաթափւում է ու մահից հազիւ ազատւում։

Տպաւորութիւնը թոյլ է։

112. *Մանկական Ոտանաւորներ* Ս. Դաւթեանի. Պոլիս, 1897. գինը 60 փ.։

Մի քանիսը միայն քիչ թէ շատ արժէք ունեն, իսկ մնացածները անճաշակ տափակ բաներ են։

113. *Մեծագործութիւն*, արևելեան աւանդութիւն։ Թարգմ. Մ. Ալեանակի։ Հեղինակ ? Ն. Նախիջևան. 1896. գինը 10 կոպ.

Խոր տպաւորութիւն է գործում։ Թարգմանութիւնը լաւ է, բայց դժուար բառեր կան։

114. *Մրցումն Հոֆմանի*։ Թարգմ. Տ. Կոստանեանցի։ Թֆլս. 1894. 16 եր, գինը 5 կոպ.։

Նկարչական ուսումնարանի երկու լաւագոյն աշակերտն էլ յոյս ունէին 500 ռ. մրցանակ ստանալու։ Հարուստ ընկերը աւելի յոյս ունէր, բայց նա երկար տատանուելուց յետոյ՝ իր պատկերը ցուցահանդէս չէ գնում, որպէսզի խեղճ ընկերը միջոց ունենայ Իտալիա գնալու՝ կատարելագործուելու համար։ Վերջը ինքն էլ վարձատրւում է, մի հարուստ մարդ նրա պատկերը գնում է։

Տպաւորիչ է։

115. *Նաւի փոքրաւորը* Մ. Ռոզնհայնի։ Թարգմ. Յ. Լալայեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1891. գինը 15 կոպ.։

Ճանապարհորդական նկարագրութիւն է, խրատական ուղղութեամբ գրուած։

Առանձին արժէք չունի։

116. *Ողիսական Հոմերոսի*, Թարգմ. Փ. Վարդանեանի։ Թֆլս. 1886, գինը 1 ռուբլի։

Տես № 91.

117. *Ոսկի ասեղներ*, հէքիաթ, թարգմ. գերմ. Գ. Աքիմեանցի։ 1878. 28 փոքրդ. եր.։

Մի հռչակաւոր գերձակի համբաւը լսելով խեղճ գերձակի երեք որդկերանցից երկուսը գնում են նրա մօտը բան սովորելու, բայց բաւականութեանց եռեից ընկնելով մարդ չեն դառնում։ Ապա գնում է երրորդը, հմուտ վարպետ է դառնում, այսինքն՝ ոսկի ասեղներին տիրանում։

Տպաւորութիւն թողնում է։ Լեզուն խառնուրդ է գրական ու Թիֆլիսի բարբառների։

118. *Ուտենց Յովսէփը* Ի. Սպիրիի, թարգմ. Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1891. 77 եր. գին 15 կոպ.

Մի հարուստ ու աղքատ (Յովսէփ) մանուկների բարեկամութիւնն է նկարագրւում։ Առաջինի դառը կորչում է, գտնում են երկրորդ ընտանիքի մանուկները, տիրոջը վերադարձնելով վարձատրւում են։ Աւելի մանրամասն նկարագրուած է դառն կորցնող Լիսայի (աղջկայ) խղճահարութիւնը մինչև ծնողներին խոստովանուիլը։

Մանկական աշխարհայեացքը պարզօրէն նկարագրուած է։ Ընտիր է։

119. *Որը*, նուէր ընթերցասէր մանուկներին։ Թարգմ. Ան. Թֆլ. 1897. 14 փոքրդ. եր. գինը 6 կոպ.։

Անպաշտպան մնացած որբի տանջանքներն է նկարագրում, բայց այնպէս անբնական, անմշակ կերպով, այնքան անվարժ ձեռքով է թարգմանուած ու անխնամ տպուած այս գիրքը, որ «ընթերցասէր» մանուկները կարող էին առանց այդ «նուէրին» էլ «եօլա գնալ», թող հաւատացած լինեն այդպիսի նուիրատուները։

120. *Պառաւ ծիտը* Դ. Մամին-Սիբիրեակի, թարգմ. Եղիսաբէթ Սարգսեանի։ Թֆլս, 1900. Հ. Հ. Ը.։

Պառաւ ծիտի աներեսութիւնն է նկարագրւում։ Նա այս վատ յատկութեանց համար էլ պատժւում է անբան մնալով ու վերջը սատկելով։

Վատ չէ։

121. *Ռոստամ եւ Զոհրաբ*, Թարգմ. Գ. Վարդանեանի։ Պատկերազարդ. 1889, գինը 20 կոպ.։

Ընտիր է։

122. *Ռոստոմ եւ Սոհրաբ* թարգմ. Ս. Գիւլզադեանցի. 1893. գինը 60 կոպ.։

Ծանր ոտանաւորով է թարգմանուած։ Իբրև բառացի թարգմանութիւն աւելի յանձնարարելի է հասակաւորներին։

123 *Ռոստոմ եւ Սալման։ Գ. Բալասանեանցի։ Թֆլս. 1896. գինը 25 կ.։*

Մեր հեղինակների պոէմներից կազմուած կոմպիլիացիա է։ Տպաւորութիւն գործում է։

124. *Սասունցի Դաւիթ հիւսեց պ. Ճաղարբէկեան, գինը 20 կոպ.*

Բովանդակութիւնը վերաբերում է մասամբ Առիւծաձև Մհերին, մեծ մասը Դաւթին, վերջը Մհերին, որ անէծք է առնում հօրից անմահ մնալու և ժառանգ չունենալու։

Կարելի է տալ դեռահասներին, միայն թէ Ջէնով-Հոնանի կնոջ վաւաշոտութեան վերաբերեալ մի քանի տողերը խոտելի են։

125. *Սասունցի Դաւիթ, պոէմ Յովհ. Թումանեանի, հրատ. Ս. Լիսիցեանի և ընկ. № 1 Թֆլս 1904, փոքրադ. 40 եր. գինը 15 կոպ.։*

Յատկապէս Դաւթի քաջագործութեանց նուիրուած մի սիրուն պոէմա է։

Շատ արժէ կարդալ։

126. *Վարդ Ռէսլին Ի. Սպերիի, թարգմ. Ի. Յարութիւնեանցի. Թ. Հ. Հ. Ը. գինը 10 կոպ.։*

Մանկական գեղեցիկ յարաբերութեանց սիրուն նկարագրութիւն է։

127. *Վարսենիկ հեղ. (?), թարգմ. օր. Ն. Յարութիւնեանցի, Երևան, 1881, 36 միջակ եր.։*

Փոքրիկ քոյրիկը մեծ անձնազոհութեամբ անտառում փրկում է իր աւելի փոքր եղբօրն ու քրոջը։

Տպաւորութիւն թողնում է։

128. *Վրէժ, տես, № 107*

129. *Տիրոլցի աղջիկ Օստրոգորսկու ժողովածուից։ Թարգմ. Տ. Կոստանեանցի։ Թֆլս, 1894, 7 եր. մի այլ գրուածքի հետ գինը 7 կոպ.։*

Այս աղջիկը մանուկ հասակից Շուէյցարիա է գնացած լինում ծառայութեան մտած, այնպէս որ իր հայրենի Բրեգնէց քաղաքը նա արդէն մոռացած է լինում։ Բայց երբ լսում է, որ շուէյցարացիք վրայ են տալու այդ քաղաքին ու կործանելու, գիշերով փախչում է իր հայրենի քաղաքը։ Ժողովուրդը մինչև հիմա էլ ամեն օր ժամը 12-ին յիշում է նրան, այն ժամանակ երբ այս հայրենասէր աղջիկը ապառնացող վտանգի մասին լուր էր հասցրուած եղել։ Նրան միշտ յիշում է գիշերապահը, որ 12-րդ ժամի տեղ նրա անունն է տալիս։

Արժէ կարդալ, գեղեցիկ տպաւորութիւն կը գործէ։

130. *Տորք-Անգեղ եւ Հայկանուշ-Գեղեցիկ Ղ. Աղայեանցի։ Ալեքսանդրպլ 1903, 33 եր. գինը 5 կոպ.։*

Մեր հաղուագիւտ ընտիր դիւցազներգութիւններից մէկն է։ Թէ նահապետական կեանքի սիրուն կողմերը և թէ մեր «Սասմայ ծռերի» դիւցազնական ազնիւ ոգին արտափայլում է Տորքից ու Հայկանուշից և սրանց չրջապատող լեռնականների կեանքից։

Տպաւորութիւնը հիանալի է։

131. *Փշրանք Յ. Կ. Կ. Մելիք Շահնազարեանցի։ 1888,*

Երջանկութեան ու թշուառութեան սիրուն ու գրաւիչ մանրիկ հակապատկերներ են։

132. *Փոքրիկ Մէգը եւ նրա մանուկները, գործ տիկ. Սարեատոնի, թարգմ. Դարեհ Սահակեանցի։ Թֆլս. 1877 96 միջակ եր. գինը 25 կոպ.։*

Մէգի նաւաստի հայրը հեռու աշխարհում հիւանդանում է ու շատ ուշանում, մայրը մեռնում է։ Երկու որբուկներ՝ մի մանչիկ-քոյրիկ ու մի փոքր եղբայր՝ մնում այս տասը տարեկան աղջկան ապովը։ Բայց Մէգը չի վհատում, յոյսը Աստծու վրայ դնելով՝ պահպանում է փոքրիկներին, իսկ երբ գրաւը հատնում է, սկսում է իրանց ունեցած չունեցածը գրաւ դնել։ Ապա բարի մարդիկ քիչ օգնում են։ Մի փչացած գրացի աղջիկ, որ փախած էր մօր մօտից ու անբարոյական կեանք էր վարում, մտնելով այս անպաշտպան մանուկների շրջանը, այնպէս զգացում է նրանց միամիտ կրօնական զգացմունքներից, Աստծու վրայ դրած անսասան յոյսից, որ հետզհետէ ուղղում է, մտնում է նրանց դրութիւնը և օգնում։ Բայց մի անգամ նա մանուկներին հեռը զրօսանքի տարած լինելով Մէգի բացակայութեանը՝ հարբում է, և փոքրիկներին անխնամ թողնելով մրսեցնում է նրանց։ Մանկիկի մահուանը պատճառ է լինում, իսկ Ռոբէնի՝ հիւանդութեան։ Վերջը այս փչացած աղջկայ մայրը գտնում է նրան Մէգի շնորհիւ, վերջինիս հայրն էլ վերադառնում է և բոլորը ազատւում են նեղութիւնից։

Մանաւանդ Մէգի միամիտ արտայայտութիւնները ու վերերմունքը հիանալի տպաւորութիւն է գործում։

133. *Քար սիրտ Վիլհ. Հուֆի, թարգմ. օր. Շ. Տ. Հ. Թ. Հ. Հ. Ը. 1899. 112 փոքդ. եր. գինը 25 կոպ.։*

Ածխագործ Պետրոս Մունկը ընկնում է չար ու բարի ոգիների՝ Միխելի և Թզուկի ձեռքը։ Նա Թզուկին չլսելով Միխէլից քար սիրտ է ստանում իրենի տեղ, անխիղճ մարդ դառնում ու թշուառանում է։ Վերջը Թզուկը նրան նորից երջան-

կացնում է, սովորեցնելով թէ ինչպէս պէտք է յետ առնել կենդանի բարի սիրտը։ Հէքիաթի ձեւովը նոր գրուածք է։

134. *Քրիստոնեայ ընտանիք։ Հեղ (?). Թարգմ. գերմ. Աղ. տէր Մարուքեանցի։ Երևան, 1876. 34 փոքրդ. եր.*

Եպոնիայի թագաւորը հրամայում է քրիստոնեայ Տիտոսին ընտանիքով կռապաշտութիւն ընդունել, բայց նա չի հաժանձայնում՝ չնայելով, սարսափելի սպառնալիքներին։ Այն ժամանակ թագաւորը հրամայում է իրար ետևից՝ երեք օր նրա երեք զաւակներին, որոնք ծնողների օրինակներին հետևելով արիասրտութեամբ մարտիրոսութեան են դիմում։ Թագաւորը նրանց անսասան հաւատը տեսնելով՝ ձեռք չի տալիս, պահում է ու վերջը զարմացած հօրը կենդանի մնացած զաւակներին ցոյց տալով՝ նրան վարձատրում է։

Թէև մանուկների բռնած դիրքը կարող էր անհաւատալի թուալ ընթերցողներին, սակայն ընդհանրապէս լաւ գրքոյկ է։

12—14 տարեկանների համար։

135 *Անմէղի տոպրակը, արևելեան զրոյց։ Թարգմ. Ե. Լալանեանցի։ 1881, գինը 10 կոպ.*

Տոպրակի մէջ հաւաքած զանազան պիտանի ու անպէտք իրերը նմանեցնում է նոյն օրինակ գիտութեանց։

Լաւ այլաբանութիւն է։

136. *Ասուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատաստանը շուտ չի անում։ Լ. Տոլստոյի։ Թարգմ. Մ. Ա. հրատ. Թ. հ. ը. 1891. 22 միջակ եր. գինը 7 կոպ.*

Մի անմեղ մարդ ուրիշի մարդասպանութեան համար Սիբիր է գնում, ծերանալուց յետոյ բանտում հանդիպում է իսկական մահապարտին, նրա խօսուածքից ճանաչում է, բայց և այնպէս նրա նեղ տեղն ընկած ժամանակը նրան բարութիւն է անում։ Վերջապէս այդ մարդասպանը գնում իշխանութեանը յայտնում է բանի էութիւնը, բայց շատ ուշ, որովհետև անմեղը չազատուած մեռնում է։ Շատ տպաւորիչ է։

137. *Գետնափորի երեխաները Վլադ. Կորոլենկոյի։ Թարգմ. ռուս. Թ. հ. Ֆ. ը. 1896. 78 միջակ եր. գինը 15 կոպ.*

Դատաւորի որդին ընկերանում է մուրացիկ գետնափորի զաւակների հետ, մտնում է նրանց դրութիւնը շարունակ օգնում է նրանց հօրից պատժելու վտանգը աչքն առած։ Հայրը տեղեկանալով այն ամենին, գովում, խրախուսում է նրան։

Թէև բաւականին տենդենցիոզ է, սակայն գեղարուեստական լինելով այդ կողմը այնքան էլ աչքի չէ ընկնում։

245. *Ջորջ Ստեփենսոն եւ նրա կենսագրութիւնը։ Աշխատ. Օդէսայի հայ ուսանողութիւն։ Թֆլս. 1890. գինը 1 ռ.*

Անշուշտ շատ հետաքրքրական է այս գիրքը, բայց այս հանճարաւոր հնարագէտի մեծ գիւտերն աւելի կ՚ապշեցնեն քան թէ կը խրախուսեն գեռահաս ընթերցողին. նրա տքնութիւնները հարեւանցի են նկարագրուած։

246. *Ռայնա Դէորգենայի ինքնակենսագրութիւնը։ Կրճատ. թարգմ. ռուս։ Մոսկւա, 1891.*

Մի վարժուհի պատմում է բուլղարների տանջանքի ու արբստաժրութեան մի միջնադէպ։

Տպաւորութիւնը թոյլ է։

247. *Ս. Սահակ Պարթեւ։ Արտատպ. «Լուսայից»։ Թֆլս. 1902, 42 մեծդ. եր. գինը 25 կոպ.*

Մեր պատմարաններից քաղուած նիւթի կոմպիլեացիա է։ Արժէ կարդալ։

248. *Սահակ Պարթեւ։ Կազմ. Ե. Թ. 1 պատկերով։ Հետ. Յվհ. Արամեանցի։ Պարգ. 1902. 24 մեջ. եր. գինը...*

Ամփոփ և մշակուած կենսագրութիւն է։

249. *Սոկրատէս։ Հեղ (?). Թարգմ. Թեկղի Ստեփանեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1889. 70 միջ. եր. գինը...*

Մեծ իմաստասէրի գործնական իմաստութիւնները զրուցատրաբար պարզաբանուած են ժողովրդի համար բաւականին յաջող կերպով։

Ընտիր է։

250. *Ստեփաննոս Պալասանեան, Ի. Յարութիւնեանի։ Թֆլս. 1895. 33 միջ. եր. գինը 25 կոպ.*

Պալասանեանի կեանքի ու գրական ուղղութեան համառօտ, բայց զգացուած նկարագրութիւնն է։

251. *Սեւ հացեր, հեղ (?). Թարգմ. օր. Ն. Աղանեանցի։*

Մի մեծատունի կեանքից է, որ բարեգործութիւններ էր անում առ ի ցոյց մարդկան։ Մի անգամ Գաբրիել հրեշտակապետը երևում է նրան երազի մէջ, բռնում է այդ արդարութեան կշիռքը և նրան ցոյց տալիս, թէ ինչպէս պէտք է գործէր, որպէս զի կշեռքի նժարը բարւոյ կողմը թեքուէր։ Այնուհետև միայն այս մեծատունը փոխում է իր կեանքի ընթացքը։

Տպաւորիչ է։

252. *Վարդագոյն ամպ Ժորժ Սանի։ Թարգմ. Ե. Լալաեանցի։ Թֆլս. 1882. 96 փքրդ. եր.*

Հեղինակը փոքրիկ աղջկան այլաբանօրէն հասկացնում

է, որ աշխատութիւնը կարող է մարդուս ազատ պահել կեանքի փոթորիկներից։

Թէև գեղեցիկ գրուածք է, գրաւիչ պատկերներ ունի, սակայն այդ փոքրիկի հարցասիրութեանն ու երևակայութեանը շատ ոյժ է վերագրուում։

Վերապահել աւելի հասունացած օրիորդներին։

253. *Վարքագրութիւն Յարութիւն Ամիրայի Պեզճեան, Մ. Պ.-ի. Թէոդոսիա, 1862.*

Այս ականաւոր հայ գործիչի օրինակելի կեանքից բաւականին հետաքրքրական դէպքեր են բերուած։

Արժէ կարդալ։

254. *Վերաղաւծած յանցաւորը Զ. Դիկկէնսի։ Թարգմ. Արշ. Եղիգարեանցի, Թֆլս, 1896։*

Այս թշուառ կեանքի սկիզբը ծանր, իսկ վերջը սարսափելի տպաւորութիւն է գործում։

255. *Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի։ Պատմական վէպ Խաչատուր Աբովեանցի։ Մոսկուա 1897. այլ գրուածքների հետ 537 մեծդ, եր. գինը...*

Շատ ընտիր է։

256. *Վիլհելմ Տէլլ Վ. Օսթրովսկու։ 2-րդ տպ., Սպրգ. 1904, 56 միջ. եր. գինը 10 կ.*

Պատմուած է բաւականին լաւ։ Արժէ կարդալ։

257. *Վիլհելմ Տէլլ Լամարթինի։ Թարգմ. Հ. Առաքելեանցի. №39 հրատ. «Աղբիւր»—«Տարազի»։ Թֆլս. 1891. 48 միջ. եր. գինը 15 կոպ.*

Շվեյցարեայի ազատութեան տպաւորիչ նկարագիրն է։ Թէլլի նշան առնելու տեսիլը ամբողջովին առնուած է Շիլլերից։ Տես, № 171. Շիլլերի Վիլհելմ Տէլլը։

258. *Վիշապ և այլ զրոյցներ Վ. Փափազեանցի։ Թֆլս. 1904. 32 փքրդ. եր. գինը 5 կոպ.*

1. «Վիշապը» կլանելով գիւղի կենսաբեր առուն՝ հետզհետէ ցամքեցրեց երկիրը։ Միայն մի խենթ համարձակուեց նրա վրայ գնալ, բայց իզուր, որովհետև համագիւղացիք ծաղրեցին նրան ու սարսափահար եղան։ Վերջը մի այլ հսկայի էր վերապահուած հրէշին ընկճելը։ 2. «Կորսուած արդարութիւն» զրոյցի մէջ պատմուում է, որ արդարութիւնը երկրից վերացաւ և ոչ ուժով ոչ էլ հարստութեամբ կարողացան մարդիկ ձեռք ձգել այն։ Վերջը միայն թափուող արցունքներից բողոք բարձցաւ և սա արդարութիւնը վերադարձրեց։ 3. «Ըմբոստի մահը» զրոյցի մէջ մի նոր ծառ հեռանալով իրան շրջապատող

ճահճային ծառերից՝ ու բոյսերից՝ վճռում է սարը բարձրանալ, ազատ ապրել, բայց պատժւում է հողմերից ու կարկտից։

Այս վերջին զրոյցը անբնական բան է և այդ պատճառով միւս երկուսի արժէքը չունի։

259. *Ռաֆֆի, նրա կեանքը և գրական գործունէութիւնը։ (Համառօտ հանրամատչելի տեսութիւն)։ Յարութ. Եսայեանի։ Թֆլս. 1903. 24 փքրդ. եր. գինը 10 կոպ.*

Բաւականին լաւ մշակուած, ամփոփ կենսագրութիւն է։

Արժէ կարդալ։

260. *Փայտաշէն խրճիթից մինչեւ ապիտակ տունը։ Փոխադր. Ն. Աւետիքեանի։ Հեղ (?) 1884. 130 մեծդ. եր։*

Անգլիական ու Ամերիկական միւս երեւելի անձերի պէս Ջորջ Հարֆիլդն էլ ապշեցնում է իր արտաքոյ կարգի ընդունակութիւններով, տոկունութեամբ ու անձնուիրութեամբ։ Շատ զարմանալի բան է, որ Հ. իր 11 տարեկան հասակից եղբօր հետ վար ու ցանքով են պարապելիս եղել։ Հ. աշակերտ ժամանակը արհեստով էր իր ապրուստը հայթայթում։

Բաւականին լաւ փոխադրութիւն է։ Տպաւորութիւնը գեղեցիկ։

261. *Փարոսի վրայ Հ. Սենկեվիչի. Թարգմ. ռուս. Մոսկուա, 1892. 44 միջ. եր. գինը 10 կոպ.*

Շատ ազգերի ազատութեան պատերազմներին անձնուիրութեամբ մասնակցած և Ամերիկայում վերարտնակուած մի ծերունի լեհացու հայրենասիրական զգացմունքների վերատին բորբոքման խանդալից նկարագրութիւնն է։

262. *Փոքրիկ թմբկահարը, զրոյց Էդմօդ դէ Ամիչիսի։ Թարգմ (?). Թֆլս. 1899. 14 միջ. եր. գինդ 3 կոպ.*

Աւստրո—իտալական պատերազմից մի էպէզոդ է։ Տասնուչորս տարեկան փոքրիկ թմբկահարը մեծ վտանգի ենթարկուելով ու վերք ստանալով շարունակում է՝ առանց բոպէ կորցնելու՝ փաղել հայրենի պաշարուած զօրքը վտանգից փրկելու համար և յաջողութեամբ պսակում է այս փոքրիկ հայրենասէրի մեծագործութիւնը։

Խոր է տպաւորութիւնը։

263. *Օրլէանի կոյսը։ Բնագրից ամփոփից Ս. Թառայեան Թֆլս. 1901. 50 փքրդ. եր.*

Բնագրից թարգմանուած հատուածներն ու փոխադրուածները խառն են։ Դէշ չէ այս ձևը։ Հետաքրքրութեամբ կը կարդացուի։

II

Բնապատկան, բնագիտական եւ առողջապահական գրուածքներ։

6—8 տարեկանների համար։

264. *Ռուբէնի զբաղմունքը։ Բօտրօմի։ Մասն Ա. Թարգմ. ռուս. Պտր. 1904. 82 փքրդ. եր. գինը 25 կոպ.*

Փոքրիկ պատկերազարդ նկարագրութիւններ են ընտանի ու մասամբ վայրենի կենդանիների կեանքի ու կազմուածքների։ Սկիզբը հետաքրքրական կը լինի վեց տարեկանների համար, մէջերքից՝ 7—8 տարեկանների համար։

7—10 տարեկանների համար։

265. *Ջուր Զ. Գրիգորեանցի։ 1893. գինը 35 կոպ.*

Տասը տարեկաններից զարգացածները կարող են հետաքրքրուել ու հասկանալ ջրի կրած ֆիզիքական փոփոխութիւնները և այդ երեւոյթներին վերաբերեալ փորձերը։

Արժէ կարդալ։

10—12 տարեկաննկրի համար։

266. *Աներեւոյթ հողագործ Զ. Դարվինի։ Գինը 7 կոպ.*

Գրաւիչ եղանակով ցոյց է տրուած անձրեւի ճիճուի մեծ դերը հողի արգաւանդութեան համար։

267. *Անձրեւ ու ձիւն Ժիվատովսկու։ Թարգմ. Ռ. Մ. Մ. Պտրգ. 1896. գինը 10 կոպ.*

Հետաքրքրական է, բայց նիւթի մշակումը անկատար է։

268. *Երկրաշարժ եւ հրաբղխային լեռներ Լունկեվիչի։ Թարգմ. Գիւլնազարեանցի։ 1897. գինը 15 կոպ.*

Ամբողջովին հետաքրքրութեամբ կը կարդացուի։

269. *Զարմանալի որդ Ս. Կուզնեցովայի։ Թարգմ. օր. Ն. Ղուլանեանցի։ Թֆլս. 1896. 29 միջ. եր. պատկերազարդ։ Գինը 10 կոպ.*

Շերամի կազմուածքի, զարգացման ու կեանքի այլ երեւոյթները նկարագրուած են հետաքրքրական ձեւով։

Արժէ կարդալ։

270. *Ընտանի կենդանիներ Ա. Զիլինկարեանցի և Տ, Ռաշմաճեանցի։ Ալքսնդրպլ. 1897. գինը 5 կոպ.*

Այս կենդանիների մասին պատմածները ոչ այնքան սկզբները, որքան մէջերին ու վերջերը հետաքրքրական են դառնում։

271. *Թուղթն ու հին գրքեր։ Թարգմ. Տ. Կոստանեանցի։ Հեղ (?) Թֆլս. 1894. 38 փքրդ. եր. գինը 5 կոպ.*

Իսկապէս թուղթ շինելու մասին միայն 5 եր. է գրուած։ Մնացածը նշանագրերի, պապիրոսի, պերգամենտի մասին է։ Գէշ չէ։

272. *Մագնիս Ի. Վօրօնովայի—Նուէր մանուկներին։ Թրգմ. ռուս. Թֆլս. 1901. 42 մեծդ. եր. գինը 12 կոպ.*

Մագնիսի մասին իսկապէս քիչ խօսք կայ։ Աւելի պատմւում է երկու աշակերտների թշնամական յարաբերութեանց մասին և ապա բերեկամանալու, երբ մինը գտնում է միւսի կորած մագնիսը։

Ոչ բէլլետրիստական է և ոչ էլ բուն բնագիտական։ Արժէք չունի։

273. *Մեղուներ Ա. Զիլինկարեանցի և Տ. Ռաշմաճեանցի։ Ալքսնդրպլ. 1898. գինը 10 կոպ.*

Սկզբից մինչև վերջը մեծ ուշադրութեամբ կը կարդացուի։

274. *Ոգնիներ Կուկլեն'ի—նուէր մանուկներին։ Թարգմ. ռուս. Թֆլիս. 1901. 24 մեծդ. եր. գինը 8 կոպ.*

Ոգնիների կեանքից պատկերազարդ նկարագրութիւն է։ Պատկերները յաջող են։ Գէշ չէ։

275. *Տարերք բնական գիտութեանց Հեռքսլի։ Թարգմ. Ի. Յարութիւնեանցի։ Թֆլս. 1894.*

Ամենահետաքրքրական երեւոյթներն ընտրովի բացատրում է գեղեցիկ գրաւիչ մեթոդով։

276. *Տարութիւն և օդ Ռուբէն Մելիք-Մուսեանցի։ Թարգմ. Պտրգ. 1895. 40 եր, պատկերազարդ. գինը 12 կոպ.*

Հետաքրքրական է, արժէ կարդալ։

277. *Դիտում Երմոլովայի։ Թրգմ. ռուս. Թֆլս 1898. 81 եր. գինը 20 կոպ. «Նուէր մանուկներին»։*

Կենդանիների կեանքից զանազան հատուածներ են արժէքաւոր կամ միջակ արժէքի։ Պատկերները գէշ չեն։

278. *Ջրի կաթիլի պատմութիւնը Դրուբէի։ Հրատ. Մոսկւայի Հ. Ո. Գ. Ը. 1881. Երկու այլ գրքոյկների հետ 31 եր.*

Ջրի կրած փոփոխութիւնների նկարագրութիւնն հետաքրքրական է։

12—14 տարեկանների համար։

279. *Արեգակի եւ լուսնի խաւարումը։* Վ. Լունկևիչի. 3 պատկերով։ Թֆլս, 1892. 32 միջ. եր. գինը 5 կոպ.

Արեգակի և լուսնի խաւարման, երկրի, երկնային մարմինների ծագման մասին համառօտ տեղեկութիւններ են։

Արժէ կարդալ։

280. *Աստղալից երկինք եւ երկրագունդ* Մակ. Զաշկեանի։ Թֆլս, 1891. 16 միջ. եր. գինը...

Կարող է հետաքրքրութիւն շարժել։

281. *Բնութեան երկու մեծ թագաւորութիւնները* Վ. Լունկևիչի։ Փոխդր. Յակոբ քհանայ Սառիկեան։ Սպրգ. 1903, 82 միջ, եր., պատկերազարդ։ Գինը 30 կոպ.

Կենդանական ու բուսական աշխարհների նշանաւոր ներկայացուցիչների հարեանցի նկարագրութիւն է, մի ընդհանուր պատկեր։ Այսպիսի գրուածքները խոր տպաւորութիւն չեն թողնի։

282. *Բոյսերի կեանքը* ըստ Ֆիգէի և Տիմիրեազևի։ Սպրգ. 1897. գինը 8 կոպ.

Բոյսերի արմատի, բունի (ցօղունի) և տերևի ընախօսութիւնն է։ Հետաքրքրութիւն կարող է շարժել, բայց դժուար բառերը ընթերցումը դժուարացնում են։

283. *Երկրի եւ երկնքի մասին* Վ. Լունկևիչի։ Ռուս. թրգմ. Կ. Գ. Թֆլս. 1897։ Միջ. 74 եր, պատկերազարդ. գինը 10 կ. Թ. Հ. Հ Ը.

Երկնային գլխաւոր մարմիններին վերաբերեալ ամենակարևոր տեղեկութիւններ են հանրամատչելի եղանակով և պատկերներով բացատրուած։

Ընտիր է։

284. *Էլէկտրականութիւն։* Կազմեցին Ա. Զիլինկարեան և Տ. Ռաշմաճեան։ Ալքսնդրպլ. 1902. 77 միջ. եր. գինը 15 կոպ. «Ժողովրդական գրադարան»։

Բաւականին յաջողուած հանրամատչելի ընագիտութիւն է։ Մինչև վերջը հետաքրքրութեամբ կը կարդացուի։

286. *Ի՞նչ է կայծակը...*
32 միջ. եր. պատկերազարդ.

Հանրամատչելի բացատրութիւն է էլեքտրականութեան։ Հետաքրքրութեամբ կը կարդացուի։

287. *Ծաղիկ եւ պտուղ* Բէրնշտայնի։ Թարգմ. Ռ. Մելիք-Ադամեանցի։ Սպրգ. 1896. պատկերազարդ. գինը 8 կոպ.

Բովանդակութիւնը բաւականին հետաքրքրական է։ Թարգմանչի յաւելուածն էլ լաւ է։

288. *Ծխախոտը եւ իր վնասները* Կ. Մելիք-Շահնազարեանց։ Շուշի, 1888. 49 փքրդ. եր. գինը 10 կոպ.

Հանրամատչելի եղանակով կազմուած բաւականին հետաքրքրական գրքոյկ է։ Արժէ կարդալ, մանաւանդ ծխող կամ ծխելու միտում ունեցող պատանիներին հարկաւոր է։

289։ *Կեանքը ծովերի խորքերում* Վ. Լունկևիչի։ Թրգմ։ Ստ. Մալխասեանցի։ 50 պատկերով, Թֆլս. 1903. Հրատ. Գ. Գալստեանցի։ 96 միջ. եր. գինը 30 կոպ,

Ծովային կենդանիների ու բոյսերի աշխարհից ամենագրաւիչ բաներն են նկարագրուած։ Ընտիր է։

290. *Կենդանիների ընազդն ու հասկացողութիւնը* Ա. Զիլինկարեանի ու Տ. Ռաշմաճեանցի։ Ալքսնդրպլ. 1897. գինը 8 կոպ.

Լաւ ընտրութեամբ կազմուած նիւթեր են։

291. *Կենդանիների աշխարհում* Վ. Լունկևիչի։ Թ. Հ. Հ. Ը. 1898, պատկերազարդ, գինը 30 կոպ.

Հետաքրքրական երևոյթների նկարագրութիւն է, բայց թուցիկ։

292. *Հանրամատչելի ընախօսութիւն* Վ. Լունկևիչի։ Թրգմ. Կոստ. Գիւլնազարեանց։ Թ. Հ. Հ. Ը. 1893. 362 միջ. եր. գինը 1 ռ.

Բնախօսութեան մասին գրքեր կարդացած ընթերցողն էլ այս գրքում կը գտնի շատ հետաքրքրական նոր բաներ։ Խնամքով մշակուած է։ Շատ արժէ կարդալ։

293. *Մարմնամարզութիւն* 25 պատկերով բժ. Ա. Բուդուղեանցի։ 51 միջ. եր. գինը 20 կոպ.

Կարևոր է ոչ միայն կարդալ, այլ ըմբռնել ու գործադրել։

294. *Մեղուներ* Լ. Լ. Լանգըստրոմի։ Թրգմ. ռուս. Զոկ։ Թֆլս. 1898. 80 միջ. եր. պատկերազարդ։

Մեղուների կեանքից վեր առած նիւթը իր մանրամասնութիւններով շատ հետաքրքրական է։

295. Ո՞վ է հնարել երկաթուղին։ Կազմ. Եր. Ղազարեանց։ Թֆլս. 1888. 24 միջ. եր. գինը...

Խօսում է Ստէֆենսոնի աւելի պատանեկութեան՝ քան թէ նրա արած այս մեծ գիւտի մասին։ Հետաքրքրութիւն կարող է շարժել։

14—16 տարեկանների համար։

296. Առողջապահական զրոյցներ բժ. Ա. Բուդուղեանցի։ Սպրդ. 1897. գինը 15 կոպ.

Հետաքրքրական բաներ կան մէջը, բայց այս գրուածքը հեղինակի լաւ մշակուած աշխատութիւններից չէ։

297. Գալիլէյ նրա կեանքը և գիտական գործունէութիւնը։ կազմ. Հ. Առաքելեանց։ Թֆլս. Թ. Հ. Հ. Ը. 1899. փքրդ. 102 եր. գինը 25 կոպ.

Գալիլէյի շատ հրահանգիչ կեանքն ու գիտական գործունէութիւնը նկարագրուած է հետաքրքրական եղանակով։

Շատ ընտիր է։

298. Դողէրոցք կամ մալարիա. նկարներով։ բժ. Վ. Արծրունու։ Թֆլս, 1902. 31 միջ. եր. գինը 5 կոպ. Զրոյցներ № 5.

Ինչ որ կարևոր գիտնալիք բաներ կան այս մասին, մատչելի եղանակով նկարագրուած է։

299. Թոքախտ կամ բարակացաւ, Վ. Արծ։ Զրոյցներ № 4. Թֆլս. 1902. 48 միջ. եր. պատկերազարդ. գինը 10 կոպ.

Ուշադրութեան արժանի գրուածք է։

300. Ինֆլուէնցա կամ՝ նոր ցաւ բժ. Վ. Արծրունու։ բժ. զրոյցներ № 6. Թֆլս, 1902. 16 փքրդ. եր. գինը 3 կոպ.

Ինֆլուէնցիայի, սրանից առաջացած հիւանդութեանց և հիւանդի պահպանութեան վերաբերեալ գրուածք է։

Արժէ կարդալ։

301. Ծաղկահատութեան հնարող Դր. Ջեննէր։ Հեղ (?) թրգմ. տիկ. Մարգարիտի։ Մոսկուա, 1890.

Բաւականին հետաքրքրական են այս գիւտի պատմութիւնն ու վերջնական հնարիչի կենսագրերը։

302. Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն 100 նկարով կազմեց Կամիլ Ֆլամարիոն. Թրգմ. Տ. Յովհաննիսեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1893. 353 միջ. եր. գինը 1 ռ.

Բաւականին պարզ ու ամփոփ գաղափար է տալիս տիեզերական մեծ մարմինների, նրանց յատկութեանց ու ընթացքների մասին։

Ընտիր է։

303. Հիպնոտիզմ բժ. Վ. Արծրունու։ 1892 և 1895 ա և բ. մասերը։ 202 միջ. եր. գինը 25 կոպ.

Իր տեսակում այս միակ հաւաքածուն մեր գրականութեան մէջ՝ հետաքրքրութեամբ կարդացւում է։

304. Հրաշալի դար։ 19 դարի գրական ու բացասական կողմերը։ Ըստ լէս պրոֆ. Ա. Ռ. Թրգմ. Ս. Լիսիցեանցի։ «Մուրճից» արտատպուած Թֆլս. 1903. գինը 80 կ.

Ամբողջ դարի նշանաւոր գիւտերի ամփոփ ու շատ հետաքրքրական նկարագրութիւնն է։

305. Հոգին և ուղեղը Դ. Է. Ալբէրտի։ Թրգմ. բժ. ուս. Արշ. Մնացականեանցի։ Մոսկուա, 1899. մեծդ. եր. գինը 15 կոպ.

Ուղեղի զանազան մասերի գործածութիւնները (ֆունկցիա) հոգեկան կեանքի համար՝ համոզիչ ու պարզ կերպով նկարագրուած են։

Շատ հետաքրքրական գրուածք է։

306. Մի խմիր բժ. Վ. Արծրունու։ Զրոյցների № 1. Թֆլս. 1901. 38 միջ. եր.

Շատ ազդու և վերին աստիճանի համոզիչ գրուածք է։

307. Մի ծխիր բժ, Վ. Արծրունու։ Զրոյցների № 7. Թֆլս. 1902. 31 փքրդ. եր. գինը 5 կոպ.

Շատ համոզիչ ու ազդու գրուածք է։

308. Մի կտոր հացի պատմութիւն Մոսէի։ Թարգմ. Հ. Ղուկասեանցի։ Թֆլս. 1871. 234 միջ. եր. գինը...

Թէև նոր գիրք չէ, բայց և այնպէս իբրև հանրամատչելի գրուածք հրապարակի վրայ մնալու ամէն իրաւունք ունի։ Ընդարձակօրէն խօսւում է բնախօսական երևոյթների և սրանց առնչակից բնագիտական ու այլ երևոյթների մասին։

Հարցասիրութիւն զարգացնելու զգալի ոյժ ունի։

309. Ոգուից ըմպելիքների վնասակարութիւնը։ Գրեց Կոստ. Մելիք-Շաշնազարեանց։ Շուշի 1889. 30 միջ. եր. գինը 10 կոպ.

Հանրամատչելի ձևով կազմուած բաւականին հետաքրքրական գրքոյկ է։ Արժէ կարդալ։

310. Ոյժեր Ա. Զիլինկարեանցի և Տ. Ռաշմաճեանցի։ Ալքսանդրպոլ. 1897. գինը 5 կոպ.

Վեր առած վերացական նիւթերի մշակումը հաւասարապէս չէ յաջողուել, բայց և այնպէս՝ արժէ կարդալ։

311. Վարակիչ հիւանդութիւններ և նրանց թոյնը բժ.

Վ. Արծրունու։ Զրոյցների № 3. պատկերազարդ։ 82 փքրդ. եր. գինը 15 կոպ. Թֆլս. 1902.

Մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի։

312. Քուն և երազ բժ. Ա. Բուդուղեանցի։ Սպբդ. 1903. 110 միջ. եր. գինը 25 կոպ.

Հանրամատչելի կերպով բացատրուած է երազի և քունի էութիւնը մեր կեանքի համար։

Հետաքրքրութեամբ կը կարդացուի։

313 Օգտակար եւ վնասակար մեկրոբներ ու օդի փոշին բժ. Գ. Սարգսեանցի։ Նկարներով։ Թֆլս. 1898. փքրդ. 75 եր. գինը 15 կոպ.

Միկրոբների մեծ դերը օրգանական աշխարհում նկարագրուած է հետաքրքրական կողմից։ Ափսոս որ լեզուն ծանր է։

16 ու աւելի տարիք ունեցող ընթերցողների համար։

(Խառն նիւթեր)։

314. Աղջիկ, առողջապահական ու բարոյագիտական էտիւդ բժ. Վ, Արծրունու։ Թֆլս, 1903. 224 միջ. եր. գինը 60 կոպ.

Շատ յանձնարարելի գրուածք է բացի ծնողներից նաև դեռահաս օրիորդներին։

315. Դատաստանի օրը Կորոլէնկո՛ի։ Թարգմ. Մուշէ Վարգապետի, Թֆլս. 1902. 72 մեծդ. եր. գինը 40 կոպ.

Գեղջուկներն ակներև տեսնում են, թէ ինչպէս ոչ միայն հրէան, այլ և քրիստոնեան պատրաստ է հարստահարել և աւելի էլ, երբ սանձը ձեռքն է ընկնում։

Հումորիստական տպաւորիչ բովանդակութեամբ գրուածք է։

316. Երեք մահ Լ. Ն. Տոլստոյի։ Թրգմ. Ա. Ա. Ալքսանդրպոլ. 1993. 28 եր.

Նկարագրում է թոքախտաւոր տիրուհու, կառապանի և փայտհատի կացնի ծայրից ընկնող ծառի մահը։

Սրտառուչ է։

317. Ի՞նչ է երջանկութիւնը ըստ։ Լ. Տոլստոյի, երկրտպ. Վղշպտ. 1902. 24. եր.

Խօսւում է երջանկութեան աղբիւրների մասին։

Արժէ կարդալ։

318. Ի՞նչպէս պահպանուել խոլերայից։ Հեղ ( ). Թրգմ. ռուս. ժողովրդի գրքրն № 9. փքրդ. 23 եր. գինը 5 կոպ.

Խօսւում է խոլերայի պատմութեան, հութեան, ծագման, տարածման մասին և այն մասին թէ ով է աւելի տրամադրուած լինում խոլերայով հիւանդանալու. բացատրում է թէ ինչ

միջոցներով կարելի է պահպանուիլ հիւանդանալուց և ինչ միջոցներ կարելի է գործ դնել հիւանդութեան ժամանակ։

Հետաքրքրական է։

319. Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն բժ. Ա. Բուդուղեանցի։ Սպբդ. 1901. 72 միջ. եր. գինը 15 կոպ.

Այն կարծիքն է յայտնում հեղինակը, որ ժառանգական յատկութիւնները դաստիարակութեան շնորհիւ կարելի է քիչ թէ շատ փոփոխութեան ենթարկել։ Պահանջում է ներդաշնակ կրթութիւն։

Արժէ կարդալ։

320. Խժրողներ պրոֆ, Բողդանովի, Թրգմ. Լ. Մելիք-Ադամեանցի, Թֆլս. 1897. գինը 50 կոպ.

Հետաքրքրական բնապատմական նիւթեր են, բաւականին լաւ գրուածք է։

321. Կատիք եւ բարեգործութիւն բժ, Ա. Բուդուղեանցի։ Ն. Նախիջևան, 1901. 85 միջ. եր. գինը 15 կոպ.

Խօսում է աղքատութեան ու չքաւորութեան մասին և այն մասին, թէ ինչպէս պէտք է այդ չարիքների առաջն առնել, ինչպէս սահմանափակել նրանց աշխատանոցների և անկելանոցների միջոցով։

322. Ուրանիա Կամիլ Ֆլամարիոնի։ Աստղագիտական վէպ. Թրգմ. Ֆրնս. Հ. Առաքելեանցի։ Թֆլս, 1900. 376 միջ. եր. գինը...

Սա մի հիանալի գիրք է տիեզերական մեծ խնդիրներով հետաքրքրուող զարգացած ընթերցողի համար։ Ներկայ ու հանդերձեալ կեանքին, նիւթին, հոգուն, շարժողութեանը, ձգողութեանը կայն վերաբերեալ խնդիրների մասին, հոգիների փոխադարձ ազդեցութեանց մասին, հեռաւորութեանց մէջ՝ խօսում է հռչակաւոր հեղինակը վիպական գրաւիչ եղանակով։

323. Ուղեւորութիւն յԱյրարատ կամ լիշատակարան տպաւորութեանց ճանապարհին յԱյրարատ. Դ։ Լ. Մորդովցիևի։ Թրգմ. Հ. Քերովբէ վ. Քուշնարեանի։ Վնտկ. Ս. Ղազար. 1895. 181 միջ. եր. գինը 75 կոպ.

Ուղևորը լուսաւոր մարդուն յատուկ պէքով դիտում է բնութիւնն ու մարդիկ և ցաւօք ու պատկառանքով յիշատակում այս երկրի անցեալը։ Ամեն բան նկարագրւում է իր իսկութեամբ։

Մինչև վերջը հետաքրքրութեամբ կարդացւում է։

324. Ուղեւորութիւն Ձերնօգորեայում Պիէր Լոտի։ Թրգմ.

Հ. Տէր Աւետիքեանցի։ Թֆլս. 1893. 38 մեծդ. եր. գինը 10 կոպ.

Երկրի ու ժողովրդի հետաքրքրական նկարագրութիւն է։ Արժէ կարդալ։

325. Զարլզ Դարվին Կ. Տիմերեազեվի։ Թրգմ. Ս. Տէր Գասպարեանցի, Բագու, 1900. 65 միջ. եր. գինը 26 կոպ.

Ընտիր դասախօսութիւն է այս մեծ մարդու գիտական գործունէութեան ու կեանքի մասին։

326. Պասկալ, նրա կեանքը և գիտական գործունէութիւնը։ Թրգմ. Բ. Բաղտ. Թ. Հ. Հ. Ը. 1899. միջ. 96 եր. գինը...

Այս ականաւոր մարդու կեանքի նշանաւոր երևոյթները, որ արտայայտել է նա իբրև մարդ ու գիտնական, հրահանգիչ բաներ շատ ունի, թէև հիւանդագին, անորմալ կողմեր էլ ունի այդ կեանքը։

Զարգացողների համար ուշագրաւ ընթերցանութեան գրուածք է։

327. Սասուն Ա. Քալանթարի։ Աշխարագրական քարտէզով։ Երր. տպ. Թֆլս. 2895. 62 միջ. եր գինը 20 կոպ.

Երկրի, ժողովրդի անցեալ ու ներկայ կեանքի բաւական բազմակողմանի և ուշագրաւ նկարագրութիւնն է։

Շատ արժէ կարդալ։

328. Ստամոքսի կատարը (Ստամոքսի մի քանի հիւանդութիւնները) բժ. Վ. Օրլովսկու, թրգմ. բժ. Ա. Բուդուղեանցի։ 77 միջ. եր. գինը 20 կոպ։ սպրդ. 1903.

Շատ հետաքրքրական գրուածք է լաւ սիստեմով կազմուած։

329. Վարակիչ հիւանդութիւններ, սոցա, յատկութիւնները, ծագման ու տարածման եղանակները և նախապաշտպանողական միջոցները։ Հաւաքեց բժ. Գ. տէր Գրիգորեանց։ Վաղրշպտ. 1880. 53 մեծդ. եր. գինը...

Խօսում է ծաղկի, կարմրուկի, սկարլատինի, բծաւոր տիֆի, անդրազարձ տենդի, դիֆտերիտի, ընդհատ տենդի, խոլերայի, դեղին տենդի, որովայնատիֆի և ժանդախտի մասին։ Այս գրուածքի հիմնական տեսութիւնը տարբեր է սովորականից. «ոչ դեզինֆեկցիան ու առողջներին հեռացնելը և ոչ էլ կարանտինը չեն կարող ազատել մարդուս խոլերայից, տիֆից ու ժանտախտից... այլ գեանաբուժութիւնը», գետինը, նրա խորքերի մաքուր պահելը։

Իբրև առանձին տեսութիւն հետաքրքրական է։

330. Վերելք յԱյրարատ գրեց Ճէյմս Պրայս, անգամ

Անգլիոյ հասարակաց խորհրդարանի։ Թրգմ. Գ. Յ. Բաբազեանի։ Պոլիս, 1890. 109 միջ. եր.

Հայասէր անգլիացու այս արկածալի նկարագրութիւնը մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի։ Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այս երջանիկ ուղևորը Արարատի գագաթին հասած ժամանակը ամբողջ անգին շրջակայքում այնպիսի ջինջ հորիզոն է ունեցել, որ հեռադիտակով կարողացել է «ճշտիւ» դիտել «Տաւրոս լերանց ծայրագոյն շղթաները, Պինկէոլ Տաղի, Սիբան տաղի հրաբխային մեծ լեռը, Ատրպատականի վրայէն կասպից ծովու վրայ նայող Սավալան Տաղը... Քրդաստանի և Ասորոց լեռները»։

331. Դէպի Արարատ ուղեւորութիւնը։ Բնութեան նկարագրութիւններ։ Արշալոյս Մխիթարեանցի. Հանրամատչելի գրադարան VII Հ. Առաքելեանցի։ Թֆլս. 1904. փքրդ. 159 եր. գինը 40 կ.

Հայրենասիրական բուռն զգացմունքներով տոգորուած նկարագրութիւն է բնութեան, որի վեհութիւնը Արարատի պէս հրսկայ լեռան գագաթից անմիջական կերպով զգալի է դառնում բոլոր դիտողներին։

332. Վիրաբուժական հիւանդութիւն եւ օպերացիա բժ. Ա. Բուդուղեանցի. 29 միջ. եր. գիրը 6 կոպ. Սպրդ. 1902.

Խօսում է անդամահատութեան ենթակայ հիւանդութեանց և առանց ուշացնելու օպերացիա անել տալու անհրաժեշտութեան մասին։

Շատ հաժոդիչ է։

333. Օրը եւ կեանքը Գ. դը. Վարինյի։ Թրգմ. ռուս. Ե. Տէր Յակոբեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1898. 68 փքրդ. եր. գինը 10 կոպ.

Մի շատ ընտիր գրուածք է օդի և նրա մեծ դերի մասին օրգանական կեանքում։ Շատ արժէ կարդալ։

334. Որսի գնդակ Օստրովսկու ժողովածուից։ Թարգմ. ա. Տ. Կոստանեանցի, Թֆլս, 1894, 88 եր. գին 5 կոպ.

Մի մարդ պատմում է, թէ ինչպէս ինքը երեխայ ժամանակ հօր հետ որսի գնալիս շտապում է, նրա ոտը վիրաւորում է ու կորելու պատճառ դառնում, բայց որ ինքը շատ էլ մեղաւոր չէր եղել. հայրը հրացան արձակելու կերպը իրան սովորեցրած չէր եղել։ Պատմում է այդ երեխայի հոգեկան տանջանքը և հօր հաժերութիւնը, որ մինչև անգամ չկշտամբեց նրան։ Մորալը՝ հաժերողութիւն։

Արժէք չունի։

335. Աշխէն ու Մարգարիտը Օ. Ռօզովայի։—Նուէր Մա-

նուկներին—թարգմ. ռուս. Թֆլս, 1897, 46 մեջ. եր. գին 10 կոպ. 10—12 տարեկանների համար։

Հարուստի աղջիկ Մարգարիտը աղքատի աղջկան, Աշխէնին, թէ ծանր աշխատութեան մէջ է օգնում և թէ հիւանդութեան ժամանակ ամեն կերպ խնամում է նրան։

Տպաւորութիւն գործում է։

336. Գիւղական աղքատ Գիւի դը Մոպասանի, թարգմ. օր. Մ. Մալումեանի։ Թֆլս, 1891. հեռևեալ գրքոյկի հետ գինը 5 կոպ. 14—16 և աւելի հասակ ունեցողների համար։

Երկու ոտքով ֆնասուած թշուառ աղքատը մի օր չորս գիւղ է անցնում՝ առանց մի կտոր հաց ողորմութիւն ստանալու, այնպէս որ խեղճը հարկադրւում է ճանապարհին մի հաւ գողանալ։ Այս բանի համար նրան բռնում, սաստիկ ծեծում են ու բանտարկում, ուր նա թէ ծեծից ու թէ քաղցածութեանը այլ ևս չդիմանալով մեռնում է։

Շատ խոր է տպաւորութիւնը։

337. Գիւղական ջութակահար Գիւի դը Մոպասանի, տ. Նախընթացը։ 12—14 և աւելի հասակ ունեցողների համար.

Մի գերմանացի ուրախ սրտի տէր ու բարեսիրտ ջութակահարի կեանքն է նկարագրւում, որ մինչև իր կեանքի վերջին օրը շնորհիւ իր ջութակին ուրիշներին ու իրան շարունակ երջանիկ ժամեր անցկացնելու առիթներ էր ներկայացնում։ Գեղեցիկ տպաւորութիւն է գործում։

338. Առաջին վիշտ։ Նուէր մանուկներին։ Օ. Ի. Շմիդտի։ Թարգմ, ռուսերէնից։ Թիֆլիս, 1896. 64 միջակ եր. գինը 10 կոպ։

Նախ նկարագրւում է 5 տարեկան մանուկների կեանքի երջանիկ օրերը, եթէ կարելի է այսպէս անուանել խոհարարուհու այդ խչճուկ աղջկայ այն օրերը, երբ տանտիկինը շնորհանելով՝ երբեմն նրան թողնում էր ներս իր ազնուազարմ զաւակների հետ խաղալու համար։ Վայ այն երջանկութեան, երբ խեղճուկին մերթ առ մերթ նա զգալ էր տալիս, որ այդ իր տեղը չէ... Ապա նկարագրւում է այս փոքրիկի վիշտը մօր հիւանդութիւնից ու մահից առաջացած։ Մահը այսպիսի փոքրիկների համար անհասկանալի բան է։ Եւ ըստ իս՝ լաւ կանէին հեղինակները, եթէ այդպիսի նիւթ ընտրէին իրանց փոքրիկ ընթերցողների համար։ Աժեն բոպէ զգում ես կարդալիս, որ կեղծ լարի հնչիւն ես լսում։

339. Գոնարիկը եւ Ատղիկը։ Նուէր մանուկներին։ Ա. Ն. Աննենսկայայի։ Թարգմ. ռուսերէնից։ Թֆլս. 1897. 60 միջակ

եր. գինը 10 կոպ. դուցէ 14—16 տարեկաններին հետաքրքիր է։

Հակադրւում են երկու 13 ու 14 տարեկան աղջիկներ։ Մէկը անհանդիստ է, կամակոր, բայց ուրիշին կարեկից, իսկ միւսը թէև այս պակասութիւնները չունի, սակայն անտարբեր է դէպի շրջապատողները։ Կարծես թէ հեղինակն ուզեցել է երկու տարբեր ընաւորութիւններ նկարագնել, բայց ոչ մէկից և ոչ միւսից մի այնպիսի բան դուրս չէ եկել, որ գոնէ դեռահաս ընթերցողները զրաւուէին, նրանց միտքը կամ զգացմունքը կենտրոնանալ կարողանար այս կարգացածների վրայ։

340. Առակներ բնական պատմութիւնից։ Նուէր մանուկներին, Վագների։ Թֆլիս. 1900. 29 մեծադիր եր. գինը 12 կոպ.։ 10—12 տարեկանների համար։

Այգեպան զատկի ճիճուն, զմուռը, վայրի ճագարները, չղջիկը, խորամանկ աղուէսը և այն հարցը թէ՝ «ինչո՞ւ են վերև թռչում սապնի փամփուշտները» կազմում եմ այս գրքոյկի բովանդակութիւնը։

Հեղինակը իրան յատուկ հմտութեամբ նկարագրում է պարզ ու գրաւիչ ձևով այս առարկաները։

341. «Անձնազոհ մանուկ։ Նուէր մանուկներին։ Օ. Բոգովայի։ Թարգմ. ռուսերէնից։ Թիֆլիս. 1905. 46 միջակ եր. գին 10 կ. 10—12 տարեկանների համար։

Անտառապահի մահից յետոյ նրա ընտանիքը ողորմութեան կարօտ է մնում։ Նրա փոքր որդիներից մէկը տեսնելով մարդկանց անտարբերութիւնը, վճռում է քաղաք երթալ, գործի լինել և ընտանիքին փող ուղարկել։ Այնտեղ լուցկեավաճառ է դառնում։ Մի անգամ լուցկի ծախելիս կատաղած շնից ազատում է մի հարուստի զաւակին, ինքը ծանր հիւանդանում է և ապա առողջանալով այդ հարուստը նրան ուսում է տալիս, նրա ընտանիքին՝ նիւթական ապահովութիւն և բոլորին էլ երջանկացնում է։

Տպաւորութիւն գործում է։

342. Արցունք, Դպրոցական կեանքից պատմուածք (պատկերներով) Ա. Ի. Կրասնեցկու։ Նուէր Մանուկներին։ Ազատ թարգմ. օր. Մ. Ս., Սրգ. 1907. 76 միջակ եր. գինը 15 կոպ. 12—14 տարեկանների համար։

Գիմնազիայի Դ. դասարանի աշակերտ Ֆոմինը խորթ մօր ու հօր շնորհիւ կեանքի դառնութեան բաժակը խմած մի երեխայ է։ Մի օր իր վրէժը մարդկանցից առնելու համար՝ սղոցում է ուսուցչի ամրիոնի աթոռի ոտը։ Դերմանական ծերունի բարեսիրտ ուսուցչի դասն է լինում. երբ նա նստել է ուզում,

սարսափելի կերպով վայր է ընկնում, ուշաթափւում է։ Ամբողջ դասարանը ցնցուած է բացի մէկի, չարագործ Ֆոմինից։ Ֆ. այդ չարիքը պատճառեց գերմ. Յովհաննէն ուսուցչին, որովհետև ասէկոսէների հիման վրայ այն գաղափարն էր կազմել սրա մասին որ սա ժլատ է, վաշխառու է։ Բայց յետոյ բանից դուրս եկաւ, որ նա էր արգելք եղել Ֆոմինին արտաքսելուն և նրա ինչպէս և ուրիշների ուսման վարձը գաղտնի վճարողն է եղել և այս պատճառով նոյնիսկ պարտքի մէջ ընկել։ Երբ Ֆ. իր ձեռքը պատահմամբ ընկած թղթի շնորհիւ ճանաչեց այդ առթիւ մարդուն, սաստիկ ցնցուեց և ուզեց լեռը ընկնել, խեղդուել, ընկերն ազատեց։

Անշուշտ խոր տպաւորութիւն կը գործէ աշակերտ ընթերողների վրայ։

343. *Բու Ռ. Սենտ-Իլերի։* Նուէր մանուկներին։ Թարգմ. ռուսերէնից։ Սրգ. 1903, 23 պատկերազարդ մեծ էր, գինը 12 կ. 8—10 տարեկանների համար։

Զար բուն ցերեկն ուզում է քնել հանգստանալ, որ գիշերը ուրիշ թռչունների բունները գողութեան երթայ, բայց մէկը միւսից յետոյ գալիս են թռչուններ, կենդանիներ ու նրա քունը խանգարում, վերջն էլ լաւ քցցում են նրան ու փախցնում։

Մանաւանդ գեղեցիկ ու արտայայտիչ պատկերների շնորհիւ տպաւորութիւն կը գործէ։

344. *Փոքրիկ Պարոյրի արկածները,* պատկերազարդ։ Ա. Դ. Զացեպինայի։ Նուէր մանուկներին։ Թարգմ. ռուսերէնից։ Թիֆլիս, 1904, 71 փոքր. եր, գինը 10 կոպէկ։

Փոքրիկ Պարոյրը կամայականութիւն է անում, տանեցիք պատժում են նրան, հիւր գնում։ Պ. նրանց ջգրու տանից փախչում է, գնում է ծառաստանը զբօսնելու, ճանապարհը կորցնում է, մի գիւղացի տղի ընկերանում։ Սրանք ժոլորուելով քաղաքից հեռանում են, սայլորդ գիւղացին փողի ակնկալութեամբ համաձայնում է նրանց իր գիւղը տանել, բայց կիսաճանապարհին չգիտես ինչու խեղճերին թողնում է անտառում, հեռանում։ Նրանք այնտեղ շատ տանջւում են, Պ. սաստիկ հիւանդանում է, վերջը մի կերպ ընկերը գտնում գիւղը, ազատւում են։ Պ. բժշկւում է, ընկերոջն էլ վարձատրում են, երկուսն էլ ուսում առնում, լաւ մարդիկ են դառնում։

Արժէր մի կամակորութեան համար այսքան խիստ պատիժ... շինծու է, շինծու։ Եւ շարլտնական։

345. *Ժամագրքի յիշողութիւնները է.* Շատրեանից ազատ թարգմ. Շուշանիկ Խաժակնեանի։ Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. 1905 թ., Թիֆլիզ։ Փոքրագիր 56 եր., գինը 8 կ., 14—16 ու աւելի հասակ ունեցողների համար։

1912 թ. Նապոլէօնեան անաւոր պատերազմի էպիզոդներից մէկն է, մի վերին աստիճանի ցնցող նկարագրութիւն մարդկային անպատմելի թշուառութեան։

Շատ արժէ կարդալ։

346. *Լեգենդաներ* Յովհ. Թումանեանցի։ Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. Թիֆլիզ, 1904 թ., 31 փքրդ. եր., գինը 15 կ. 10—12 և աւելի հասակ ունեցողների համար։

Այս «Հայ բանաստեղծներ» գեղեցիկ ժողովածուի մէջ առնուած են հեղինակի հետևեալ սիրուն լեգենդները. Շունն ու կատուն, Ախթամար, Անբախտ վաճառականներ, Անիծած հարսը, Արծիւն ու կաղնին, «Պողոս ու Պետրոս», Փարուանա և Լուսաւորչի կանթեղը։

347. *Մի պտոյտ Ճապոնեայում* իմ յուշերից ու տպաւորութիւններից, Հեղինէ Մելիք-Հայկազեանի։ Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ։ Թիֆլ. 1905. 192 փքրդ. եր. գինը 40 կ.

Այս գեղեցիկ գրքոյկը իր սիրուն բովանդակութեամբ ու գեղեցիկ պատկերներով իրաւունք ունի մեր ճամպորդական գրուածքների շարքում բարձր տեղ բռնելու։ Արիասիրտ օրիորդ ճամբորդը մի ընտիր գրքոյկ է նուիրել իր ազգին՝ մի չքնաղ ժողովրդի ու երկրի հմայիչ բովանդակութեամբ։ Որքան որ գրքեր ու յօդուածներ կարդացած լինէք այս երկրի ու մարդկանց մասին, այնուամենայնիւ լաւագոյն ուշադրութեամբ կկարդանք մի հայ օրիորդի ստացած տպաւորութիւնները նուրբ ու նկարէն արտայայտութեամբ։

348. *Հէքիաթների աշխարհից։* Հէքիաթներ I Դ. Աղայեանցի, Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. 5 պատկերով։ Թիֆլիս, 1904. 38 միջակ եր. գինը 15 կ.

Ա. «Գիւղնաղ տատի հէքիաթը» իսկապէս մի սիրուն նեբածութիւն է Աղայեանցի հէքիաթների։ Բ. «Այծատարը» մի խեղճ գեղջկուհի տղայ է լինում և ծնում է այն գիշերը, երբ մի հարուստ վաճառական այդ գիւղակն անցնելիս է լինում։ Նա հրեշտակներից լսելով որ իր բաղդը այդ մանկանը պիտի անցնի, վճռում է նրան ոչնչացնել սպանել տայ, բայց ծառան խղճում է խեղճուկի վրայ թողնում է կենդանի։ Այծը մնուցանում է որբուկին, սա գտնւում է մի պառաւի ձեռքով, պահւում, մեծանում է և հակառակ նոյն վաճառականի երկրորդ խոստովանքին՝ փոխանակ մահանալու՝ նրան փեսացանում է ու նրա բաղդին էլ տիրանում. իսկ խարդախ վաճառականն

ընկնում է այն հորի մէջ, որ պատրաստել էր տուել Այծատուրի համար։—Մանուկների սիրած հէքիաթներից է։

Գ. «Զանգի—Զրանգին» զոյգ առոյծներն, որ մարդակեր քրոջից փախած Թաթուխին ծառայում ու պաշտպանում են։ Թաթուխը նրանց մօրը երկունքի ժամանակ օգնում է և այդ կորիւններին հետն առնում, տանում, մեծացնում է։ Թ. ապաւինում է մի ընտանիքի, որ բաղկացած էր գևերի ձեռքով կուրացած մի ծերունուց ու պառաւից։ Թ. կեանքը վտանգի ենթարկելով գևերի ձեռքից առաւ բերեց նրանց աչքերը բժշկեց։ Ապա առիւծների շնորհիւ մի անգամ էլ ազատուեց մարդակեր քրոջից, մի հարուստ մարդու հանդիպեց, նրա հետ գրաղ եկաւ, գրաղ տարաւ ու գնաց ամուսնացաւ, երջանկացաւ։ Արկածալի, բայց Աղայեանցի լաւագոյն հէքիաթներից չէ։

Դ. Մանուկ խանը, մի իմաստուն երեխայ է լինում, որ առաջին անգամ իր շնորքը ցոյց է տալիս եղնատիրոջ և իշատիրոջ վէճի ժամանակ։ Գիժ եղի տէրը թէև մի քանի անգամ զգուշացնում է իշատիրոջը, սա չլսելն է գնում, եզը խփում է իշին ու նրա վրայ բարձած ձուերը կոտրատում։ Մանուկ խանը խորհուրդ էր տալիս եղնատիրոջը համբ ճեալ դատաւորի առջևը։ Հարցուփորձի ժամանակ նա այդպէս էլ արաւ, ուստի իշատիրոջ հաւերութիւնը կորելով՝ ասեց դատաւորին որ նա ստում է. չէ որ իրան բողոքել էր, որ էշը մի կողմ քշէ, եզը հարու կը տայ։ Այսպիսով ճշմարտութիւնը բացւում է։ Միւս դէպքն էլ անհաւատարիմ ծառայի կողմից տիրոջ թանկագին գոհարը սեպհականացնելն ու Մանուկ խանի իմաստութեամբ վկաների հակառակ ցուցմունքներից բանի էութիւնը երևան հանելն է։ Իսկապէս ասած՝ «Մանուկ խանը» հէքիաթ չէ, այլ Սողոման իմաստունին վերաբերեալ նմանօրինակ աւանդութեան պէս մի բան։

349. *Հէքիաթների աշխարհից։* Հէքիաթներ II Դ. Աղայեանցի։ Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. Թիֆլիս, 1904. 4 պատկերով, 38 եր. գինը 15 կոպ.

Ա. «Եղեգնուհի»։ Թագաւորը ուզում է իր միակ զաւակին ամուսնացնել, իսկ սա շարունակ պատասխանում է որ հօրից ու մօրից ծնած ակջիկ չի առնիլ։ Հայրը ճարահատուած՝ դէս ու դէն է ընկնում այդպիսի հարսնացու գտնելու. գտնւում է վերջապէս մի մարդ, որ խորհուրդ է տալիս նրան գնալ եղեգնուտը, մի եղեգ կտրել, ջուրը գցել, նրանից դուրս եկած անմնման աղջիկը կը լինի իր որոնածը։ Հէնց այդպէս էլ պատահում է, բայց միևչև թագաւորը տուն կգնար մերկ հարսնացուին հագուստ բերելու, բոլոր խեղդում է եղեգնուհուն ու նրա

Ս 25
Ս 5-71
370
Զ469-Տ5

ԴԵՌԱՀԱՍՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ *)

(Յով. Տէր-Միրաքեանի)

Մի քանի խօսք։

«Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրուածքս հրատարակեցի 1898 թուականին մեր դպրոցների փակման առիթով, իսկ այժմ նոյն նպատակին ծառայող այս նոր աշխատութիւնս հրատարակում եմ նոյն դպրոցների վերաբացման առիթով։ Այն ժամանակ գրախօսուած, ըստ հասակների դասաւորած ընթերցանութեան գրքեր առաջարկելով հայ ծնողներին՝ ցանկացայ նպաստած լինել մայրենի գրաւոր լեզուի պահպանման դեռահաս սերնդի մէջ ընտանիքում։ Բայց ցաւօք սրտի պիտի ասեմ, որ հայ ծնողներից քչերը կամեցան օգուտ քաղել այն գրուածքից, որ թեթև աշխատութեամբ գլուխ չէր եկել։ Մեր մանաւանդ մանկական գրքերի թարգմանիչներին, փոխադրիչներին ու հեղինակներին էլ մի ուղեցոյց տալու համար՝ նախ յատկապէս ուսումնասիրեցի ժամանակակից գրական ու մանկավարժական պահանջները այս կարգի գրուածքների նկատմամբ։ Ապա այս երկու գիտութեանց կողմից գրուած պահանջների համերաշխութեան կէտերը գտնելով՝ այդ որոշ տեսակէտներով քննութեան առայ վերոյիշեալ գրացուցակի գրքերը ըստ արժէքի ու հասակի և այսպէս կազմեցի «189 յանձնարարելի ու մերժելի գրքերի ցուցակը»։

Այս՝ հայութեան տագնապալից և միևնոյն ժամանակ խորհրդաւոր օրերին, նրա երկունքի ծանր օրերին, երբ վերածընւում է հայկական դպրոցը, առանց վարանմունքի նորից ձեռք առայ այս կարևոր խնդիրը։ Այս գրուածքս յատկապէս նուիրուած է գրացուցակին։ Այս անգամ լրացրի ու կատարելագործեցի գրքիս երկրորդ մասը՝ գրացուցակը՝ առաջին ցուցակի գրքերի բովանդակութեան մասին էլ 148 նորերի հետ աւելի

*) Մեր դպրոցների վերաբացման առիթով աւելորդ չենք համարում տալ մեր գրականութեան մէջ եղած գրքերի վերգնահատումը, որպէսզի դաստիարակներն ու ծնողները, ունենալով մի ուղեցոյց, գիտակցօրէն կատարեն ընթերցանութեան գրքերի ընտրութիւնը։ Ծ. Խմբ.

մանրամասն տեղեկութիւններ տալով։ Այստեղ միայն կը յիշեմ այն կէտերը, որոնք արծածուել են առաջին գրուածքումս։ Եւ եթէ մեր նորակազմ դպրոցական գործին ծառայող ուսուցիչների մէջ այդ խնդիրները հարցասիրութիւն առաջացնեն, այն ժամանակ ես սեպուհ պարտականութիւն կը զգամ աւելի նոր ու մանրամասն ուսումնասիրութեան արգասիք տալու նրանց։

«Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրուածքիս 200 էջերում արծարծուած են հետևեալ գրական ու մանկավարժական խնդիրները.

ա. Ազատ ընթերցանութեան ծագումը, բ. զարգացումը, գ. նպատակը, դ. դեռահասների ու հասակաւորների մտքի ու զգացմունքների և հետևաբար նաև պահանջների տարբերութիւնը, ե. այս առանձնայատկութիւններից առաջացած տարբեր շրջանների ընթերցանութեան նիւթերի տեսակները, զ. փոխադրութեան զանազան կերպերը, է. ազատ ընթերցանութեան հետևանքների հետազօտութիւնը, ը. գրքերի ընտրութիւնը, թ. տարածումը և- վերջապէս ժ. արծարծուած խնդիրների աղբիւրներին վերաբերեալ մատենախօսական տեղեկութիւններ ինչ ինչ բացատրութիւններով։ Թէ արդեօք մեր թարգմանիչներն ու փոխադրիչները, որքան են հետաքրքրուել այսպիսի խնդիրներով և պարտականութիւն զգացել գրիչ ձեռք առնելուց առաջ ուսումնասիրել այս խնդիրները, այդ ամենից լաւ ցոյց կը տայ հրապարակում գոյութիւն ունեցող մանկական ընտիր, միջակ ու անպէտք գրքերի վիճակագրութիւնը։ Արժէ ուրեմն այստեղ թոյլ տալ, որ թուերը խօսին։

Վերոյիշեալ գրուածքիս մէջ գրուած էր մի աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ մանկական գրականութիւնը սեղանում նախ սկսուել է արևմտեան հայերի մէջ 1828 թուականից և առաջ գնացել առանց զգալի զարգացման ոչ որակի և ոչ քանակի կողմից։ Այդ գրականութիւնը յետ է մնացել և 80-ական թուականներից առաջնութեան տեղը տուել է արևելեան հայերիս մանկական գրականութեանը, որ մանաւանդ շնորհիւ մեր Հրատարակչական ընկերութեանը՝ հետզհետէ գէթ որոշ չափով զարգացել է թէ որակի և թէ քանակի տեսակէտներով։ Մեր կովկասեան հայ Հրատարակչական ընկերութեան գործունէութեան դադարելուց յետոյ՝ մասնաւոր անհատներ ու փոքր ընկերակցութիւններ ժողովրդական գրքերի հետ աշխատել են հատարակել նաև դեռահասների համար գրքեր։ Արդ տեսնենք թէ ինչ են ասում թուերը 1873—1899 և 1890—1905 երկու շրջաններում հրատարակուած մանկական գրքերի մասին, որոնք զետեղուած են առաջին ու երկրորդ մատենախօսական գրացուցակների մէջ։ Մի ընդհանուր գաղափար կազմել տալու համար՝ գրախօսուածս գրքերը 3 տեսակի բաժանեցի՝ ընդունելի, միջակ ու մերժելի։ Ընդունելի գրքերի թուի մէջն են հին ցուցակիս 1873—1899 շրջանէն 80 հատ անպայման ընտիր գրքերը՝ մասնաւոր անձերի ու փոքր ընկերակցութեան հրատարակութիւններից և 30 հատ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակածներից և նոր ցուցակիս 1899—1905 շրջանից 42 անպայման ընտիր գրքերը։

	ընդունելի	միջակ	մերժելի	ընդհ. թ.
1873—1899	122	43	24	189
1899—1905	104	32	12	148
	226	75	36	337 **)

Բայց ընտիր գրքերի թիւը անհամեմատ աւելի պակաս կը լինէր, եթէ Թ. Հ. Հ. ընկերութեան դադարումից յետոյ մեր երկու ժողովրդական գրող բժիշկները՝ պ. պ. Արծրունի և Բուդուլեան չտային մեզ մի շարք իսկապէս ժողովրդական առողջապահական ու մասամբ ընախօսական-դաստիարակչական օգտակար գրուածքներ։ Նոյն գովեստով ցաւօք սրտի չեմ կարող խօսել Թիֆլիսում գործող մի խումբ կանանց մասնաւոր ընկերակցութեան հրատարակած գրքերի մասին «Նուէր մանուկներին» մակագրութեամբ։ Որքան որ այս հաժեստ ընկերակցութիւնը մեզուական աշխատութեամբ գործում է, նոյնքան լուրջ վերաբերմունք թարգմանելի նիւթերի ընտրութեան նկատմամբ ես չկարողացայ տեսնել նրա գործունէութեան մէջ [1]։ Այս ընկերակցութիւնը ակներև կերպով երևան է հանում մի միտում աւելի թարգմանել կին գրողների գրուածքներից։ Ի հարկէ, բան չէինք ունենայ ասելու, եթէ այդ ընտրութիւնները յաջող կատարուած լինէին։

Այստեղ պատեհութիւն չունենալով այս մասին աւելի խօսելու՝ կը ցանկայի մատնացոյց անել Что читать дѣтямъ? [1])

---

*) Այբուբենական կարգով և ըստ հասակների դասաւորուած չեն №№ 334—350, իսկ 338—350 վերոյիշեալ աղիւսակը կազմելուցս յետոյ եմ ստացել հրատարակիչներից։

[1]) Գրախօսածս 21 գրքոյկներից (ընդամենը 23-են հրատարակել) կէսը յաջող պէտք է համարել գոնէ իմ կարծիքով։

[1]) «Что читать дѣтямъ?» Выпускъ I Разборъ дѣтскихъ книгъ. Изд. Педагогическаго музея военно-уч. завед. въ СПБ. Отдѣлъ критики и библіографіи дѣтской литературы.

(Մանուկները ի՞նչ կարդան) հեղինակաւոր գրուածքի մէջ արտայայտուած կարծիքները այն ոուս կին գրողների մասին, որոնցից որ վերոյիշեալ կանանց ընկերակցութիւնը գլխաւորապէս ընտրում է թարգմանելի նիւթեր։ Ինչպէս յայտնի է, հազուագիւտ են մանուկների համար գրող ընտիր հեղինակները, իսկ կին գրողների մէջ նաև այլ կուլտուրական երկրներում այդպիսիներին կարելի է միայն «մատով ցոյց տալ»։ Այս առիթով կ'ուզէի ցանկութիւն յայտնել, որ մեր Թիֆլիսի Հ. Հ. ընկերութիւնը որքան կարելի է շուտ վերսկսէր իր գործունէութիւնը, միայն թէ աւելի լայն ծրագրով, ինչպէս որ խօսուեց անցեալ 1905 թ. ապրիլ ամսի նախապատրաստական ժողովում։ Մանկական գրականութիւնն էլ որոշ չափով կուլտուրայի արտայայտիչ պէտք է լինի, հետևաբար նրա մէջ յայտնի տեղ պէտք է բռնեն արուեստի, գեղարուեստի, արդիւնաբերութեան և այլն վերաբերեալ գրքերը, սոցիալական տարբերական գիտելիքներ և այլն։ Բացի սրանից ցանկալի էր, որ այսուհետև այդ ծանրակշիռ գործի գլուխ անցնողների մէջ լինէին միշտ նաև այնպիսի անձեր, որոնց մէջ միացած են և առնչութեան մէջ գրուած գրական ու մանկավարժական հայեցակէտները։ Սկսնակ ու անփորձ թարգմանիչների գովելի ջանքերը գնահատելով հանդերձ խորհուրդ կը տայի այդպիսիներին այնքան էլ չշտապել գրականութեան ասպարէզը մտնելու համար։ Լաւ գրքեր ընտրելը և մայրենի լեզուի ոգով թարգմանելը հեշտ բան չէ։ Սկսնակները սեղուն պարտականութիւն պէտք է զգան որևէ գիրք թարգմանելուց առաջ՝ փորձնական թարգմանութիւնը հայերէնին հմուտ մարդկանց ցոյց տալու և ըստ այնմ վարուիլ։ Ինչ վերաբերում է թարգմանելի գրքերի ընտրութեանը, բացի վերոյիշեալ ռուսերէնի ուղեցոյցի, կան նաև ուրիշները. Что читать дѣтямъ до школьнаго возраста [1]) և այլն։

Դեռահասների համար հրատարակուած գրքերի որակի մասին խօսելուց յետոյ՝ անցնենք դրանց տեսակներին և տեսնենք թէ գրախօսած 337 գրքերից ըստ տեսակի որքանն են

[1]) «Родительскій кружокъ» при Педаг. музеѣ В. У. З. СПБ. Այս գրքոյկի մէջ կայ նաև մի բաւականին մանրամասն տեսութիւն մանկական գրականութեան վերաբերեալ։—«Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրուածքիս 65—78 էջերում բացատրութիւններով հաղորդած աղբիւրներից զատ, կ'ուզէի Jugendrchrifter—Warte թերթի 1905 թ. № 9 մասնացոյց արած նոր հանդէսներից Die Jugendschrift և die Jugendbücherei գերմաներէն գիտեցող մեր թարգմանիչների ուշադրութեանը յանձնարարել։ «Jugendschriften-Warte» 12 թերթիկի գինը՝ 1 մարք 20 պֆ.։

վերաբերում այս կամ այն հասակի ընթերցողներին։ Որովհետև ամէն մի տեսակի գիրք որոշ չափով ներկայացուցիչներ չունէր, ուստի այս բոլորը միայն երկու բաժանմունքի վերածեցի. ա. գլխաւորապէս բելլետրիստական ու կենսագրական գրուածքների, բ. բնագիտական, բնախօսական ու առողջապահական գրուածքների։

Ա. Բաժանմունքինը		Բ. Բաժանմունքինը	
Հին գրացուց.	Նոր գրացուց.	Հին գրացուց.	Նոր գրացուց.
Տար.	Տար.	Տար.	Տար.
3— 6= 1	3— 6= 2	6— 8=0	6— 8= 1
6— 8=17	6— 8= 6	8—10=1	8—10= 0
8—10=42	8—10= 5	10—12=9	10—12= 4
10—12=44	10—12=17	12—14=6	12—14=11
12—14=24	12—14=20	14—16=3	14—16=15
14—16=40	14—16=47		
16+ . = 2	16— . =20		
170	117	19	31

Աղիւսակը ցոյց է տալիս, որ 14—16 ու աւելի հասակ ունեցողների համար վերջերս աւելի գրքեր են հրատարակուել։ Իսկապէս ասած՝ մեր զպրոցների փակումից յետոյ անմիջապէս զգալի եղաւ յատկապէս ժողովրդական գրքեր հրատարակելու տենդենցեան, և ահա մեծ մասով այդ շարքից է, որ «առ ի չգոյէ» որոշ չափով նիւթեր եմ ընտրել աւելի հասունացածների համար։ Պէտք է ասել, որ ժողովրդի համար յատկապէս հրատարակուած գրքերից որոշ տեսակէտներով մի այդպիսի ընտրութիւն անելը մեր պայմաններում այնքան էլ անպատեհ չպէտք է համարել։ Ինչպէս որ ընտիր մանկական գիրքը հասակաւորին էլ հաճոյք կարող է պատճառել, այնպէս էլ հասակաւորի նմանօրինակ գիրքը՝ դեռահասին։ Մանուկները շատ էլ չեն սիրում այնպիսի գրքեր, որոնց մէջ գործող անձերը միայն իրանց հասակակիցներն են։ Նրանց համար առանձին հրապոյր ունին նոյն գրուածքները, որոնց մէջ մեծ ու փոքր իրար հետ յարաբերութեան մէջ են մտնում։ Ոչ մանուկը և ոչ էլ ժողովրդի շրջանին պատկանող ընթերցողները սիրում չեն միտու�մաւոր յատկապէս նրանց համար որոշ «մանրներով» թխած գրքերը. հէնց որ նրանք վերահասու են լինում այդ բոնաղրо-

սիկ տենդենցիային, նրանց սիրտը պաղում է այդ գրքից [1]։

Այս աղիւսակը մեր թարգմանիչներին ցոյց է տալիս, թէ որ հասակի ընթերցողների համար և ինչպիսի գրքերի աւելի զգալի պակասութիւն է զգացւում։ Մի կէտի վրայ էլ կ'ուզէի նրանց ուշադրութիւնը դարձնել։ 3—6 տարեկանների համար կենդանական կեանքից վեր առաջ առակներ չունենք, չունենք հէքիաթներ, պատկերագրքեր, որպէսզի մայրերը նրանց համար կարդային, բացատրէին այդ նիւթերը։

Ես դիտաւորութիւն ունիմ այսուհետև գէթ տարէնը մէկ անգամ թերթիկներով գրացուցակներ հրատարակել առանց գրախօսական մասի և տարածել օրաթերթերի միջոցով ընտանիքներում Նոր Տարուայ նուիրատուութեանց առթիւ։ Ցանկալի էր, որ մեզանում շատանային պատկերազարդ, փառակազմ ընտիր գրքեր և աւելի հաստատուն սովորութիւն դառնար փոխանակ այլ բաների այսպիսի գրքեր նուիրելը մանուկներին։

Այս առթիւ կ'առաջարկէի մեր հեղինակներին, թարգմանիչներին ու փոխագրիչներին, որ եթէ կը ցանկային իրանց գրքերն էլ իմ ցուցակներումս մտցրած տեսնել, կամ մի մի օրինակ ուղարկէին նրանցից կամ թէ չէ, հաղորդէին ինձ իրանց մանկական գրքերի անունները։

I

ԳԼԽԱՎՈՐԱՊԷՍ ԲԵԼԼԵՏՐԻՍՏԱԿԱՆ ՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ

Ա. 3-6 տարեկան փոքրիկների համար։

1. *Կարմիր զտակ։* Մանկական գրադարան №1. Հրատ. Իշխանուհի Մ. Թումանեանցի։ Թիֆլիս 1896. 8 մեծադիր եր. պատկերազարդ։ Գինը 20 կոպ։

Գրիմ եղբայրների յայտնի հէքիաթի շատ հաժառօտածն է։ Յարմար է անգրագէտ փոքրիկներին կարդալու համար։ Կարող է նպատակի ծառայել։

2. *Երեք կատուի պատմութիւն։* Մանկական գրադարան։

---

[1]) «Ժողովրդի ընթերցանութիւնը» գրուածքիս բ. տպագրութեան համար նոյնպէս ձեռնարկել եմ մատենախօսական գրացուցակ պատրաստելու։ Այն գրքում կը վերադառնամ այս խնդրին։

Հրատ. նոյնի։ Թիֆլիս, 1896. 8 մեծ եր. պատկերազարդ։ Գին 20 կոպ։

Երեք ձագուկներին մայրը պատժում է նուիրուած ձեռնոցները կորցնելու և ապա գտնելուց յետոյ կեղտոտելու համար։ Այս գրքոյկի նիւթն ու ոճը այնքան արժէք չունի։

3. «*Մանկութիւն*» հայ մայրերի ու իրանց մանուկների համար։ Զաքարէ Գրիգորեանցի։ Թիֆլիս 1895. 28 միջակ եր։ Գին 40 կոպ.

Սա մեր միակ մանկական պատկերագիրքն է հայ մանկական աշխարհից վեր առած։ Բացատրական ձեռնարկը 51 էր գին 10 կոպ։ Բաւականին զուարճալի է 3-4 տարեկանների համար։

Բ. 6—8 տարեկանների համար։

4. *Անվախ ղերձակ։* Գրիմմի գունատիպ պատկերազարդ հէքիաթներից։ Թիֆլիսի Հ. Հ. Ը. 1897. գինը 40 կոպ.

Ընտիր հէքիաթէ. ղերձակի գլխից անցած բաները հետաքրքրութեամբ կը կարդացուին։

5. *Աստղէ դրամ։* Գրիմմի հէքիաթներից։ Թարգ. Տ. Կոստանեանց։ Թիֆլիս, 1897։ Գինը այլ հասակի վերաբերեալ 2 հէքեաթների հետ 7 կոպ.։

Գթասիրտ մանկան կեանքից է։ Նա իր մինչև վերջին շապիկը աղքատներին է տալիս, յետոյ երկնքից աստղերը թափւում ու նրա համար փող են դառնում։ Ընտիր է։

6. *Գայլն ու մարդը։* Գրիմմի հէքիաթ։ Թարգմ. նոյնի։ 2¼ փոքրադ. եր. 2 այլ հէքիաթների հետ գինը 10 կ.

Գայլը պարծենում է, թէ մարդուն կը յաղթէ։ Աղուէսը տանում է ու նրան հանդիպեցնում է որսորդին ու ինքը թաղնւում է։ Որսորդը գայլին լաւ ջարդում է, վերջինս գալիս պատմում է, թէ ինչ տեսակ բաներով հարուածներ կերաւ։ Մի անբովանդակ բան։

7. *Գերմանական ազգային առակներ (հէքիաթներ) եղբարց Գրիմմայ աշխատութեամբ հաւաքուած։* Թարգ. Ֆրանս. Եւայի Տեր Գրիգորեանց։ Պար. 1864. 52 փոքրադ. եր. գին (?)։

Պարունակում է հետեւեալ 8 հէքիաթները որ այստեղ դասաւորում եմ ըստ արժէքի։ 1.«Մեծ հայր և թոռն»՝ ապերախտութեան օրինակ. 2. «Պատրիկների պարգևը»՝ անգթութեան օրինակ. 3. «Կրեպելի կախարդ»՝ զող՝ սիրտը զող առածի իմաստով. 4. «Երկացակեցութիւն» կենդանիների ու մարդու հասակի մասին է խօսքը. 5. «Վեց հոգի կը հատնենք մի բանի»։ Թա-

գաժառանգը պատժուում է անարդարութեան համար։ 6. «Նապաստակ և Ոզնի»—վերջինիս խարդաւանանքին ենթարկուած միամիտ նապաստակի պատմութիւնն է տես №18։ 7.«Արջ» վիրաւորանքի համար պատերազմ. և 8. «Փորձանք». անբովանդակ բան է։

8. Դուլիվէրը թզուկների աշխարհում։ Թ. Հ. Հ. Ը. 1897 պատկերազարդ գունատիպ, գինը 40.

9. Դուլիվէրը հսկաների աշխարհում։ Նոյն տեղեկութիւնները։ Այս երկու գրքոյկը մի տեսակ պարոդիա են Սուիվթի յայտնի վէպի, զուարճալի կարող են լինել, բայց առանձին արժէք չունին։

10. Եօթն ազռաւ։ Հէքիաթ փոխադր. Լ. Մելիք-Ադամեանցի. Թ. Հ. Հ. Ը. 1899. 22 մեծ եր. գին 40 կոպ. գունատիպ պատկերազարդ։

Մի երջանիկ ընտանիք, որ 7 արու զաւակ ունէր, մի դստրիկ էլ է ունենում։ Մկրտութեան օրը 7 էլ գնում են ջրհորից ջուր բերելու, դայլը ջուրն է ընկնում, ուշանում են, հայրը անիծում է նրանց, որ ագռաւներ դառնան։ Անէծքը կատարւում է, նրանք թռչում կորչում են, վերջը իրանց քրոջը գտնում, կախարդանքից ազատւում են, ազատւում է նաև նրանց քրոջ Անոյշի փեսացուն։ Բոլորն էլ երջանկանում են իրանց ծնողների հետ։ Փոխադրութիւն է, բաւականին ընտիր, թէև տեղ տեղ ոչ մանկական լեզուով։

11. Թմփլիկը։ Հէնրիէտա Վիտոֆի, Նուէր Մանուկներին Թարգմ. Շ. Տունիկեանցի։ Թֆլս. 1902. 23 մեծդ. եր. գին 12 կոպ։

Պատկերազարդ պատմուածք է մի չար երեխի ու նրա փոքրիկ եղբօր կեանքից։ Փոքրիկը մեծի պատիժները ինքն է յանձն առնում։ Այդ հասակին ոչ յատուկ մտածմունքներ ու զգացմունքներ։ Պատկերները միջակ։

12. Կարմիր գլխարկ։ Տեղեկութիւններ տես №1։

Մամի մօտ անտառի միջով գնացող փոքրիկ աղջկայ և խարդախ գայլի հանդիպումը, մաժի կլանուելը գայլից, առաջինի և թոռնիկի ազատուելը գայլից—ահա այս երեք դիպուածներն են պատմւում։ Գրիմմի առաջնակարգ հէքիաթներից չէ։ Այս սարսափելի պատմութիւնը շատ զգայուն-մանուկների վրայ կարող է վատ ազդեցութիւն ունենալ։

13. Կարէնն ու Մանէնը հէքիաթ, փոխադ. Լ. Մելիք-Ադամեանի. Թ. Հ. Հ. Ը. 1899. 24 մեծ եր. պատկերազարդ, գունատիպ. գին 40 կոպ.

Մօրից զրկուելուց յետոյ խորթ մօր (կախարդ) ձեռքը

ճնալով փոքրիկ քոյր ու եղբայրը փախչում են անտառ։ Կարէնը եղնիկ է դառնում, Մանէնը թագուհի։ Բոլորը վերջը երջանկանում են, իսկ պառաւը իր պէս չար աղջկայ հետ պատժւում։ Լաւն է, գրաւիչ, բայց խորթ մօր պատմութիւն լինելով՝ շատ էլ յանձնարարելի չը պիտի լինի։

14. Մանկական զրաղարան Ա. Չիլինկարեանի։ Գերմ. թարգմ. Ալէքսանդրապոլ. 1904, 17 մեծադ. եր. գին (?).

4 Փոքրիկ պատմուածքներ են։ Թէև նշանակուած են 8—10 տարեկանների համար (աւելի փոքրերին էլ պատմելու համար), սակայն ըստ իս՝ 6—8 տարեկան մանուկների զարգացմանը հարապատասխան նիւթեր են։ Աւելի լաւ է «Թռչնիկը»։

15. Մանկական զրաղարան։ Մեծադ. 16 եր, գին 5 կ. Միւս տեղեկութիւնները տես նախընթաց համարում։

6 Փոքրիկ պատմուածքներ են, որոնցից մի քանիսը՝ աշակերտական ձեռնարկների մէջ եղածներից։ Առաջին անգամ լսող կամ կարդացող մանուկներին կը հետաքրքրեն այս պարզ պատմուածքները։

16. Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի։ Գին 15 կոպ։ Շատ անհաւասար արժէքի երգեր են։

17. Մոխրատիտիկ։

Խորթ մօր պատմութիւն լինելով առաջնակարգ մանկական հէքիաթ չէ կարող համարուիլ։

18. Նապաստակը եւ ոզնին։ Թարգմ. տ. Կոստանեանի, 1997. Թիֆլիս։ Գինը համար 6 ու 25 հէքիաթների հետ 10 կոպ.։

Թէև շատ զուարճալի հէքիաթէ է, բայց ոզնիի նենգութեամբ միամիտ նապաստակի կրած տանջանքն ու մահը շատ անգութ է։ Ուրիշի վիշտը չպէտք է մանկան հաճոյքի պատճառ լինի։ Տես № 7. և 19.

19. Նապաստակ եւ ոզնու զրազը։ Պատկերազարդ։ Հ. Թ. Հ. Ը.։ Գինը 40 կոպ.

Տես նախընթաց համարը։

20. Ոսկի ձկնիկ Պուշկինի. թարգմ. Գամառ-Քաթիպայի։ 1884 թ. գինը 10 կոպ.

Ընտիր է։

21. Ոսկի ձկնիկ։ Ազատ թարգմ. Ղ. Ազայեանցի։ 1884։ Թիֆլիս։ Գինը 30 կոպ։

Ընտիր է։

22. Չորս սուակ մանուկների համար։ Հրատ. Հ. Ռ. Գ. Ը.

1. Մրմռան կատու. 2. Կապոյտ կրակ. 3. Կախարդ կա-

նայք և փինաչի (ժողովրդական հեքիաթ)—բոլորն էլ զուարճալի են ու բարոյական արժէք ունին, բայց առաջինից։

23. Պատիկ ու Ճատիկ, հեքիաթ, փոխադր. Լ. Մ.-Ադամեանցի. Թ. Հ. Հ. Ը. 1899. պատկերազարդ։ գին 40 կոպ.։

Թշուառ փայտհատը իր զաւակներին քաղցից մեռնելիս չուզելով տեսնել նրանց անտառն է տանում անտէր, անտիրական, թողնում։ Մանուկները շնորհիւ պատիկ ու ճատիկի նախազգուշութեան՝ առաջին անգամ հետքը գտնում ու վերադառնում են տուն, իսկ երկրորդ անգամ՝ ոչ։ Ապա ընկնում են գէի ձեռքը, որից ազատւում են դարձեալ պատիկի շնորհիւ, որ գէի հարստութիւնն էլ գրաւում է ու վերջն էլ թագաւորին լաւ ծառայութիւն մատուցանելով՝ արժանանում է նրա շնորհին։ Ընտիր փոխադրութիւն է։

24. Սրինգ հովուական Ղ. Աղայեանցի։

Գնահատելի ժանկական բանաստեղծութիւններ։

25. Ջնած զեղեցկուհի։ Տեղեկութիւններ տես №10. ընտիր հեքիաթ է։

26. Օնիկն ու Մարգարիտը։ Տեղեկութիւններ տես №5. քիչ արժէք ունի։

Գ. 8—10 տարեկանների համար։

27. Անանգիստ գիշեր։ Օտրօգորսկի ժողովածուից։ Թ.գլս. 1894. 32 եր. գին 5 կոպ։ Թարգմ. Տ. Կոստանեանց.

Պատմում է թէ ինչպէս մի տան մէջ երեխաներն ու սպասուհիները գիշերը մի սենեակից ձայներ լսելով, վախենում են կարծելով թէ ուրուական է, բայց յետոյ նրանցից մէկը սիրտ արաւ տեսաւ որ բուեր են։ Ի՞նչ իմաստ ունի։

28. Արջի պատմութիւնք Լ. Շելգունովայի և Դայլ Զասոդիմսկու։ Նուէր մանուկներին. թարգմ. Թիֆլ. 1901. 43 եր. 15 կոպ։

Երկուսն էլ արջի ու գայլի կեանքից պարզ նկարագրուած արկածներ են։ Զգիտես ինչու երկրորդի հեղինակն իր գրուածքը՝ հեքիաթ է անուանում։ Երկուսի մէջ էլ կենդանիների բերանից է պատմուած։ Մանաւանդ անտանելի է ոչխարի ու գայլի երկար ու բարակ անբնական սակարկութիւնը։ Վերջինս փիլիսոփայութիւնը։ Պատկերները անյաջող են, մանաւանդ գայլի կեանքից վեր առածները։ Անյաջող «Մանուկներին նուէր» է։

29. Արեգնազան կամ կախարդուած ափսարը։ Հեքիաթ Ղ. Աղայեանցի. 1888 96 միջ. եր. գինը?

Մասիսի ստորոտներից թագաւորի ժամ ծառայութեան եկած Արան իշխանի Արէգ որդին, որ իբրև աղջիկ էր յայտնի և տղի զգեստ հագած մնում էր պալատում։ Թագաւորի աղջիկը, Նունուֆարը, նրա սիրուց տոչորւում է և նրա կողմից սառնութիւն տեսնելով հիւանդանում։ Արէգը հարկադրւում է նրա համար անմահական ջուր բերելու նպատակով հեռաւոր երկրներ երթալ, մեծ վտանգների ենթարկուիլ, մի քարացած քաղաք կենդանացնել և անմահական ջուրն առած Նունուֆարի ժամ վերադառնալ արդէն՝ իբրև երիտասարդ։ Ն. իր սիրածի տեսքից ու բերած ջրից փրկւում է։ Այս «վեպիկի» սիրուն ներդաշնակութիւնը խանգարւումէ մի տեղ միայն, երբ խօսք է լինում արքունքի հասած Արէգի ներքին ֆիզիկական փոփոխութեան մասին։ Աւելի ցանկալի կը լինէր որ հեղինակը այստեղի վրայով էլ այնպես թեթև անցնէր, ինչպէս միւս էջերում։ Մանուկների շատ սիրած գրուածքներից մէկն է և արժանի է։

30. Անտառապահը Ա. Սմիրնովայի, թարգմ.? Թ.գլս. 1896. գին 12 կոպ.

Մեծահոգութիւնը ընկճում և ուղղում է կամակոր ու չարաբախտ մանկանը Տպաւորիչ է։

31. Աշխատութեան սանդուղքը, վէպիկ երեխաների համար. թրգմ. Է. Տէր-Գրիգորեանցի, Երևան, 1882, 51 փոքրադիր, գինը 25 կոպ.

Փոքր աղջիկը ծոյլ է, անշնորհ, դասերը փչացնում է։ Մի անգամ երեկոյեան պարտէզում նրան երևում է լուսաւոր թզուկը, որ նրան խարում տանում է ճահիճների տակ։ Այստեղ աղջիկը տեսնում է իրիպէսների հիւծուած կեանքը ծուլութիւնից։ Ապա նրա աչքերին ներկայանում է մի լուսաւոր կոյս, որ ցոյց է տալիս աշխատասէր աղջիկների շքեղ տունը, բացատրում է որ աշխատասիրութեամբ նա էլ կը կարողանար արժանանալ այդ տանը իր աշխատանքից հետզհետէ սանդուղք շինելով վեր բարձրանալու համար։ Մի քանի տարի յետոյ այս աղջիկը վերջացնում է աշխատութեան սանդուղքը և երջանկանում։ Առաջնակարգ գրուածք չէ։

32. Անահիտ, հին զրոյց, Ղ. Աղայեանցի. Թ.գլս. 1891. 56 միջակ եր, գինը 20 կոպ.

Վաչագան թագաժառանգը սիրահարւում է նախարչու աղջկան, Անահտին։ Ծնողները շատ չեն ընդդիմանում, բայց Ա. խնամախօսների առաջարկը չի ընդունում, քանի Վ. արհեստ չգիտէ։ Սա հարկադրւում է ընտիր դիպակ գործել սովորիլ և այսպէս. արժանանում է Ա. ձեռքին։ Մի անգամ, երբ Վ. ծրպտած ման էր գալիս իր երկրում, քուրմերը նրան խաբելով

տարան իրանց ստորերկրեայ բանտը և կենդանի մնաց միայն նրա համար որ արհեստ գիտէր, կարող էի օգուտ տալ բռնապետներին։ Վ. կերպասի վրայ ծաղկատառերով իր գրութիւնը պարզեց և խորհուրդ տուեց թագուհու ժամ տանել, քանի որ միայն նա կարող էր այդ հրաշագործ կերպասի գինը տալ, որ ամեն տխրութիւն փարատում էր։ Ա. կարդաց գաղտնիքը, թագաւորի հետ գերիներին ազատեցին, քուրմերին պատժեցին։ Ընտիր բանահիւսութիւն է։ Մեր ժողովրդի ոգու արտայայտութիւնն է «Անահիտը», արհեստի ոգեշունչ գովասանութիւնը։ Շատ ցանկալի էր մի շքեղ պատկերազարդ «Անահիտ» ունենալ վերջապէս։

33. *Երրորդ ոսկի Լաբուլէի. 1893.*

Երգի ձևով պատմում է ագահութիւնից առաջացած հիասթափութիւնն ու պատիժը։ Լաւ առակ է։

34. *Երեխաների առ իրանց ծնողք պարտաւորութիւնները։*

Հ. Բարրոյի. թրգմ. ֆրանս. Ս. Պ. Տէր Գրիգորեանցի, Թֆլս. 1878, գին 40 կոպ.

Անարուեստ փոքրիկ պատմուածքներ են, չարժէ կարդալ։

35. *Զուարճալի ժամեր։* Ա. Սարդարեանի։ Մաս ա. Թֆլս. 1890. գին 50 կոպ.

Մի զուարճալի ժողովածու է հանելուկների, բառախաղերի, խաղերի, խնդիրների, սերունների, ֆոկուսների, կատակների և անեկդոտների։ Բանալին առանձին է։ Իր բազմակողմանի բովանդակութեամբ կարող է այս գիրքը լաւ զբաղեցնել փոքրիկներին։

36. *Երախայրիք, պատկերազարդ հատուածներ մանուկների համար, 4 հատոր, Արշ Մեհրաբեանի (Սրինգ), 1882—67 Թֆլս. իւրաքանչիւր հատորը 41—55 եր. գինը 50-ական կոպ.* Արձակ ու չափածոյ մանր նիւթերի ժողովածուներ են, թէ լեզուի, ոճի և թէ բովանդակութեան տեսակէտներով արժէք ունեցող բաներ քիչ կան մէջերնին։

37. *Երկու տօնածառ* Ն. Գ. Վուչէտիչի, թարգմ. Պ. Նազարեանցի, Թֆլս. 1882. գինը 20 կոպ.

Նկարագրում է մի հարուստ ընտանիքի ցանկալի վերաբերմունքը աղքատ մանկան։ Տպաւորութիւն գործում է։

38 *Ընկերասէր Վահանը* տիկ. Ս. Յակոբջանեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1896. գինը 10 կոպ.

Գեղարուեստական գրուածք չէ։ Որոշ չափով տպաւորութիւն գուցէ գործէ միայն որդեկորոյս ծնողների վրայ։

39. *Թովմաս եղբոր տնակը։* Թարգմ. Ն. Տէր Մարկոսեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1880. գին 45 կոպ.

Թշուառ ստրուկների կեանքից գրուած՝ մանուկներին սիրելի յայտնի գրքի քիչ արժէք ունեցող փոխադրութիւնն է։ Տպաւորութիւնը անանուն է։

40. *Ժան Բաբտիստ Լիլլիի մանկութիւնը։* Հեղ? փոխադր. Տ. Յովհաննեսեանց, Թֆլս. 1884. փոքրդ. 32 եր.

Տաղանդաւոր երաժիշտ մանուկի կենսագրութիւնն է, որ ջութակահարութեամբ հիացնում է դուքս Գիզին։ Սա մի ոսկի է տալիս մանին, որ կարծելով թէ սխալմունքով է, ուզում է վերադարձնել, բայց չի յաջողւում։ Ապա կառք է նստում, գաղտուկ քաղաք է գնում նրան տեսնելու համար։ Այստեղ շնորհիւ իր կեանքի լաւ ընթացքին ու տաղանդին՝ կարճ ժամանակում նշանաւոր գիրք է բռնում։ Արժէ կարդալ։

41. *Ուլատ Գ. Կրաբբի.* թարգ. Տ. Կոստանեանցի, 5 եր. 1894թ. «Տիրոլցի աղջիկ» գրքոյկի հետ գինը 5. կոպ.

Մի ծերունի մարդ շատ ժլատ է երևում աղքատ-ցնցոտիներով ման գալով, չոր ու ցամաք հաց ուտելով, բայց գաղտուկ նա օգնելիս է լինում թշուառներին։ Վերջ էլ նա մի հոյակապ անկելանոց է շինում ու յանձնում ծերուներին կառավարելու։ Իմաստը լաւ, բայց ափսոս որ գրուածքը վայրի վերոյ է, տպաւորիչ ոյժ չունի։

42 *Ինչո՞վ են ապրում մարդիկ,* փոխադր. կոմս Լ. Տոլստոյից, հրատ Մ. Հ Ո. Գ. Ը. 1885, Մոսկուա. 42 միջակ եր. գին?

Սա մի ժողովրդական հէքեաթանման գրուածք է։ Հրեշտակը «մուժիկի» կերպարանքով հիւր է գալիս։ Տանտէրը նրան ցրտից պաշտպանելու համար իր հագինը հանում հիւրին է հագցնում, բայց կինը նախ չի ուզում նրան հիւրասիրել, իսկ յետոյ մեղմանում է։ Այս հրեշտակը լաւ զերծակ է դառնում, հիւրասիրող վարպետին լաւ բաղդաւորցնում է իր հրաշալի ձեռագործով։ Վերջը բանից դուրս է գալիս, որ սա հրեշտակ էր եղել Աստուածանից երկիր ուղարկուած՝ մարդկանցից երեք բան սովորելու համար։

Այս գիրքը մի ընտիր ու ազատ փոխադրութիւն է, ընագրի կոշկակարի տեղը զերծակն է բռնել։ Դարձուածները իսկ և իսկ հայկական ոգի են կրում։ Թէև Թիֆլիսի բարբառից շատ բառեր ու ոճեր կան, սակայն բացատրութիւններ տրուած են։

43. *Լուսերեսիկ* Գրիմմի հէքիաթներից, հրատ. Թ. Հ. Հ.

Ը. Գրիմմի հեքիաթներից։ 1897 թիւ։ Գունատիպ պատկերազարդ գինը 40 կոպ.։

Լաւ հեքիաթ է, բայց խորթ մօր պատմութիւն է։

44. Ինձորենիների երկրում։ Ոյդի գրուածքներից։ Թ. Հ. Հ. Ը. 1805։ Գինը 10 կոպ.։

Բաւականին լաւ գրքոյկ է, բայց թարգմանական լեզուն և անհամապատասխան հատուածները ծանրացնում են բովանդակութիւնը։

45. Խորամանկ աղուէսը Ա. Մ. Սլուչկու, փոխադ. Պոշեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1898, գին 40 կոպ.

Զուարճալի բաներ են աղուէսների կեանքից։

Փոխադրութիւնն այնքան ընտիր է, որ կարծես թէ այս գրուածքը Պոշեանի սեպհական երկը լինէր։ Միայն թէ պէտք էր գաւառական դարձուածները տեղն ու տեղը բացատրել։

46. Ծննդեան պատմութիւնը Թ. Հ. Հ. Ը. հեղ? 1882. գինը 10 կոպ. Աղքատ մանուկը նամակ է գրում ծննդեան պապին (նուիրաբաշխ ծեր պապին ըստ գերմանական աւանդութեան) ու նուէրներ խնդրում։ Այս նամակն ընկնում է մի հարուստ մարդու ձեռքը, որ միամիտ մանկան բաղձանքը կատարելու համար՝ նրան շատ նուէրներ է ուղարկում իբր ծեր պապի կողմից։ Գեղեցիկ տպաւորութիւն է գործում։

Այս գրքոյկին կցուած է մի ուրիշը թռչունների հովանաւորութեան համար Ֆինլանդիայում կազմուած մանկական ընկերութեան մասին։ Այս գրուածքը կցկտուր է, որոշ տպաւորութիւն չի գործում, թէ և մի շատ հետաքրքրական երևոյթի նկարագրութիւն է։

47. Ծիծեռնակի բունը։ Հեղ? Թարգմ. Եղիսաբ. Ալեքսանեան-Արծուրունու։ Երևան 1881. 41 միջակ եր. գինը

Ծիծեռնակի կեանքի արկածները պատմում են բաւականին գրաւիչ կերպով։

Թարգմանական լեզուն անմշակ է։

48. Կարմիր լապտեր Վուչէտիչի. Թարգմ. Օր. Ն. Տէր Մարկոսեանցի։ Թ. Հ. Հ. Ը. 1879. գին 30 կոպ.

Երկաթուղու պահապանը շանթահար է լինում, տնակն այրւում է, բայց և այնպէս նա անձնուիրութեամբ վերջին ուժերը հաւաքում է, կարմիր շապիկը պատառոտում լապտերի վրայ է դնում. գնացքը կանգնեցնելու, ճամբորդների կեանքը սպառնացող վտանգից ազատելու համար։ Բաւականին տպաւորիչ է։

49. Հարուստը և աղքատը Օստրոգորսկու ժողովածուից։

Թարգմ. Տ. Կոստանեանցի. Թֆլս. 1894. գինը այլ 2 գրքոյկների հետ 7 կոպ.

Քրիստոս հիւրասէր չքաւորին վարձատրում է, իսկ անհիւրասէրին, որ իրան չէր ընդունել, պատժում է։

Ընտիր գրուածք է։

50. Ճանապարհորդ զորտը։ Հեղ? Թ. Հ. Հ. Ը. 1895. գինը 3 կոպ։

Գորտը բադերին առաջարկում է իրան հերթով շիւղի վրայ նստեցնել ու դէպի հարաւ տանել։ Նրանք համաձայնում են։ Գորտը ճամբի կիսին սկսում է կոկռալ իր գլուխը գովելով և անվնաս վայր է ընկնում։

Իմաստը լաւ չէ հասկացւում։ Միջակ գրուածք է։

51. Ճշմարտութիւնը միշտ յաղթում է։ Գրիմի հեքիաթներից։ Թ. Հ. Հ. Ը. 1897. պատկերազարդ գունատիպ։ Գինը 40կ.

Տպաւորիչ է։

52. Մանկական զբաղարան Ա. Զիլինգարեացի։ Գիրմ. թարգմ. 8—12 տարեկանների համար։ Ալքսանդրպ. 1904. 16 եր. գինը 5 կոպ.

Փոքրիկ պատմուածքներ են դասագրքերի նիւթերի պէս։ Աւելի սիրուն են «Ինձ չըմոռանաս» և ապա «Երեք թիթեռնիկը»։ Միւս պատմուածքներն են. «Հաւատարիմ ձկնիկ», «Նոր պատկերը», «Ես չեմ կարող սուտ ասել» և «Գերին ու առիւծը»։

Առաջարկւում է նաև անգրագէտ փոքրիկներին իրրև պատմելու նիւթ։ Բայց միթէ միևնոյն նիւթերը կարող են 5—12 տարեկաններին անխտիր զբաղեցնել։

53. Մարդ առիւծ Գ. Ծերեթելլի, փոխադր. Դ. Տէր Դաւթեանցի, պատկերազարդ 61 մեծ եր. գինը 20 կոպ. Թֆլս. 1895.

Մի խեղճուկ մարդու երեք որդիները լսում են, որ իրանց շատ անբաղդութեանց պատճառը իրանց հայրն է, ուստի ցանկանում են, որ նրա կեանքի վերջը գայ։ Հայրն ասում է որ այն ժամանակ ինքը կը մեռնի, երբ որ որդիները զանազան երկրներ երթան ու գան, իրան չը չսուած հրաշալի բան պատմեն։ Երկուսը փորձում են, բան գուրս չէ գալիս։ Ապա գնում է Մարդ- Առիւծ որդին, որ վտանգաւոր գեներին սպանելով մի թագաւորութիւն ազատում է անվերջ պատուհասներից։ Վերջը ժառանգում է այս թագաւորութիւնը, իր երկու եղբայրներն էլ արժանանում են նրա թագաւորական քնքշանքի ձեռքին։

Ժողովրդական հեքիաթէ, բայց ինչպէս երևում է արուեստական տարրերով՝ հրաշալիքներով խճողուած է։

54. *Մեղի զղջումն* Դր. Տոդի. Թարգմ. Ես բահ. Խանդաղեանցի, էջմիածին, 1994. գին 5 կոպ.

Զանազան շինծու, անարուստ օրինակներ են, աւելի կրօնի դասանիւթերի պէս բաներ՝ բան թէ ազատ ընթերցանութեան նիւթեր։

55, *Մեր պապի զաւազանը* Թարգմ. Տ. Կոստանեանցի։ 90 եր. գին 5 կոպ. Թֆլս, 1894.։

Ծեր պապի, նախկին նաւապետի, գաւազանը լեզու է ելնում ու պատմում նրա թոռներին հարիւրաւոր տարիների անցքեր և այն թէ ինքն ինչպէս էր ապրում անտառում, ինչպէս յետոյ կայմ դարձաւ, վերջն էլ՝ գաւազան։

Միջակ արժէքի գրուածք է։

56. *Մուֆլու, Ուիդայի։* Թարգմ. ռուս, Յովհ. Օհանջանեանի։ Թ. Հ. Հ. Ը. 1896. ժողովրդական գրադարան. 44 միջակ եր. գինը 10 կոպ.

Մի սրտաշարժ պատմութիւն է. կաղլիկ Բոժոլոյի և նրա Մուֆլու շան հիանալի սիրոյ մասին։ Ր. մայրը միւս որդուն զինուորագրութիւնից ազատելու համար 1000 ֆր. ծախում է շնորհալի Մուֆլուին մեծատունի հիւանդ որդուն զուարճացնելու համար։ Ր. մերձ ի մահ հիւանդանում է վշտից, իսկ հաւատարիմ շունը փախչելով նոր տէրերից, կմաղը դարձած հանում փրկում է իր սիրելիին։ Մեծատունը այս տեսնելով գութը շարժու�ում է, իր հիւանդ զաւակին զրկելով զուարճալիքից՝ շունն էլ փոդն էլ թողնում է այս աղքատ ընտանիքին։ Վերջը մեծատունի հիւանդոտ որդին ու Բոժոլոն իրար խաղակից են դառնում ու երկուսն էլ զուարճանում։

Խորը տպաւորութիւն է գործում։

57. *Մրոտանը* Շմիդի. Թարգմ. Ան. Քալանթարի։ Թ. Հ. Հ։ Ը. 1892, գինը 20 կոպ.

Մինչև վերջին երեսը կատուի և աղջկայ մասին սովորական զէպքեր է պատմում, ի միջի այլոց ցոյց է տալիս թէ ինչպէս այս փոքրիկը իր սիրած կատուին զիջանում է մի հիւանդ աղջկան։

Այսպիսի փոքրիկները այդքան գթասիրտ չեն լինում իրական կեանքում։ Առանձին արժէք չունի այս գրքոյկը։

58. *Մի դէպք Բերանժէի կեանքից* Մ. Զիատեակովի։ Հրատ. «Արշալոյսի» №1. Մոսկուա. 1893.

Բերանժէն գնում է գինետուն և երբ ժողովուրդը իմանում է, որ իր սիրելին այդտեղ մօտ նստած է, զեղեցիկ ցոյց են անում նրան։ Խոր տպաւորութիւն է գործում։

Այս գրքոյկին կից է «Կեցցէ Ֆրանսիան» գրքոյկը, միասին 59 եր։ Վերջինս վրէժխնդրութեան միտում է ցոյց տալիս։

տեղը բռնում։ Թագաժառանգը, թագաւորը զզուանքով են վերաբերուում նրան, իսկ նա խարդախութեամբ եղեգնուհու բոլոր կերպարանափոխութիւններն էլ ոչնչացնել ձգտելով՝ աշխատում է նրա տեղը բռնել։ Վերջը Եղեգնուհին հրաշքով այս ամենը գաղտնիքները բաց է անում, թագաժառանգի հետ մուրազին հասնում, իսկ չար բոշան չարաչար պատժուում է։

Սիրուն հէքիաթ է։

Բ. «Ասլան Բալա»։ Թագաւորի որդին, Վուրգը, իր մուրազին հասնելու համար ցանկութիւն ունի վտանգաւոր ճանապարհը բռնելու, հայրն ու Աստղիկ քոյրն ընդդիմանում են։ Վերջինս նրա համար, որ Վուրգին պէտք է ընկերակցէր իր սիրած Արսէնը, Ասլան-բալան, էգ առիւծի ձիծ կերած քաջ երիտասարդը։ Բայց երկու քաջ ընկերները իրանց ասածն անում են, գնում 7 դևերի Անտես Անմնան քրոջ առնում՝ ահաւոր կռիւ մղելով այդ հսկաների դէմ։ Արսէնն ու Աստղիկն էլ իրար հետ են ամուսնանում ու այսպիսով երկու զոյգն էլ հասնում են իրանց մուրազին։

Այս ընտիր հէքիաթի մէջ ընկերասիրութիւնն է մասնաւորապէս շեշտուած։

Գ. «Անտառի մանուկը», որ նաև «պախրատար» է անուանում, եղջերուի ստնտուութեամբ մեծցած մանուկ է։ Անզաւակ թագաւորին վիճակուած բախտը կատարուում է սրան գտնելով։ Նա իր ճակատագրի ցուցմունքով պախրատուրի որդեգրում է և արժանաւոր ժառանգ ունենում։

Մի չքնաղ փոքրիկ հէքիաթ է, փոքրիկ մանուկների համար։

550. *Մի անմեղ մարդու սոսկալի մահը*, եղելութիւն։ Վ. Վերիսաևի։ Թարգմ. Պերճ Պռոշեանց։ Հրատ. Ստ. Լիսիցեան և ընկ. Թիֆլիս. 1905. փոքրադիր. 48 եր. գինը 6 կ.

Սոսկալի մահուան ենթարկուած մի անձնասէր բժշկի յիշատակարանն է այս գրքոյկը։ 1892 թ. Ռուսիայում պատահած խոլորայի ժամանակ բժիշկը թողնում է իր ընտանիքը և գնում տառապած ժողովրդին ծառայելու, իսկ սա նախապաշարմունքից դրդուած՝ սարսափելի կերպով գանակոծում է նրան, մինչև այն աստիճան, որ սկսում է նրա թոքերից արիւն հոսել։ Մի կողմից անսահման անձնուիրութիւն, միւս կողմից գաղանային անսահման ապերախտութիւն։ Խոր վիշտը համակում է ընթերցողի սիրտը։

Ց. Տէր-Միրաքեան

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Հայաստանի Սգգային գրադարան
NL0439127